





ՀԱՅ ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ

ՏԱՐԵՑՈՅՑԸ

1927

Բ. ՏԱՐԻ

516

ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ,  
ՄԱՐԶԱԿԱՆ, ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԵՒ ԵՐԳԻԾԱԿԱՆ  
ԲԱԺԻՆՆԵՐՈՎ

Հասոյքը յաշկացուած է անկար եւ հիւանդ  
ուսուցիչներու



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. Մ. ՍԷԹԵԱՆ



Յ. Մ. ՍԷՔԵԱՆ  
ՏՊԱՐԱՆ, ԿԱԶՄԱՏՈՒՆ,  
ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ  
N° 97

Printed in Turkey

«Հայ Պատանիներու Տարեցոյց»ի Բ. սարին անս հրատարակեալ էր :

Նախորդը իբր իր գրական կոչումին արդիւնք՝ երբ ոչ կասարեալ յառաջդիմութիւն, բայց զոնե անոր ոգին ու փափաքը արբնցուց պատանի գրիչներու շարժումն մեջ, պարագայ մը գորայս սարուան տարեցոյցի յօդուածներու շար շնորութիւնն ու ստուարութիւնը կ'ապացուցանեն :

Իսկ, թէ ինչպէ՞ս գնահատուցաւ այս գրական ձեռնարկը, պատասխանը խորհել կ'ւնիպէ: Ան նիւթապէս գնահատուցաւ միշտ պնդեալ, ինչպէս կը գնահատուին, մեր մեջ առհասարակ բոլոր գիրքերն ու գրիչները :

Նախորդին նիւթապէս յիշեալ կերպով գնահատուելէն վերջ, այս տարուանին հրատարակ եղլէր ստեղծուած զոհողութեանց արդիւնք է անոր խնդրութեան եւ հրատարակչին կողմէ :

Բայց քանի որ միևնչե իսկ անկարելին ընելու չափ եղանք, այլեւս մեզի համար պարտականութիւն մը դասած սեպեցիմք այս տարուան տարեցոյցը հրատարակ հանելը՝ խորհելով որ միակ մեծ դժուարութիւնը անեմ գործի առաջին քայլերուն մեջ է միշտ. եւ գործ մը, մանաւանդ նմանօրինակ ձեռնարկ մը՝ չեմք ուզեր որ մեռնէր իր ստղծեցիլն վիճակին մեջ :

Գործին նպատակը անհրաժեշտ եւ բարի շրջանու համար, կը յուսանք, որ այս տարի մեր դիմումները չեն մերժուիր Ազգային վարժարաններու ճօրհաններու եւ ծանօթ ազգայիններու մօտ :

Ուստի յաջողելու յոյսով, խնդրութիւնս նոր տարուայ առթիւ իր ջերմագին շնորհաւորութիւններուն հետ, շնորհակալութիւնները կը յայտնէ իր բոլոր ընթերցողներուն եւ անեմ անոնց, որոնք աստեղցիլն այս տարի գործին առաջին քայլերուն :



ԹՈՒՐԲՈՅ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ  
ԿԱԶԻ ՄՈՒՍԹԱՅԱ ԲԷՄԱԼ ՓԱՇԱ

ՅՈՒՆԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԸՍՏ ՆՈՐ ՏՈՄԱՐԻ

ՅՈՒՆՈՒՍԻ

- 1 Շր. Գ. օր պահոց, Ծննդ. եւ  
**Կաղանկ**
- 5 Դշ. ձրագարոյց Ծննդ. Քրիստոսի
- 6\* Տօն Ծննդեան
- 7\* Ուր. Բ. օր Ծննդեան [Յիշ. մեռ.]
- 8 Շր. Գ. » »
- 9\* Կիր. Գ. » »
- 13\* Եշ. Տօն Անուանակոչութեան  
Քրիստոսի
- 15 Շր. Տօն Ծննդեան Սրբոյն Յով-  
հաննու Կարապետին
- 16\* Կիր. Ա. զկնի ծննդեան
- 23\* Բ. զկնի ծննդեան
- 30\* Գ. զկնի »

ՓԵՏՐՈՒՍԻ

- 1 Դշ. Սրբոց Երկոտասան Մարգ.ից
- 5 Սրբոց որդւոց Գրիգոր Լուսաւոր-  
չին Արիսակեսի եւ Վրդանէսի
- 6\* Գ. Ձկնի ծննդեան [բարեկեն-  
դան առաջաւորաց]
- 11\* Ուր. Յիշատակ Յովնանու մար-  
գարէին
- 13\* Կիր. Ե. զկնի Ծննդեան
- 14\* Բշ. Տաւրաւառայ
- 17 Եշ. Սրբոցն Ոսնկիանաց քահն.ից
- 19 Շշ. Սրբոյն Իսահակայ պարթեւի
- 20\* Կիր. Զ. զկնի ծննդեան
- 22 Գշ. Սրբոյն Ղեւոնդ. քահն.ից
- 24 Եշ. Սրբոցն Վարդանաց եւ  
1036 վրայից

ԲՈՒՆ ԲԱՐԿԵՆՈՒՄԻ

ՄՍԷՏ

- 6\* Կիր. Բ. քառասնորդաց
- 13\* Կիր. Գ. » [Անառակին]
- 20\* » Գ. » [Տնտեսին]
- 27\* » Ե. »

ԱՊՐԻԼ

- 2\* Շր. Տօն Սրբոյն Գրիգորի Լու-  
սաւորչին մերոյ, ստիւնլի  
չարչարանաց եւ մաինի  
վիրապին
- 3\* Կիր. Զ. քառասնորդաց
- 7\* Եշ. Աւետու մն Ս. Աստուածածնի
- 9 Շր. Յիշատակ Յարութեան Ղազր.
- 10\* Կիր. Ծաղկագար
- 11 Բշ. Աւագ Երկուշարթի
- 12 Դշ. » Երեքշարթի
- 13 Դշ. » Չորեքշարթի
- 14\* Եշ. » Հինգշարթի Յիշատակ  
ընթրեաց
- 15\* Ուր. » Ուրբաթ Յիշ. թագման
- 16 Շր. » Շաբաթ ձրագարոյց Ս.  
Զատիկ

17\* Կիր. **Զատիկ Գարուբին  
Տնտես մերոյ Յիսուսի  
Քրիստոսի**

- 18\* Բշ. Բ. օր Զատիկ
- 19\* Գշ. Գ. » »
- 21\* Կիր. Ը. օր Զատիկ նոր Կիւրակէ

ՄՍՏԻՍ

- 1\* Կիր. Աշխարհամտորան կամ  
Կանանչ Կիրակի
- 8\* Կիր. Կարմիր Կիւրակէ
- 15\* Կիր. Ծննդ. Երեւման Սրբ. Խաչին
- 22\* Կիր. Զ. Կիւրակի
- 26\* Եշ. Համբարձու մն Քրիստոսի
- 29\* Կիր. Է. Կիւրակի. Երկր. Ծաղկ.

ՅՈՒՆԻՍ

- 5\* Կիր. Հոգեգալուստ
- 12\* » Յիշատակ Եղիա մարգարէին
- 13\* Բշ. Սրբոց Գուսանացն Հաիիս.
- 14 Գշ. » » Գայիանեանց
- 16 Եշ. Սրբոյն Յովնանու Կարա-  
պետին եւ Աթանագ. եայ Եպսկ.

18 ✠ Շք. Սրբոյն Գրիգորի Լուսաորջ մերոյ երանելոյն ի վերապէն  
 19 ✠ Կիր. Բ. զկնի հոգեգալստեան տօն Կաթող. Եկեղց. Ս. Էջմծ.  
 20 Բշ. Սրբոյն մանկանցն Բեթղհհեմի  
 21 Գշ. Սրբոց կուսանանց Նունեայ եւ Մանեայ  
 25 Շք. Սրբոյն մեծին Ներսէսի եւ Խաղայ

26 ✠ Կիր. Գ զկնի Հոգեգալսեան

**ՅՈՒՂԻՍ**

2 † Շք. Գիւտ Նշխարաց Սրբոյն Գրիգորի Լուսաւորջին մերոյ  
 3 † Կիր. Գ. զկնի Հոգեգալստեան  
 7 † Եշ. Սրբոցն Քարգմանչացն մերոց Սատակոյ եւ Մեսրոպայ  
 9 Շք. Սրբոցն Տրդատայ Աշխէնի եւ Խոսրովիղխատյն  
 10 † Կիր. Ե. զկնի Հոգեգալստեան. Գիւտ Տփոյ Ս. Աստուած. նի  
 16 † Շք. Սրբոց երկուսու. Առաք. Գրիւ.  
 17 † Կիր. Զ. Հոգեգալստան, րբ րիկենդան վարդավառի  
 24 † Կիր. Վարդավառ  
 25 † Բշ. Բ. օր Վարդավառի [մեռելոց]  
 30 † Շք. Սրբոցն Թաղէսի եւ Սանդրիտայ կուսին

**ՕԳՈՍՏՈՍ**

6 Շք. եփեսոսի Ս. Ժողովոյն 200 հայրապետայ  
 7 † Կիր. Բարեկենդան Ս. Աստուած.  
 13 Շք. Տօն Շողակաթի Ս. Էջմիածնի  
 14 † Կիր. Վերափոխումն Ս. Աստուածածնի  
 15 † Բշ. Մեռելոց  
 21 † Կիր. Ը. օր վերափոխման  
 28 † Կիր. Գիւտ Գօտեոյ Ս. Աստուածածնի

**ՍԵՊՏԵՄԲԵՐ**

3 Շք. Նիկիոյ Ս. Ժողովոյն 318 Հայրապետաց  
 4 † Կիր. Բարեկենդան Ս. Խաչի

8 † Եշ. Ծնունդ Ս. Աստուածածնի ի Յաննայէ  
 11 † Կիր. Խաչվերաց  
 12 † Բշ. Մեռելոց  
 18 † Կիր. Բարկենդ. Վարագայ Խաչի.  
 24 Շք. Ս. Գէորգ  
 25 † Կիր. Վարագայ Ս. Խաչ

**ՀՈԿՏԵՄԲԵՐ**

1 Շք. Սրբոց Երկուտասան Առաքլց  
 2 † Կիր. Գ. Զկնի խաչի  
 9 † Կիր. Ե. " "  
 15 Շք. Սրբոց աւետարանչացն Մատթէոսի, Մարկոսի, Դուկասի եւ Յովնաննու  
 16 † Կիր. Գ. Զկնի խաչի  
 20 Եշ. Սրբոց Խարիթեանց  
 23 † Կիր. Գիւտ Խաչ  
 29 † Շք. Ս. Յովնաննու Ոսկերերանին  
 30 † Կիր. Ը. Զկնի խաչի

**ՆՈՅԵՄԲԵՐ**

5 Շք. Սրբոց Հրեշտակապետացն Գաբրիէլի եւ Միքայէլի  
 6 † Կիր. Թ. Զկնի խաչի  
 19 Շք. Ամեն. Սրբոց հնոց եւ նորոց  
 20 † Բարեկենդան Յիսնակաց  
 21 † Բշ. Ընծ. Ս. Աստծ. նի ի տաճարն  
 27 † Կիր Ա. Յիսնակաց

**ԴԵԿՏԵՄԲԵՐ**

3 † Շք. Սրբոց առաք. եւ առաջին Լուս. Թաղէսի եւ Բարթղոսի  
 4 † Կիր. Բ. Յիսնակաց  
 9 † Ուր. Յղութ Ս. Աստուածածնի  
 11 † Կիր. Գ. Յիսնակաց  
 17 Շք. Ս. Յակոբայ Մծք. Հայր. տին  
 18 † Կիր. Գ. Յիսնակաց  
 24 Շք. Սրբոյն Դաւթի մարգարէին  
 25 † Կիր. Ե. Յիսնակաց  
 26 Բշ. Սրն. Ստեփան. Նախասր. զին  
 27 Գշ. Սրբ. առաք. Պետ. եւ Պողոսի  
 29 Եշ. Սրբոց Որդեաց Որոտման  
 30 Ուր. Ա. Օր. Պահոց ծննդեան







ԱՄԵՆԱՊԱՏԻՒՆ Տ. ՏԷՐ ԳԷՈՐԳ  
ԱՐԻՇԳԻՍԿՈՊՈՍ ԱՐՄԼԱՆԵԱՆ  
ՊԱՏՐԻԱՐԺԱԿԱՆ ՏԵՂԱՊՈՋ Կ. ՊՈԼՍՈՑ

ԳՐԱԿԱՆ

ԲԱԺԻՆ

# ՊԶՄԻԿԱ ՈՒ ՄԵԾԸ

«Հայ պատմիկներու Տարեցոյցը» պատրաստողներուն

Մտածեր ու որոշեր էք, կ'երեւի ո՛չ առանց արտադրող վարանումի, որ մեծերն ալ այս տարի բերեն իրենց մասնակցութիւնը պատիկներու կողմէ պատրաստուելիք Տարեցոյցի գրական աշխատանքին: Այսպիսի գործակցութիւն մը գոնէ քաղցր է, ունենալով իր բարերար դերը՝ ձեռնարկին տալու քիչ մ'աւելի լրջութիւն եւ նպատակայարմար ուղղութիւն: Չեր այս մտածումը, որ ապագոյցն է ջափի նաւաշարեան, արժանի է նոյն ատեն գնահատութեան եւ քաջայիրութեան: Ակնարկուած վարանումն ալ մասամբ կարելի է գտնել բնական. վասնզի իսկապէս տարիները, որոնք կեանքը նորանոր ձանթով թիւններով կ'իմաստնացնեն, իրենց հետ կը բերեն նաեւ հասակներու աստիճանաւորումներ: Ահա՛ ասոր համար մեծերուն մօտ մենք կը տեսնենք պատիկները: Բայց ո՞րքան սիրելի են պատիկները եւ բաղձալի է անոնց ծաղիկ հասակը: Պատիկներն իրենք չեն գիտեր ասոր պատճառը: Վարդագեղ արշալոյս մը, որ մեր սրտերը կը զեղու անոյշ ներշնչումներով, ինք չունի գիտակցութիւնը իրմէ ծորած այդ հոգեպարար քաղցրութեան:

Պատիկներն ալ ունին իրենց կանաչարեւ կեանքի զուարթ արշալոյսը՝ որով զեղեցկօրէն քօղարկուած է մեծ խորհուրդ մը: Չեր մանկունի — վասնզի պատանիին մէջ ալ դեռ մանուկ մը կը ժպտի — աչքերը թերեւս անկարող են տակաւին թափանցելու քօղէն ներս: Այս համեստ գրիչը կ'ուզէ մատնացոյց ընել այդ խորհուրդը եւ քացատրել զայն ձեզ

չափով մը : Ունիք դուք զայն ձեր մէջ : Բոլորս ալ ենք ունեցեր այդ անգին գանձը մեր մէջ : Բայց ինչպէս անգոր ենք եղեր յաճախ մենք՝ հիմակ մեծ ցածներս՝ արժանապէս գնահատելու զայն այն ատեն : Անոր հետ խաղացեր ու զբօսներ ենք՝ որպէս թէ սովորական գեղօրի մը, կամ պուպրիկի մը եւ կամ ծաղկէ ծաղիկ խօջորէն թռչող թռիւեալ թռի-թռնիկի մը հետ : Եւ քիչ չէ թիւը, ...ւա՛ղ, այն պզտիկներուն՝ որոնց թեւափետուն ու խորտակու մը տեսեր են մեծերը՝ հատկակի՞ծ սիրտով : Չենք ակնարկեր միայն հողեղէն գերեզմանները, ալ նաեւ ու մանաւանդ բարոյական այն ահա որ անդունդները՝ ուր պզտիկները կ'իյնան, կը մնան, կ'աճին ու կը մեծնան իրրեւ «բոյն մոյորանքի» : Երէկ արշալոյս՝ այսօր կ'ըլլան գիշեր անյոյս :

Բայց ես ձեզի ցոյց պիտի տայի «պզտիկ»ին խորհուրդը :

\*

Երկրի սովորական թագաւորութիւններէն դուրս ու վեր՝ մեծ թագաւորութիւն մը կայ : Ան նոր է հիմնարկուած, շուրջ քսան դարեր առաջ : Մի՛ զարմանաք երբ կ'ըսեմ քսան դարեր առաջ եւ նոր, վասնզի այս թագաւորութիւնը անսահման է եւ յաւիտենական : Չայն կազմողը այս կամ այն ազգը չէ, այլ ամբողջ մարդկութիւնն է . ո՛չ թէ միայն այսօրուն մարդկութիւնը՝ այլ երէկուանն, ու վաղուանը միանգամայն : Ան կը կոչուի «Երկնի քաղաւորութիւն» . վասնզի երկինքի պէս բարձրութիւնը անչափելի է եւ իր նկարագիրը՝ անոր կապոյտին պէս ջինջ : Կ'ըսուի նաեւ «Աստուծոյ քաղաւորութիւն» . զայն կառավարող միակ մեծ ու անպարտելի ոյժը տիեզերական Ալրն է :

Այս սէրը օր մը, քսան դարեր առաջ, երկրի վրայ երեւցաւ մարդու մը կերպարանքով : Փայլուն «աստղ»ի մը տակ մանուկ ժպտուն՝ հետզհետէ ան եղաւ պատանի իմաստուն, երիտառարդ բարեգործ եւ խաչապսակ ազատարար : Ան իր գիրկին մէջ խանդակաթ գգուանքով մը փայ-փայեց փոքրիկները, «Այդպիսիներո՛ւն է երկնքի թագաւորութիւնը», խօսեցաւ անոնց՝ որոնք, թէեւ մեծ, բայց թե-

Թեւամիտ արհամարհանքով մը կը փորձէին հեռացնել պրզ-տիկները իր մօտէն: Ան որոշեր էր պզտիկներուն սիրտերով հիմերը դնել իր՝ այսինքն Սիրոյ մեծ թագաւորութեան:

Իր գիրկընդխառնումը փորքիկներուն հետ՝ սրտայոյզ հիւնարկէքը չէ՞ր այդ թագաւորութեան: Չէ՞ որ սիրոյ մէջ չեն մտներ նենգ, ստեյուծիւն, քէն, ոխ, վրէժ, խարդախութիւն, ամբարտաւանութիւն, անառակութիւն եւ բարոյական այն բոլոր թերութիւնները՝ որոնք ընկերային կեանքի ներդաշնակութիւնը կը խանգարեն եւ զայն իր դարձնեն ճշմարիտ Բաբելոն մը:

Կարծեմ թէ կրցար կռահել պզտիկի մը մէջ ծածկուած խորհուրդը: Տիեզերական համամարդկային Սէրն է այն, խտացած ու ամփոփուած անոր ափ մը սիրտին մէջ, ինչպէս հսկայ կաղնին իր փոքրիկ սերմին մէջ: Տիեզերական ըսինք. վասնզի ան երկինքի աստղերէն իր պսակը կը շինէ եւ ծովի մարգարիտներէն իր մանեակը, օդապար թռչնիկներուն հաց կը բերէ եւ ժիր մըջիւններուն շտեմարանները կը լեցնէ, ծառերն ու ծաղիկները կը մշակէ եւ կենդանիները կը խնամէ: Իր գութէն շող ու ցօղ կը կաթին, ինքն ալ ունենալով իր արեւն ու երկինքը: Հաւանադրային ալ աւելցուցինք. վասնզի այդ Սիրոյ օծութեամբ կը շնջուի ամէն խաիր լեզուի, գոյնի, ձեւի, աստիճանի, զբաղումի եւայլն:

Աշխարհի մը մէջ, սակայն, ուր որոմները ա՛յնքան շատ են, յաճախ այդ սէրը պզտիկ հոգիի մը մէջ դեռ չբացուած կը խամրի: Պատճառն այն է որ առաջին անգամ եւանդաբան ուսիճը կը մտնէ հոն ու հետզհետէ կը կրճէ անոր կենսունակ ծիլերն ու ծաղիկները, թոյլ չտալով որ կեանքի ծառը իր բնականոն աճումն ունենայ: Անոր կը յաջորդեն անխուսափելիօրէն նոր ու նոր մոլութիւններու ցանցեր՝ որոնք տակաւ առ տակաւ կը սեղմեն սիրտը, արիւնաքամ կ'ընեն, կը ծիւրեն, կ'ապականեն եւ ի վերջոյ կը ցամբեցնեն զայն:

Դժուար չէ ըմբռնել թէ պզտիկը յորչափ զգուշաւոր

պիտի ըլլայ իր մէջ պահելու, մշակելու, անեցնելու առաքինական այն բոլոր սերմերը՝ որոնք Մէրէ'ն կը ծխարծակուին, անո՛վ կ'արմատանան, կը ծաղկին ու կը պտղաբերուին: Այսօր պզտիկ՝ վաղը պիտի ըլլան մեծ, անեղծ պահելով կնիքն ու դրոշմը՝ իրենց հոգիները օծող ու թեւաորոզ մեծ Սիրոյն: Մարմինը որ գանձարանն է այդ Սիրոյն, պիտի դառնայ առարկայ նշմարիտ գուրգուրանքի: Առողջ, տկուն, զուսպ ու զգաս՝ եւ աննաղորդ ամեն փտարեան. — ա՛յս պիտի ըլլայ ֆիզիքական իմաստութեան նշանաբանը պրզտիկին, ապահովելու համար նոյն ատեն առողջ միտք, պայծառ ու զուարթ հոգի, անբիծ սիրտ, խաղաղ խիղճ, մէկ խօսքով՝ ըլլալու ՄԱՐԳ եւ վայելելու երանաւէտ կեանքի մը բոլոր իրական բարութիւնները:

Երանի՛ այն մեծերուն՝ որոնց մէջ այսպիսի պզտիկ մը կ'ապրի միշտ:

**ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԲԱՊԵՋՈՆԻ**

8 Սեպտեմբեր 1926  
Գատրգիւղ



## ՀԱՅ ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒՆ

Պատանեկութիւնը ծաղիկ հասակն է կեանքին, որուն վրայ կը շողան թարմութիւնը և գեղեցկութիւնը: Սակայն այդ արտաքին փայլը յաւերժական չէ, ժամանակը կը փոխէ ձեր դիմագիծը, և ո՛րքան շփուէք իրականութեան հետ, այնքան սուր փուշեր պիտի արիւնեն ձեր մորթը, և տխուր խոհեր պիտի գալկացնեն ձեր մոյնքը:

Կայտառ ու կենսալից ֆիզիքականին հետ առաւելապէս մտաւորական և հոգեկան ձիրքերն են որ յաւելա կ'ողեւորեն և կ'արժեցնեն կեանքը: Որչափ խորամխուէք կեանքի ճամբուն մէջ՝ այնչափ պէտք է որ աճին ու ճոխանան ձեր մըտքի ոյժերն ու բարոյական ու հոգեկան շնորհները:

Կեանքի ամենատուրը խորանը սիրտն է, միակ վճիռաղբերակը զօրութեան: Դո՛ւք, պատանինե՛րդ, մեծագոյն զգուշութիւն պիտի բնէք որ մոլի ունակութիւններ իժեք և մոլորեցուցիչ և վատախտարակ գաղափարներ չթունաւորեն ու պղծեն ձեր սիրտը:

Նայեցէ՛ք որ միշտ բարձր խեղայներ խանդավառեն զձեզ. կեղծիքներու և սին հաճոյքներու գլաններ չճմլեն ձեր հոգիին թոխընէրը: Միշտ բարին սիրեցէք, փոքրոգութիւններէ և ամարգութիւններէ վեր կ'անդնելու նկարագրի ոյժ ունեցէք: Մարդը կը ծերանայ և կ'անպիտաննայ այն ատեն միայն երբ տղականած է իր սիրտը:

Սիրելի պարոններ՝ դուք բնկերութեան յոյսն էք, վաղուան մարդիկ, որ պիտի յաջնորդէք մեզի, մղելու համար կեանքի պայքարը, ջանացէք մտքով ու հոգիով միշտ ազնուանայ ու բարձրանայ: Մարմիննիդ մտրգեցէք որպէսզի պնդակազմ ու կենսայից բլաք, լեցուցէք ձեր միտքը դիտութեամբ և վեհ գաղափարներով. ողևորեցէք ձեր սիրտը սուրբ ու ազնիւ զգացումներով: Այն ատեն տիպար հայ պատանիներ պիտի ըլլաք և պիտի ըսէք Ս. Գրոց իմաստունին հետ «մանուկ էի մտավարժ և ոգւոյ բարույ դիպեցայ»:

**ՄԵՍՐՈՊ ԵՊՍԿ. ՆԱՐՈՅԵԱՆ**



# ԻՐԱԿԱՆ ՅԱՌԱՋԴԻՄՈՒԹԻՒՆ

## Ի՞Ն ԶՈՒ ԶԿԱՅ

«Պատմիկներու Տարեցոյց»իև

Յառաջդիմութիւնը բառ մը կը դառնայ տակաւ պատ-  
րանքի շքեղ վերարկուն հագած: Երեւոյթներ և իրականու-  
թիւններ որոնք արգիւ աշխատեցակերպին ոգին կը ցոյցը-  
նեն, ցոյց կուտան որ նախորդ սերունդներու երկար տըք-  
նումները և լուրջ ջանքերը հետզհետէ անհրապոյր կը դառ-  
նան մեզ համար և թէ՛ յառաջդիմական իտէալին թաւալ  
տուող ոսկի անիւները փայտի փոխակերպուած՝ ոլոր  
մուր կ'ընթանայ ժողովուրդներու մտքին և ստեղծագործ-  
մեծութեանց արծուաթև խորհրդանիշը ու ջահը կրող գեղե-  
ցիկ քառանիւր: Ոսկի անիւները շքեղ էին անտարակո՛յս և  
իրենց թաւալումին շիման մէջ ոսկի փոշի մը կը ցանէին  
ճամբու երկայնքին, մանաւա՛նդ վերելքներու դժուարին  
մագլումներու միջոցին, և թափած անխարդոց այդ ոսկեփո-  
շին ձեռք անցնել բողբոջորուածներ իրենց փայլին ու շը-  
քումին պսակը կը չողացնէին անով խիտ արժանավայե-  
լօրէն:

Ներկայիս՝ մարդիկ որ նախանձախնդրութիւնը չ'ունին  
մաշած ոսկի անիւներուն տեղը նո՛րը դնելու և փայտէ կ'ու-  
զեն պսակներ ոսկեգօծել և խափուսիկ փայլ մը տալ ճա-  
կատնուն, կը հարցնեմ Տարեցոյցի պատանի բնթերցողնե-  
րուս թէ այդ իտէալի քառանիւրն ուղիղ և խորխտ թա-  
ւալումը որը ոսկեցան անուահետք մը կը թողուր իր ետև,  
կը տեսնե՞ն ասոր մէջ ա՛լ, և թէ ձեռք բերուած աղօտա-  
փայլ պսակը չի՞ նմանիր կայծոռիկի մը բացխփիկ լոյսին որ  
տղաք բռնելով ճակատնուն կը փակցնեն յաճախ անով լու-  
սաւորուած ըլլալու պատրանքը տալով ինքզինքնուն: Ա-

նաշխատ փառքը որուն շատեր կը ցանկան աւելի քան անհամ և ողբալի յետադիմութիւնը կը մատնանշէ. մեծին ու վեհին շքեղանքին զազափարը չունեցողը՝ աննշան, փոքր բաներով կը շլանայ. երկու ծափ, բեմի արուեստագէտին համար, պատճառ կ'ըլլայ որ ե'տ դառնայ ան իր վերելքին մէջ. արշալոյսէն, վարդէն և առուակին խոխոջէն խաղեր ու երանգներ առնուած դրուած գառեակի տողերուն մէջ՝ քաւական կ'ըլլան որ սկսնակ գրիչ մը բանաստեղծ մը դաւանի ինքզինքը. դպրոցաւարտ պատանի մը իր մէկ երկու յաջող շարագրութիւններուն կամ շրջանաւարտ մը ուսուցչին ակնարկէն անցած աւարտական մը գրի առած ըլլալուն համար, գրագէտի հովեր կ'առնեն. «Ալ եղա՛նք—ա՛լ գլտե՛նք» բոթարեր բառերը կը հնչին յաճախ մեր ականջին և աչքերնուս դիմաց կը դնեն, կարծէք, սանդուխ մը որուն առաջին մէկ երկու աստիճանները մնացեր են անվթար, իսկ աւելի վերինները կոտրած թափած՝ անհնար կ'ընեն ամէն վերելք. կը հարցնեմ, ուրեմն, կրկի՛ն իմ պատանի ընթերցողներուս թէ ի՛նչ կը մտածեն իրենք այս երեւոյթներուն և իրողութեանց հանդէպ. կը մտածե՞ն արդեօք թէ քառանիւին փայտէ անիւները քաշել հանել ու անոնց տեղ ոսկին հարկ է դնել դարձեալ հոգ չէ ի՛նչ ի՛նչ զոհողութիւններով և վատտակով որպէսզի գեղեցկօրէն ուղիղ ընթանայ յառաջգիմութեան կառքը և մաղէ անցած ճամբուն վրայ ոսկեփոշին՝ անյագ ժողովողներ դարձնելով իր հաւեէն վազողները. և արդէն չէ՞ որ ոսկին միայն կը շլացնէ մարդկութիւնը որ ազահօրէն անդուլ ու անդադար կը վազէ անոր հաւեէն՝ ճամբուն վրայ կոխկոտելով անխնայ խեղալին բոլո՛ր ծաղիկները, հող ու խիճով խցելով զգացումին ցայտող ակերը ու տապալելով արգար բաշխումներուն նժարը կրող խեղալին անդրին: Դո՛ւք ուրեմն, սիրելի՛ պատանիներ, ասպետօրէն պահապանները եղէ՛ք այդ ճամբուն, յարգարեցէ՛ք մինչև ծայրագոյն վերելքը տանող աղւոր ուղին ուրկէ՛ անցք պիտի տաք միա՛յն յառաջդիմութեան ոսկեզանակ քա-

ուանիւին և ահա՛ ոսկի փոշիով պիտի շողայ այդ ճամբան  
 Կրկի՛ն մտքի հսկաներու՝ գիտութեանց պսակաւորներու,  
 արուեստներու դափնին և դպրութեանց ազամանդեայ գրիչը  
 խլող մրցանակաւորներու՝ ոտից տակ. իսկ մենք՝ մայ-  
 րերը այդ զաւակներուն՝ ներելի հպարտութեամբ մը վար-  
 դեր պիտի սփռենք պատույ այդ անցքին պահուն որ ան-  
 կասկած, կը բերէ այս անգամ ո՛չ խափուտիկ, այլ ոսկեցան  
 թաւալներով հասած շքեղ Յառաջդիմութիւնը:

ՆԵՎՐԻԿ Մ. ՍԵՊՈՒՀԵԱՆ

8 Յունիս 1926

Դատը-գիւղ



# ԱՆՄՈՒԱՆԱԼԻ ԳԻՇԵՐ ՄԸ

(ՕՐԱԳԻՐԷՍ)

1917ի Ծնունդի գիշերն է, ցուրտ ու մթին: Շողեկառքը տենդագին ճեղքելով անապատներու ամայութիւնը, կը սուրայ գէպի Բէսիւլայն: Միսմինակ ընկողմանած եմ բեռան վակօնի մը մէջ, ուր folisխֆրօնի պարտականութիւնը կը կատարեմ ինծի յանձնուած բազմաթիւ հակերուն, ծրարներուն և պարկերով լեցուն հարիւրաւոր հացերուն վրայ: Հակառակ կրկրնակի դիմումներուս այսօր չեմ կրցած ազատ ըլլալ և խթում գիշերով կը ստիպուիմ հեռանալ պարագաներէս, Հայէպէն մինչև Բէսուլայն 12 ժամուան անախորժ ճամբորդութիւն մը կատարելու համար:

Խթում, ի՛նչ հողեկան բառ գաւառացի պզտիկ դպրոցականի օրերուս մէջ, երբ անիկա դպրոցէն ազատ ըլլալու հրճուանքին հետ մէկտեղ կը բերէր նոր զգեստը և այն բոլոր քաղցր ու երանելի բաները, որոնք գաւառացի մանուկին սրտին միայն կը խօսին: Անիւններուն համաչափ ժխորին մէջ խորասուզուած կը խորհիմ թէ որքա՛ն մեծ է ինքնաթիւյրութեան գերը մեր հողիին վրայ: Այն մտածումը թէ այսօր խթում է և ես հեռի ընտանեկան ընդէս՝ չեմ կրնար վայելիլ անոր պարգևած թացտիկ երանութիւնը, սիրտս գառնութեամբ կը լեցնէ: Եթէ չի գիտնայի թէ այսօր ի՛նչ օր է, եթէ սիրալի յիշատակներով նուիրականացած օրուան մը թեւագրութիւնը չի խռովէր հողիս, անկասկած բան մը փոխուած չի պիտի ըլլար սովորական անտարբերութենէս և աւելի սիրով ու կորովով պիտի նուիրէի գործիս: Կը ջանամ սակայն վանել անօգուտ մտածումներս և զինուել իրականութեան ու պարտականութեան գիտակցութեամբ:

Այս դժին վրայ կայարանները ընդհանրապէս չառ հե-  
ռու են իրարմէ : Գնացքը կ'երկարածուի տաղտկալի միօ-  
րինակութեամբ, այնպէս որ դժուարաւ կը գիմադրեմ քնա-  
նալու փորձութեան : Մըտիել կարելի է, բայց պէտք չէ  
ընաւ քնանալ, որովհետեւ ստիպուած ես պաշտօնից վերա-  
բերեալ յանձնումի և ստացումի գործողութիւնները կատա-  
րել, ուշադիր ըլլալով որ առած կամ տուած իրերուդ մէջ  
չփոթութիւն չի պատահի կամ փոխանակած սուշերուդ ստո-  
րագրութիւնները կեղծ չըլլան կամ վերջապէս հակողութեանդ  
յանձնուած առարկաները չի համբառնան... Կորուստի պա-  
րագային բանտ է կամ հատուցում : Եւ ասիկա այնպիսի շըր-  
ջանի մը մէջ, ուր գողութիւնն ու զեղծումը տեսակ մը  
ընական օրէնք դարձեր են մարդոց, ապրելու անհրաժեշտ  
միջոց, զոր պատերազմը բերեր հաստատեր է անոնց բար-  
քերուն մէջ : Գողութիւնը ճարպիկութեան հումանիչ դարձեր  
է ալ. իսկ պարկիշտութիւնը՝ ապիկարութեան :

Վախօնիս առջեւն է ֆռշիօնը, ուր հրեայ շեֆրոնկը և  
քանի մը արար կարս փրկներ կը խմեն ու կ'երգեն, օգտուե-  
լով հարուստ վաճառականի մը ախորժելի ներկայութենէն,  
որ գործով կը ճամբորդէ այս կողմերը և որ առատ օղի և  
աղանդեր ունի իր հետ : Անհո'ց մարդիկ, որ շատերուն նա-  
խանձը պիտի չարժէին՝ իսկ շատերուն աչքին արգահատելի  
պիտի թուէին : Զիս ալ կը կանչեն իրենց մօտ, մասնակից  
ընելու համար իրենց ուրախութեան, բայց խոհեմութիւն կը  
համարեմ վայրկեան մը իսկ չի հեռանալ վախօնէս, խորհե-  
լով որ անդին մշտարթուն ու թեթևոտն կարս փրկներ ի-  
րենց խցիկներուն բարձունքէն իջնալով կրնան իրենց հա-  
ճելի թուած առարկաները փոխադրել այլուր : Թող որ՝  
եթէ այդ մտահոգութիւնն իսկ ունեցած չըլլամ, դարձեալ  
այս գիշեր բնաւ տրամադրութիւն չունիմ այդ խոպոչներուն  
պոռչուածքները լսելու : Հանդարտ չէ սիրտս : Խռովք մը կայ  
ներսիցիս : Հին օրերու գուարթ ու միամիտ խթումները,  
կաղանդները, ծաղկազարդները, Զատիկները ու բոլոր սօ-

ները իրենց անուշ դէմքերով թափօր կազմած առջեւէս կ'անցնին ու կը ժպտին ինձի, հոգեկան անսահման զրկանքի մը արտամութիւնը բերելով վրաս: Չեմ կրնար մխիթարուիլ: Որքա՛ն ամուր հաստատուած են մեր մէջ մանկութեան շրջանի պատկերներն ու աւանդութիւնները: Անոնցմէ դատուիլը մահուան մը արտամութիւնը կը լեցնէ սիրտերնիս: Ոչինչ կրնայ փոխարինել զանոնք. ո՛չ հարստութիւնը, ո՛չ փառքը: Աչքերս կը յոգնին խեղճուկ լապտերիս զողզոջուն լոյսին յառած: Կ'երեւակայեմ սիրելիներս որոնք այս գիշեր չի պիտի կրնան ուրախ ըլլալ իրենց անշուք և օտարօտի սենեակին մէջ: Սիրտս կը լեցուի երբ կը խորհիմ պզտիկ քրոջս ու եղբօրս վրայ, որոնք այսօր կտարած սիրտով ճամբու գրին զիս կայարարանը և հիմա անկասկած զիս կը յիշեն ու կը մեղքնան վրաս, անքուն ու տաժան գիշեր մը անցնելու համար: Ի՛նչ օգուտ ինձի այս մեծարմէք ծրարները, որոնցմէ չըջապատուեր եմ ահա, և որոնց պահպանութիւնը կ'ընեմ անքուն հսկելով: Ըսել է մարդիկ կան, որ հանգիստ կը քնանան ուրիշներու անքնութեան գնով: Մարդիկ կան որ տծնական գիշերուան մը վայելքը կ'ապրին անխուով, ուրիշներու զրկանքին գնով: Կը բաւէ սակայն: Այս մտածումները զիս շատ հեռուն կը տանին: Կը վախնամ ողջմտութիւնս կորսնցնելէ և անիրաւ պահանջումներ ընելէ կեանքէն: Չըլլայ որ խաղալիք դառնամ ցնորական ինքնաթիւղազրութիւններու: Ասիկա կեանքէն դառնացած ապիկարներու գործն է: Այսպէս կը խորհին բոլոր անոնք որ կը մոռնան կեանքի անխախտ օրէնքները և կ'երազին բաղձալի բայց անբնական կարելիութեանց մասին: Քաջութիւն ուրիմն, պէտք որ ինքզինքս ազատեմ մոլար խորհուրդներէ, պէտք է որ կամքն ու կորովը իշխեն մտածումիս մէջ:

Յանկարծ վակօնիս դուռը կը բաղխեն խուլ թփթփոցով մը: Ո՞վ է և ի՞նչ կ'ուզէ:

—Ա՛չ ետպօ՛, ա՛չ, կը մրմնայ դուրսէն խոպոտ ձայն մը: Քիչ մը վրդուլուած կը բանամ լայն ու տափակ դուռը,

ուրիշ ներս կը սողոսկի վահօնիս արար կարս ֆրէնը, որ  
ցուրտէն մսած ձևքերը իրարու շփելով խուզարկու նայ-  
ուածք մը կը պտըտցնէ չորս գին, և կատուի մը պէս, որ  
միսին հոսը կ'առնէ, մտերիմ շէշտով մը կ'առաջարկէ՝ մին-  
չև առատապէս իրարու վրայ. դիզուած կերպասի հակերէն  
մէկը բանալ, խոստանալով գողօնը մօտակայ կայարան մը  
ծախել և գրամբ, բաժնել մէջերնիս: Համակերպիլ կը ձե-  
ւացնեմ կատակի համար: Մարգուն դէմքը կը ճառագայթէ:  
Անմիջապէս գրպանէն կը հանէ գմելի մը, խոշոր ասեղ մը  
և գերձան և կը պատրաստուի իրեն համար սովորական  
դարձած վիրարութական գործողութիւնը կատարել: Բայց  
գեռ գմելիին շեղքը գործի չի սկսած, ուժգին հարուած մը  
կուզայ թնթացնել վահօնին գուռը: Կարս ֆրէնը ածապա-  
րանքով կը գրպանէ ասեղն ու դմելին: Իսկ ես կեղծ իրա-  
բանցումով մը գուռը կը վազեմ ու գլուխս գուրս հանելով  
իբր թէ կը նշմարեմ մարդկային անձանօթ կերպարանք մը  
որ շուրջուելով վահօնին ֆրէնը կը բարձրանայ: Բախտախըն-  
դիրը որ չի դիտեր թէ գուռը հաքուածողը ես եմ և թէ ոչ  
ոք կայ գուրսը, կամացուկ մը կը բնայ հակառակ կողմի  
գուռը և կ'անհետանայ ոտնակներուն վրայէն:

Յուրտ ու ձանձրալի ժամերը կը սահին և կայարանները  
իրարու կը յաջորդեն: Կը սկսիմ քիչ մը մրափել, որովհետև  
յաջորդ կայարանը Բէսիւլայնն է և բաւական հեռու: Օ՛,  
չէնք շնորհք քունս ստրեք է: Վտանգաւոր բան: Երբ աչ-  
քերս կը բանամ, արդէն դնացքը կանգ առած է: Զարմա-  
նալի բան, երբ անիւներուն միօրինակ ազմուկը կը դողրի,  
խսկոյն կ'արթննաս: Այդ պահուն ազմուկն է որ բնական  
կուզայ ուղեղիդ, իսկ լուսթիւնը անբնական: Ինչի՛ր կ'ընէ  
չարունակական վարժութիւնը:

Ահա Բէսուլայնը: Ծամբան աւարտած է: Մօտիկ է լու-  
սաբացը: Կայարանին ու յարակից շէնքերուն տխուր ուր-  
ւազիծը կը ցցուի մութին մէջ: Լուռ ու ամայի է ամէն  
դի: Հազիւ վայրկեան սը անցած, վայնասուն մը կը վրթի

ևտելի վակօններուն քովէն : Մարդ մը կը պրօռայ բարկա-  
 ճայթ և կը հայհոյէ : Թուրք զինուորական մըն է որ կը հան-  
 դիմանէ իր նէֆէրները : Կը հետաքրքրուիմ ու կ'իմանամ թէ  
 զինուորական պէտքերու յատկացուած ցերեկով լեցուն ամ-  
 բողջ վակօն մը դատարկուած է յատակէն բացուած ծակի  
 մը միջոցաւ : Գողք գողցեր է ուզածին չափ , իսկ մնացածը  
 ճամբու ընթացքին հոսեր է այդ ծակէն՝ ինչպէս ջուրը ծո-  
 բակէն , ցանքի անձայրածիր երիզ մը ձգելով իի ետին , գի-  
 ծերուն միջև : Կը զարմանամ ու կը ցաւիմ երբ կը ստուգեմ  
 թէ վակօնիս հակերէն մէկը՝ 50 կարմիր սակի արժէքով՝  
 գողցուցեր եմ... Անմիջապէս մնացած գոյքերը յանձնելէն  
 ետք , կը վազեմ անզույն զինուորական պետին բնակարանը :  
 Տակաւին կը քնանայ : Սրտատրոփ ու յոգնարեկ կ'երթամ  
 հանդէլի լքուած վակօնի մը մէջ պատրաստուած մահճակա-  
 լին վրայ , տենդագին սպասելով անտուան , ճնշիչ խորհրդ-  
 դածութիւններու տաժանքէն յազթահարուած միտքս կը  
 յոգնի ու կը թմբի տակաւ : Կը քնանամ : Հազիւ քուն մտած ,  
 տեղույն հայ կաշարանապետին ծանօթ ձայնը կուգայ բրտօ-  
 րէն արթնցնելի զիս .

— Բարի լո՛յս , շնորհաւոր ծնունդ , գիտե՞ս թէ ծնունդ  
 է այսօր...

— Այո՛ , Ծնունդ , բայց որպիսի՛ ծնունդ , շնորհա՞ւոր թէ  
 անշնորհ... :

ՎԱՀՐԱՄ ՊՈՒՐԱՆԱՆ



# ԱՆԿԵՂԾ ՈՒ ԲԱՐԻ ԽՐԱՏՆԵՐ ՄԵՐ ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒՆ

Հայ պատանիներու խմբակցութիւնը գովելի ու գնահատելի գաղափարը ունեցած է իր տարեցոյցին երկրորդ տարին ևս ի լոյս ընծայելու և այդ առթիւ զիս ալ պատուած է փափաքելով իմ մէկ գրութիւնս ունենալ անոր մէջ :

Արդարև մեծ հաճոյք մըն է ինձ համար երեւալ պատանի և պատանուհիներու սիրուն հոյլի մը շարքին մէջ, բայց չեմ գիտեր թէ պիտի կարենամ գոհացնել իմ պզտիկ բարեկամներս, երբ անոնք այնքան վառ երեւակայութեամբ ազդորուած, կը սիրեն կարգալ այնպիսի գրութիւններ որոնք բնութեան վրայ կը խօսին, որոնք թռչունի մը երգին մէջ կը գնեն հոգիի վերացումներ, որոնք զեփիւռին ազգած հաճելի գովութենէն անմեղ սիրոյ վէպեր կը հլուեն. մէկ խօսքով աւելի կը շահագրգռուին բանաստեղծութեամբ և կամ վերացականութեամբ քան թէ պարզ ու անսթեւեթ գրութիւններով :

Եւ սակայն հակառակ այս բոլոր թուած առաւելութիւններուս ես զարձեալ իմ շատ պարզ գրութեամբս է որ պիտի ջանամ պզտիկ տեղ մը գրաւել այս շատ գրաւիչ «Պատանիներու Տարեցոյց»ին մէջ. և որովհետև վստահ եմ թէ պատանիներու այդ համակրելի խումբը պիտի ուզէ իր տարեցոյցը շատ մը պատանիներու պատրադրել ունենալ, և նոյնպէս վստահ ըլլալով որ ամէնէն աւելի երկուսն պատանեկութիւնը պիտի ըլլայ զայն փնտռողն ու կարգացողը. հետեւաբար ես իմ շատ պարզ ոճովս անոնց հետ պիտի խօսիմ իբր մայրիկ ըր :

Պատանի ըրչալ, ի՞նչ մեծ հաճոյք է, ի՞նչ անհուն ուրախութիւն է ամէն անոնց համար որոնք անցած են այդ կայտառ ու եռանդուն շրջանէն և իրենց թողած շատ բաղձալի

բայց յաւէտ կորսուած տարիները և կ'երթան դէպի վայրէջ-  
քը կեանքի: Պատանին իր մէջ կը պարունակէ ամբողջ աշ-  
խարհ մը. տղայութենէ անցած է պատանեկութեան ուր կը  
փթթին կեանքի առաջին նշանները: Պատանիէն է որ կ'սկսի  
երիտասարդը. և երբ պատանին կազմուած է լաւ խմորէ մը  
այլեւս վախ չկայ թէ հետզհետէ առաջացող կեանքին մէջ  
կրնայ սայթաքիլ. հետեւաբար որքան լաւ հսկեն պատա-  
նիները իրենք իրենց վրայ, որքան բարձր մնան տղեղ ու-  
նակութիւններէ, որքան բարեկիրթ, հաճոյակատար ու ձկու-  
րլլան այնքան լաւ կերպով զետեղած կ'ըլլան իրենց կեանքի  
հիմնաքարը:

Դժբախտաբար անցած են այն տարիները ուր պատանին  
բնաւ չէր խորհեր թէ ի՞նչ պիտի ըլլայ իր ապագան, այն  
ատենները ծնողքները շատ կանուխէն ամէն բան խորհած  
կ'ըլլային ու պատանի տարիքէն սկսեալ զանոնք ամուսնա-  
ցընելու վրայ միտք կը յոգնեցնէին միայն. մինչդեռ այսօր  
ընտանեկան հոգերը այնքան ծանրաբեռնած են ընտանի-  
քին պետերը որ խեղճ պատանին դպրոցի չոր դրասեղան-  
ներու վրայէն խոկ վաղուան հոգը ունի և անստոյգ է ա-  
պագան:

Ուրեմն ո՛ր աստիճան պէտք է լարուած մեքենայի մը  
պէս աշխատի ու ինքզինքը բարձր բռնէ ամէն ստորնացու-  
ցիչ վարմունքներէ որպէսզի հասնի կեանքի նպատակին ուր  
կը ձգտին պատուաւոր անհատներ:

Հայ պատանին ժիր է, աշխատասէր է. ձեռներէց է և  
զեռ շատ մը առաւելութիւններ ունի որոնցմէ զուրկ է. կը  
կարծեմ, Նւրոպպայի պատանին, բայց դժբախտաբար իր ու-  
նեցած առաւելութիւններուն քովիկը հայ պատանին ունի  
մեծ պակաս մը ձկուն չէ: միշտ գլուխը վեր է, դէպի ըմ-  
բոստութեան:

Անշուշտ իմ պզտիկ բարեկամներս պիտի ներեն ինձ ի-  
րենց այս պակասը անկեղծօրէն մատնանշելուս համար մա-  
նաւանդ որ բացառութիւններ չառ կան:

Կեանքի մէջ յաջողելու համար ըստ իս. մեծագոյն առաւելութիւնը ձկունութիւնն է, այսինքն ամէն միջավայրի պայմաններուն յարմարիլ, ամէնուն հետ վարուիլ գիտնալ, օրուան տիրող օրէնքներուն հարատակիլ. միշտ զլիու ցնցումով մը ինչո՞ւ չըսել, որովհետեւ այդ «ինչո»ներն էին որ կործանեցին, և մեզի թափառական ցեղի մը վերածեցին:

Մենք պէտք է որ այսուհետեւ մեր ականջները խցենք ամէն հրապուրիչ առաջարկներու և հպատակինք ուր որ գտնուինք. աշխարհիս որ մասին մէջ ալ պատասիկ մը հողի իրաւունք ունենանք, քալենք այն տեղի օրէնքներով:

Վարուիլ զիսնա՞լ, օ՛հ, սիրելի պատանեակներ, եթէ գիտնաք թէ ս՛րքան մեծ բան է վարուիլ ու գրաւելը:

Գրաւեցէք ձեր շուրջիները, մի թողուք որ ձեզի ծուռ նային. կանխեցէք ամէն թիւր մտածում ձեր խկ համետ վարմունքով. և այս պէտք է սկսիք ձեր ծնողքներէն ու պաշտպաններէն խկ:

Պատանին է որ պիտի կազմէ վաղուան ընտանիքը և ընտանիքն ալ ազգը. երբ ազգի մը պատանին ուշիմ, բարեկիրթ, աշխատասէր, ձկուն ու առողջ է այն ազգը վախճունի թէ օր մը կրնայ աշխարհէս վերնալ, և մենք պէտք ունինք ազգովին այնպիսի պատանիներու որոնցմով պիտի վերածնինք, բայց ինչպէս ըսի ապրելու է ազգը ապրեցնելու համար և ոչ թէ ազգը տուժէ անոնց ապրելակերպին և անխորհուրդ և անմիաբան վարմունքէն:

Մեծ հաճոյքով է որ կը հետեւիմ միշտ, թէ հոս և թէ արտասահմանի պատանեկութեան և երիտասարդութեան կազմած մարզական ու երաժշտական խմբակցութիւններու յաջողութեանց:

Արդարեւ ուր որ գացած է հայ պատանին ու երիտասարդը պարապ չէ կեցած, անապատն իսկ ծաղկեցուցած են հայերը բայց դժբախտաբար ուր սր ալ գացած են գիրար չի քաշելո պէս տգեղ սովորութիւններ ունեցած են և այսպէս սով վարկաբեկած են մեզ ազգովին և մեր ունեցած թան-

կազին առաւելութիւնները վրայ տուած են, և ինչո՞ւ. որովհետեւ մենք միշտ զմեզ մեր տանը մէջ կը կարծենք և փոյթ չենք ըներ թէ ուրիշներ, օտար հիւրընկալ երկիրներ ինչե՞ր կընան խորհիլ սեր վրայ:

Հետեւաբար ինչպէս որ գրութեանս սկիզբը ըսի, եթէ պատանին, մաքուր շաղախով կազմուի ճակատաբաց կրնանք աշխարհիս չորս կողմը հայ անունը պանծացնել ու հանգիստ ապրիլ. իբր կրթուած ու փնտռուած ազգ և ոչ թէ անբաղձաղիներ:

Անշուշտ իմ պզտիկ բարեկամներս այս մի քանի թերագրիչ կամ խրատական տողերուս համար չեն նեղանար ինծի դէմ և կը ջանան հետեւիլ անոնց աշխարհիս որ մասին մէջ ալ գտնուին:

ԳՈՂՍՐ Ս. ՄՍՋԼԸՄԵՍՆ



ՊԵՐԵՆԻՆԵՐՈՒ

ԳՐԱԿԱՆ

ԲԱԺԻՆ

THE UNIVERSITY OF CHICAGO

LIBRARY

1911

# ԱՆԴՐԱՆԻԿ ՏԵՍԻԼՆԵՐ

---

Իրիկուն է, վերջապա մը Կորևքեան  
 Կը Սաւառնի վեր, հեռուն,  
 Ուր հեղ մըն աչ կարծես շեղարձ կ'անպսնան  
 Վերջին ցոյքերն արեւուն.  
 Եւ երեկոն կը հաշի՝  
 Եղարչեղով ծովն անհուն:

Եւ կապուսակ բրաշարքեր կ'անհետին ;  
 Տակաւ հեռուն կը ցուին.  
 Կը մահանան ղոզակները զակզակին  
 Ու ձուկներ սայլերուն.  
 Միևն մարգերուն սիւզանած՝  
 Բոյրերն անոյշ կ'արծարծին անսառներ:

Կը ջփանակ անծայրածիր անսառներ.  
 Մրուքեան մեջ կը սուզուին.  
 Ու կը հաշի ուղեկերոյս երեկոն՝  
 Հըպոււնովը խաւարին.  
 Միևն փաշփշուն, խօշ ղոյսերով  
 Երփնեն գիշերն Կորևքեան:

**Ժ Ի Ր Ա Յ Ր Զ Է Պ Է Լ Ե Ա Ն**

**Գ Ե Ղ Ե Ց Ի Կ Խ Օ Ս Ք Ե Ր**

Ամենուն հետ խաղաղութեամբ ապրէ որպէսզի երջանիկ կեանք

ունենաս

ԿԵՕԹԷ

## Ծ Ն Ո Ւ Ն Դ

---

Յուրս գիշեր մը կը սուրածուի հոն հեռուն  
 Բեղէնեակի դաշտին վրայ սրտնագին .  
 Ուր կ'արծարծին անուշ բոյրերն մարգերուն ,  
 Յորձակեփն մեջ բուրումնաւե զեփխոյին :

Ծաղիկներու հոյզին մեջէն սասափե  
 Կը նշնարուի ուրուագիծը մըւուրին ,  
 Ուր երջանիկ մանկիկն Յիսուս կ'երուգե  
 Անուրջներու գիշերին մեջ հեշագին :

Ու կը շուին հին մեծուցներն աղօթքի  
 Յափշտակուած , հօսաղներուն երգեցիկ .  
 Միջոցին մեջ կ'արձագանգե կ'երկարի  
 Երկրպագու մոգերու ձայնը վեր երկինք :

«Փանֆ քեզ Աստուած , սիւզերփի Արարիչ  
 «Որ յրկեցիր Միածինըդ երկնային» .  
 Ու ծնկաչոք ձայնով մ'անուշ զգոյսիչ՝  
 «Բրիստոս ծնաւ , եւ յայտնեցաւ» կը գոչեն :

ԺԻՐԱՅՐ ԶԷՊԷԼԵԱՆ

## Գ Ե Ղ Ե Յ Ի Կ Խ Օ Ս Ք Ե Ր

Մարդ ամենալաւ դասերը ձախորդութեան մէջ կը սորվի եւ ո՞ր  
 թէ յաջողութեան մէջ:

ԱԼԳՕԹ

Անբիծ սէրը դիւրաւ չ'ահաբեկիր:

ՇԷՅՅՍԲԻՐ



## ԴՈ՞ՒՆ ԱԼ ՀԱՅՐԻԿ...

Ի՞նչ գեղեցիկ էր կեանքը երբեքն .

Երբ քու ծունկերուդ վրայ նստած կը խնդրէի, կը պահանջէի այն բոլոր բաները, որ միայն իմ մանկական երեւակայութեանս մէջ կ'ապրէին եւ դուն քու բարի ժպիտովդ միշտ կը խոստանայիր տալ:

Տարիներ զիս աղջնակ մը դարձուցած էին:

Դարձեալ դուն հոն էիր երիտասարդ, հսկայ ինչպէս կաղնի մը, որուն կենսունակ շուքին տակ կը մեծնայի անվախ ու վստահ ու երբ թեթեւ հով մը գար շարժել ճիւղերդ, կ'ապոյտ ու պայծառ երկինք մը միայն կը յուսայի տեսնել անոնց մէջէն:

Տարիները դարձեալ կը սահէին, եւ օր մը ինքզինքս կը 'գտնէի երկրորդական վարժարանէ շրջանաւարտ: Բոլորը մեզ շրջապատած՝ մաղթանքեր, յուսոյ խօսքեր կը տեղացրնէին ապագային համար:

Բայց իմ ապագաս, հայրիկ, այդ օր սեւցած էր. հովը աւելի կատաղի շարժած էր ճիւղերդ եւ այս անգամ անոնց մէջէն մռայլ երկինք մը տեսած էի...:

Հիւանդ էիր դուն եւ բացակայ. իրիկունը՝ երբ տուն կը վերադառնայի վշտաբեկ սրտով, տաքուկ համբոյրով մը նոր յոյսեր, նոր երջանկութիւններ մաղթեցիր:

Բայց հայրիկ արդեօք կա՞ր երջանկութիւն մը, կա՞ր յոյս մը առանց քեզի. երբ յուսոյ արեւը շիջէր, ես ինչպէ՞ս պիտի լուսաւորէի իմ ճամբաս, ո՞ւրկէ պիտի գտնէի ճառագայթ մը կենսունակ:

Այսպէս խորհելով կը դիտէի քեզ:

Ալեւոր մազերդ լուսապսակ մը կազմած էին ճակտիդ շուրջ այն վեհ ճակտիդ՝ որ հիմա միայն կ'նճիռներով էր պատած. ու երեւակայութիւնս կ'երթար ետ, ետ դէպի այն

օրերը, այն երջանիկ օրերը. երբ այնքան սեւ էին մագերդ-  
ու այնքան անկճիռ էր ճակատդ եւ կը յիշէի սա խօսքերը՝  
որոնք թեթեւ ամպով մը յանկարծ կը ծածկէին աչքերդ  
«դուն ալ պիտի ծերանամ հայրիկ»:

Հիմա, այո՛, դուն ալ ծերացար աներեւակայելի երազ  
ինձ համար որ իրականացաւ...:

Եւ ես հիմա արցունքոտ աչքով քեզ կը խնամեմ, միշտ  
կրկնելով մոռովին՝ «դո՛ւն ալ պիտի ծերանայիր հայրիկ»:

ՍԻՐԱՆ ՆՇԱՆՆԱՆ

Ս Ի Ր Ե Լ Ի Բ Ա Ր Ե Կ Պ Մ Ս

Տ Ի Ա Ր Պ Ե Տ Ր Ո Ս Ֆ Ր Է Ն Կ Ե Ա Ն

Հայերէն լեզուն սորվիլ սկսայ. բաւական  
դժուար կ'երեւի անոր տիրացումը: Հա-  
յերէն լեզուն խիստ հարուս է. հետեւա-  
բար պիտի ջանամ տիրանալ անոր:

ԼՈՐՏ ՊԱՅՐԸՆ

1918ին էր: Պէզաղեան վարժարանի Դ. դասարանի ու-  
սանող՝ զեռ նոր կ'աշակերտէի մեծանուն հայագէտ Գերմա-  
նացի Հիւպլմանի ուսանող՝ Բրօֆ. Աստուածատուր Խաչա-  
տուրեանի, որ այժմ Երեւանեան համալսարանի աւագ ու-  
սուցիչներէն է:

Հայերէն բառերու ստուգաբանութեան շուրջ առաջին  
գասն էր որ տեղի կ'ունենար այդ օրը: Դժուար թէ կարելի  
ըլլայ արձանագրել հոս՝ այն անպատում հրճուանքն ու հիա-  
ցումը, զորս զգացինք այն պահուն երբ ծերունագարդ ու-  
սուցիչը թանկագին վերլուծումներով ու խիստ տրամաբա-  
նական եզրակացութիւններով ի վեր կը հանէր, այս լեզուին

գերազանցօրէն չքնաղ և քաղցրահունչ կազմաւորութիւնը : Միայն սա՛ պարագան կ'ուզեմ պարծանքով գրչածայրին յանձնել . թէ՛ այն օրուընէ՛ որրագոյն ուխտի մը նման ուռչեցի կաթնային սիրելիւ և յաժառօրէն առոյլիչ հայկազնեան հալածական՝ բայց յաւէտ կենդանի բարբառը :

Եւ սառ գապէս , հակառակ կեանքի զոնազան դիմայեղութեանց , գոնէ պահ մը չթեթեցայ այս անմեղ նախասիրութեանս մէջ ուայտուհետե ալ չեմ ընկրկիր երբեք , միմիայն այն հուատքով որ պիտի կարենամ պաշտելի նախահայրերուս բարբառը այդ ուղղութեամբ վառ տեսնել :

Հեռու բար սրտակից եղբայր , Չհրմադին պիտի խընդրեմ որ՝ ընկերային ու քաղաքական որպիսի հարկագրանքներու ներքեւ ալ գտնուելու ըլլաս , ի սէր այս ժողովրդեան փոքրաթիւ գաւակներու գոյութեան սիրե՛ , պահպանե՛ ու տարածե՛ այս փարեյի լեզուն ու գրականութիւնը . երբ՝ օտար բայց աշխարհառչակ գիտուններն իսկ անկեղծօրէն կը խոստովանին թէ՛ , ան՝ (հայ լեզուն) «խիստ հարուստ է» և «զրժւար՝ անոր տիրացումը» :

Այս սովիւ , մասնաւորապէս մայրենի բարբառին հարստութիւնն ու ամբողջականութիւնը չարաչար անխոնջ՝ մեր ազգի երկսես ընկերակիցներուն և ինծի բացարձակապէս անձանօթներու , որոնք գողտրիկ յուշատետրդ կը թերթատեն , դազափար մը տալու համար թէ՛ այս լեզուն լիովին կը գոծացնէ մեզ՝ այլ միայն իրենք են որ ամիջապէս խցած ականջնին , դէպի օտարամուլութիւն ու այրասերում կը դիմեն , կը փափաքիմ՝ որքան որ հնար է ներկայացնել հոս՝ միրգերու և պտուղներու հայրենի ու հարազատ ցուցակ մը , թէ՛ հայ շինականը ինչպէ՞ս կը խօսէր...

Նունա , մանտարինա :

Հաղարջ

Ֆրէնկ իւզիւմի

Կիսրու

Թուռունջ

Հաւկեռաս

Խորիս , վայրի հաւ

Ծիւաղ

Փոքր սև կեռաս

Հայիք  
 Բայ  
 Մամխի կամ կոկան  
 Հագոր  
 Խոզսաննն կամ դարձիկ  
 Արոց  
 Ծիրան  
 Դեղն  
 Պարկուկ  
 Նիսոն  
 Ջերկար  
 Պաղասիս  
 Սին  
 Ջղղեր  
 Մարուզ  
 Փշս  
 Ծարոց

Պասենդ

Տարիներու հոլովման հետ մասամբ մոռցուած և ոմանց  
 համար ծիծաղելի նկատուած այս բառերը արդեօք հայրենի  
 չե՞ն. մեր պապերը չե՞ն արտասանած զանոնք : Ապա ուրեմն  
 ի՞նչ պատճառաւ չ'ողեկոչենք չլերակենդանացնենք քաղցր  
 յիշատակներով մեզ ներկայացնող այս համբուրելի ասու-  
 թիւնները : Ոչ մի արդելք.— սոսկ վատասերուն է որ՝ նո-  
 րահաս սերունդին ու ուսանողութեան մէջ տակաւ հող շա-  
 հերով կ'արգիլէ ատիկա : Պարզ ինքնագիտակցութիւն մը  
 դ ահա վտանգը հեռացած է իսպառ :

կարծր սև կեռաս  
 վիշնէ  
 չաքալ էրիյի  
 հալըք (վայրի խնձոր)  
 ախլաթ արմուտը  
 էթլի շէֆթալի  
 խայխի  
 շէֆթալի  
 զերտալի  
 Սուլթան Սէլիմ ինճիրի  
 վայրի զավագ ինճիրի  
 տապան ինճիրի  
 եիւվէզ  
 մուշմուլա  
 հօճա եէմիշի  
 իյտէ

դաւառական քաղցրաւենի որ  
 ընկոյզէ կը պատրաստուի (ճէ-  
 վիղլի սուճուզ)  
 փեսալի

Քոյրդ անկեղծօրէն՝

Յ. Մ. ՄԻՆԹԱՆՃԵԱՆ

Գում-Դարու

Ա Ռ Ո Ւ Ա Կ Ը

---

Աշխան զբխուր առաս մը հոն հեռո՞ւն,  
 Անէն ինչ լուռ, խոր թախծութիւն մ'անստփոր՝  
 Պատած չորսդիւն . . եւ անկերը ահաւոր  
 Կը մօտենան դէմքին՝ դեղնած արեւուն:

Մերկ ծառերը սարսափահար, սենդագիւն  
 Կը դողդողան ցուրտ քամիին հպումէն .  
 Ու թըռչուններ որոնք խուսեցով կ'անհետին  
 Խառնիխառն, սուր հրածեղս մը կոտորէին:

Դաշտերն անբողջ անայացած են արդէն  
 Եւ կանանչին, ա՛յն կանանչին փոխարէն  
 Հիւսակ աշխան սերեւները զբխորոհն  
 Կը թափաբրփիեն դեղին շարուն մը անկերց:

Ինչո՞ւ արդեօք երբ թըռչունները այլևս  
 Իրենց անոյշ մեղեդիները չունին,  
 Ու հոսադիւն մեղսանաճոտ արիւնքին  
 Այ չի չիտուիր թոթոռուը անաղկոտ:

Ինչո՞ւ արդեօք հոն ստուակը դողոցուն  
 Կը զրոգոյ շտապեցով օր ի բո՛ւն,  
 Երբ բնութիւնն հաւնակ լըռած է իր շուրջ,  
 Ինչո՞ւ արդեօք ան կը խայցայ բարբախտն:

Ս Ս Է Ս Կ Է Մ Ս Ե Ո Ւ Է Լ Ե Ս Ե

---

# Ի ՆՊԱՍՏ ... ԱՆԿԻԻՆԻ ՄՈՒՐԱՅԻԿ ԿՆՈՋ ԵՒ ԻՐ ՈՐՐՈՒԿՆԵՐՈՒՆ



Այն իրիկունն որքան մեծ երանութիւնով մը բողբուած էին սեղանին շուրջ: Մայր մը հիւժած փոսը ինկած աչքերով, որոնց շուրջի կապոյտը աւելի եւս կը խորացնէ մարելու մօտ բիրերը որոնք կարծես այս իրիկունն նոր ուժով մը, զոր սգիով մը ուռճացած կը պճլտան և կը սքօղուն ի տես երկու փոքրիկներու որոնք երկար ժամանակէ ի վեր առաջին անգամ ըլլալով տաք կերակուր մը և նոր հագուստ մը կը գտնեն:

Անոր իր ակնարկը լի երախտիքով կը յածի իր մօտիկը կեցող երիտասարդի մը վրայ, երկար մազերով, զեղնած դէմքով՝ որ հոյիի մեծ հրճուանքով կը գիտէ այս երբօրդութիւնը: Փոքրիկ ընտանիքը նոր կեանք առած՝ չի վախնար այլեւս բնութենէն, և կ'ուզէ մաքաօրիլ անոր բնութիւններուն գէժ:



Ձիւնը չորս կողմ պատած է: Ճերմակ աստղեր թեթե հովէ մը տարուբեր, մերթ իջնալով սև ջուրի մը մէջ և մերթ լուսազարդ ցուցափեղկերու փակչելով կը տեղան անընդհատ շատ անգամ նստելով անցորդներու դէմքին վրայ: Մեծ պողոտային այն անկիւնը կարծես մենաշնորհը եղած էր այդ մութացիկ կնոջ՝ որուն երեսը նայողը արդէն անոր աչքերուն մէջ պիտի կարգար, մանաւանդ տառապանքը՝ որ ան կրած էր իր ամուսնոյն մահուանէն վերջ, իր հետ քաշքշելով իր երկու փոքրիկները՝ որոնք կը մտնեն հիմա մօրերուն թեւին տակ, ամչնալով կարծես իրենց կիսամերկ վիճակէն:

Խեղճ մայր, ծուէն ծուէն եղած հին շալի մը կտորը՝

որ հազիւ իր ուսերը կը ծածկէր, կը բաժնէ հիմա իր երկու  
որբու կներուն միջև :

Անցորդներ՝ անձանօթ այս թշուառ կեանքին, կ'անցնին  
առանց նկատի առնելու այս խուճրը, քիչ մը կարեկիցներ  
պզտիկ լուծայ մը կը ձգեն կնով ափին մէջ մինչ այն դող-  
դով ձեռքերով հազիւ կը համարձակի սահեցնել զայն իր  
գրպանին մէջ :

Կ'անցնին երկու ընկերներ: իրենք ալ իրենց շատ մը  
արուեստակիցներուն նման բաղգաւոր չէին եղած իրենց աս-  
պարէզին մէջ. տաղանդաւոր՝ սակայն զրկուած ան միջոց-  
ներէն որ կարելի կ'ընէ այն շոնդալից ղեզաւը որ արժանիք  
մը եւս կ'աւելցնէ կարծես մէկու մը տաղանդին, որ իր կար-  
գին չէ ճանչցուած հասարակութեան կողմէ :

Փոքրիկ աղմուկ մը, իրենցմէ մէկուն ձեռքի գաւազանն  
է որ վար կ'իջնայ, կը ծռի վերցնելու երբ կը հանդիպի երեք  
գլուխներու որոնք բոլորն ալ բան մը կ'ուզեն ըսել կար-  
ծես. գլխասիրտ հոգի, — ձեռքը գրպանը կը տանի գոնէ  
պզտիկ, շատ պզտիկ օդնութիւն մը ընելու համար. սակայն,  
սը մօտնայ թէ իր ճաշը ընկերովը հաշուոյն բրած է. և կ'ուզէ  
մեկնիլ. մեկնի՛լ, բայց ի՞նչպէս. վեց հաս աչքեր զինքը կը  
մագնիսացնեն, բան մը կ'ուզեն իրմէ... որ կը հասկնայ  
անոնց վիճակը, վիճակ մը՝ որ արուեստագէտներէ շա-  
տերուն ծանօթ է :

Յանկարծ արագ քայլերով կը հեռանայ այն տեղէն իր  
հետ քաշելով ընկերը՝ որ ապշած այս յանկարծական փութ-  
կոտութենէն կը հեռուի իրեն, երեսը կը նայի, աչքերը լեց-  
ուած, կը մտածէ : Կը հասնին հան ուրկէ պիտի բաժնուին  
այլեւս, ընկերով ձեռքը բռնած, շեշտակի յառած ակնարկը  
անոր աչքերուն մէջ : Կ'որոշեն վերջապէս իրենց կարողու-  
թեան չափով օգնել անոնց :

Շաբաթ մը ետք երբ քաղաքին ամենամեծ թատրոնէն ժողովուրդը դուրս կ'ելլէր, դէմքերը ակամայ կը դառնային ազդատախտակին՝ ուր գամուած կը մնար այն օրուան նուագահանդէսին ազգը :

«Ի նպատտ անկիւնի... մութացիկ կնոջ և իր երկու որ-  
բուկներուն» :

ԱՐՇԱԽԻՐ Յ. ԱԼԵԱՆԱՔ

4. Նոյեմբեր 1926



## ԻՐԻԿՆԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Իրիկուն մը բարի, բարի անհունօրէն, որ սեւցած կապոյտէն կը մաղուի ու գետ մը կըլլայ, մեծ բայց հանդարտ, եւ որ խաղաղութեամբ կը հոսի եւ որ խաղաղութիւն մը բերէ : Ու ես, շփացած սիրահարը բնութեան, այդ գիշերին մէջ հովով օծուն եւ բաքախուն, կը քալէի լեռն ի վար, երգի խաղ մը շրթներուս :

Եւ համբան անոր հանդիպեցայ :

— Բարե՛ւ :

Ձեռքը կը դողդղար. մազերն ու փողկապը կը թուչկոտէին, ո՛չ բանկոն եւ ո՛չ գլխարկ ունէր, կապոյտ գիրք մը կը սեղմէր անութիւն տակ : Այնպիսի խենդուկ վիճակի մը մէջ էր որ, հա՛, հիմա պիտի թուի կ'ըսես, եթէ հովը քիչ մը ուժգին փչէ :

— Մութ է, ո՛ւր այսպէս. ի՞նչ կայ... :

— Մութ է՛ : Ինչ փոյթ, Ձգէ որ արդէն հասուն լուսին մըն ալ ունինք որ քառասուննոցի մը նման կը փայլի : Բա՛լէ, բա՛լէ գիշերով քեզի հետ խօսիլ կ'ուզեմ : Տե՛ս, ծառերն ալ կը խօսին : Բա՛լէ քալէ, որ թեթեւամ... :



Անուշ բան մը ունէր իր շեշտը, ու իր սիրտը կ'ապրէր հին: Չի կրցայ մերժել: Ան պինդ մը կուշտիս սեղմուեցաւ եւ զգացի որ իր դնդերները կը կծկուէին:

—Շնորհակալ եմ, ի՛նչ բարի ես: Թեւդ ինձի տուր, այսպէս լաւ է. քալե՛նք...:

Թէեւ շատ նոր բան մըն է պատմելիքս, բայց կարծես հին աշխարհի մը կը մօտենամ երբ կը դպչիմ անոր, այնպէս որ կը դողդղամ ես ... բայց դարձեալ կը մօտենամ, անուշ բան մը ունի ան, մտիկ ըրէ՛:

\* \* \*

...Այս երեկոյ ամէ՛ն ինչ զարմանալի էր: Մայրամուտը, ա՛յն մայրամուտը զոր հազար տեղէ դիտած եմ, ինձ զարմանալի թուեցաւ: Կարծես արեւը չէր ուզեր բաժնուիլ մեր գիւղէն, ինձմէ, եւ երկար կռիւ մը մղեր էր քնութեան դէմ, առա՛տ արիւն էր թափեր, ու հորիզոնը կարմիր էր, ու ամպերը վերջալուսային արիւնոտ էին կակաչի պէս:

Ես՝ մեր մօտիկ դաշտը ելայ սա՛ գիրքը առած, եւ խոտերուն վրայ, մարգարտածաղիկներուն մէջ, ուր թիթեռնիկները խենդ խենդ կը պարեն, երկնցայ եւ սկսայ կարդալ: Մօտակայ տունէ մը, ձայնագիր մը անուշ ու մնում կը նուագէր: Եւ ես, արդէն գիտես որ երաժշտութիւնը հոգիիս չափ կը սիրեմ, հմայուած, ամէն ինչ մոռցած, անհուն հաճոյքով մը կ'ունկնդրէ, սիրտս միշտ երգերուն համբոյրին բացած:

Ու երգերուն համբոյրը անուշ էր...:

Բայց սաստիկ չարացեր էի, ու խեղճ փոքրիկ թիթեռնիկ մը ճգմեցի երկու ափերուս մէջ:

Պահիկ մը, ձայնագրին հետ միատեղ, ցածիկ տունէ մը կարի մերենայի մը կրկուցը լսեցի, զոր ինձի շատ անխորթ թուեցաւ նոյն ատեն, եւ սակայն հիմա կը զարմանամ թէ ի՛նչպէս գեղեցիկ չգտայ այդ աղմուկը, այդ կրկը-

ուոցը մեքենային: (Ըսի կարծեմ թէ շատ անախորժ թուեցաւ այդ աղմուկը) ուստի ոտքի ելլայ եւ տունը ուղղուեցայ:

Օ՛, ի՞նչպէս ես հոն գացի, ի՞նչպէս դուռը զարկի, չեմ գիտեր, եւ երբեք թող չգիտնամ, միայն կը յիշեմ եւ վրստահօրէն, բաց դրան մէջ սիլուէրը պատանի աղջկան մը որ զարմանահար ինձի կը նայէր:

Շուարեցայ առաջին քայլէս իսկ, Սակայն պէտք էր խօսիլ, բան մը ըսել, պօռալ վերջապէս: Ու ես, հրամայեցի գրեթէ:

—Օրի՛որդ... ձեր մեքենային աղմուկը կը խանգարէ զիս, պէտք է վերցնէք, պէ՛տք է լուեցնէք...:

Ձայնս դեռ կը հնչէ ականջիս, կոշտ ու կոպիտ, եւ չափազանց հրամայական:

Կարմրեցաւ կուրծքիս վարդին պէս ու՛

—Ներողութի՛ւն...

Ի՞նչ էր այդ բառը. ո՞ր կէ թուաւ, ի՞նչպէս էր շինուած որ զիս խենդեցուց, խե՛նդեցայ:

Ըսէ՛. ես ի՞նչ րնէի: (Գիտցիր սակայն որ, աղջիկը հոն էր, այլեւս դուռը կար առջեւս միայն, բաց՝ գոցի պէս): Յանկարծ հոգիէս ներս գղջումի ու բարութեան գաղջ հոսանք մը խուժեց, եւ երակներուս մէջ վազեց, ու ես ուզեցի ներս երթալ, բռնել մեքենային անիւր, եւ դարձնել դարձնել անվերջ, մինչև որ լուծիւնը ահաւոր, պատառուն ու ծակծկուած մահանայ...: Սակայն, հոն, այդ ցածլիկ տունը սրբատեղի մը երեցաւ ինձ ու փախայ, փախայ հոս, ծոցին մէջ գիշերին ու հովուն:

Եւ հիմա բարի եմ, այնքան բարի որ...:

\* \* \*

—Լուեց: Իր անուշ ու ցաւագին ձայնին արծագանգը լսեցի իմ մէջս, եւ զգացի որ կուշտիս աւելի կը սեղմուի:

Ես ալ լուռ էի, եւ կարծեմ կը մտածէի, աչքերս յառած լիալուսնին որ նրբին ամպի մը շրթունքին կը մօտենար:

## ՈՒԱՇԵՆԿԹՐՆԻ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆՆԵՐԻ

Ուաշինկթընն փափաքեցաւ երկրին բարեւաճման և հանրապէն օգտին համար օգտակար և առողջապահիկ օրէնքներ հաստատել : Ան իր վերջին ճառին մէջ կ'ըսէր . «Կրցայ իմ սիրեցեալ երկրիս երախտագիտական պարտքս կատարել : Ան երբեք ժողովրդեան վստահութիւնը չկորսնցուց : »

Ան ցուցուց որ կրօնքը և բարոյագիտութիւնը անհրաժեշտ նեցուկներն են քաղաքական բարգաւաճման մէջ և պէտք է որ հաւասարապէս պահուի բարեպաշտ ժողովրդին և քաղաքական մարդոց կողմէ :

Ոչ ոք ճշմարիտ հայրենասէր մ'է երբ անտարրեր կամ թշնամի է ուրիշի : Ամէնուն հետ պէտք է խաղաղութիւն և և համաձայնութիւն մշակել : Չար կամեցողութիւնը, վրէժխընդրութիւնը և փոռասիրութիւնը զէպի ապականութիւն կ'առաջնորդեն :

Հեռեւեալները Ուաշինկթընի զպրօցական շրջանին մէջ յօրինած զործածական օրէնքներն են որոնք Փրանսերէնի, լատիներէնի և ուրիշ լեզուներու թարգմանուած են :

Ընկերութեան մէջ ներկաներուն առջեւը յարգանքի պակասը մի' ունենար :

Ուրիշներու ներկայութեան մ'երգեր և ոչ ալ ձեռքովդ ու ոտքովդ թմրկահարէ :

Բարձրաձայն մի հազար, փողտար ու հօրանջեր, այլ զաղանօրէն . հօրանջած ժամանակդ մի' խօսիր այլ մէկ կողմ գառնալով ձեռքդ կամ թաշկինակդ բերնիդ մօտեցուր :

Ընկերութեան մէջ ձեռքդ, վրդիդ ականջներուդ ու քթիդ մի տանիր :

Ուրիշներու խօսած ատենը մի' քնանար ու մի' նստիր երբ անոնք կը կենան, մի' խօսիր երբ կ'ուզես պաղարկու նութիւնդ պահել, ու մի քալիր երբ ուրիշները կը կենան :

Ներկաներու առջև մի հագուելիք և ոչ ալ սենեակէդ կէս հագուած դուրս ելիր :

Երբ կը տեսնես որ մէկը պատժուած է որեւէ պատճառի մը համար, թերեւս սրաանց ուրախանաս բայց արտաքինէդ խղճալու երեւոյթ մը առ :

Հանրային բազմութեան մէջ բարձրաձայն ու շատ մի խնդար, ապա թէ ոչ ծիծաղելի կը դառնաս :

Աւելորդ (compliment)ներ է ու մեծարանքի արտայայտութիւններէ զգուշանալու է բայց ի հարկին գործածելու է գանոնք :

Երբ մարդ իր լուսագոյնը ընէ, եթէ չյաջողի իսկ մի' մեղադրեր գայն :

Մի' հակառակիր քու մեծերուդ ձեռնարկին բայց միշտ պարկեշտութեամբ հետեւէ քեզի տրուելիք բաժնին :

Ձանա չտրվեցնել քու հաւատարիդ ինչ որ ան արգէն գիտէ : Ատիկա գոռոզութիւն է :

[Անգլ. քարգմ.] Վ.Ս.Ղ.Ս.ՐՇՍ.Կ Է. ՓՍ.ՓՍ.ԶՆՍ.Ն



## Ա Ն Ծ Ա Ն Օ Թ Ի Ն



Գիշեր մըն էր, մին այն գիշերներէն՝ ուր հոգին երբեմն կ'երթայ հեռո՛ւ, հեռու, փնտռելու համար հոգի մը՝ իրեն պէս թախճոտ, իրեն պէս տրտում :

Աստղազարդ բայց մթին գիշեր մըն էր, չեմ գիտեր ինչպէս, զարձեալ հոն՝ պատուհանին կրթնած դտած էի ինքզինքս :

Լուսթի՞ւնը թէ մթութիւնը՝ այնքան թախճոտ ըրած էր զիս այդ իրիկուն, չէի գիտեր :

Հոն կանգնած կ'սպասէի բանի մը որ կ'ուշանար :

Ահա կրկին կը լսէի ջութակին այն մեղանոյշ ձայնը,  
որ նախընթաց իրիկուն արցունքներ խլած էր աչքերէս:

Ո՞վ էր այդ անձը, ի՞նչ էր իր վիշտը... չէի գիտեր, չէի  
ճանչնար ու չէի ուզեր ճանչնալ, բայց կը պաշտէի զայն.  
այնքան անոյշ էր անձանօթ այդ հոգին...:

Ու ամէն գիշեր կ'սպասէի այդ նուագին, տրտում բայց  
կենդանի:

Բայց յանկարծ լսեց այդ ձայնը, և այսպէս շաբաթներ  
ի դուր սպասեցի անոր:

Օր մը սակայն հանդիպակած փողոցէն դազազ մը իջե-  
ցուցին:

Հողիիս խորէն զգացի թէ անձանօթ բարեկամս էր որ  
կը մեկնէր անհունութեան ծոցին մէջ թաղուելու:

Ոչ ոքի հարցուցի թէ ով էր ան, չուզեցի հասկնալ ինք-  
նութիւնը անոր, որ այնքան սիրելի եղած էր ինձի...:

Որքա՛ն անոյշ էր պաշտել անձանօթ այդ հոգին:

**ՍԻՐԱՆ ՆՇՍ.ՆՅԱՆ**



## Յ Լ Յ Գ Ե Ր Գ

---

Տակաւ մութը սեւ գիշերին՝ լոյսի բիծով մը կ'արիւնի  
 Մինչ մոմի պէս քանի մ'աստղեր վերջամնաց՝  
 Կը պսպղան, կը դողդղան, ապա փութով ու յանկարծ  
 Կը լուծուին մէջն կիսով բացուած կապոյտին:

\*  
\* \*

Ու կայլակ մը առաւօտին ու վահագնին հուր արիւնէն  
 Կը խառնուի լըծի արծաթ ջրերուն .  
 Ու զեփիւռէն առաւօտեան՝ ալեակներն ալ լուռ կ'շտապեն ,  
 Որ գան ըլլան լերկ ժայռերուն խնկարկու:

\*  
\* \*

Սմպերուն մէջ հրդեհ մը կայ վառող ոսկի , շէկ բոցերով .  
 —Արշալոյսին երկունքներէն գոյացած --  
 Շանթեր են որ օծերու պէս կը գալարուին շողջըղալով  
 Զուրերուն մէջ ալ վառելով բոցարծարծ:

\*  
\* \*

Առաւօտը՝ կոյսի մը պէս իր լոյսի մեծ շէկ շղարշը՝  
 Շռայլօրէն գիւղին վրայ է սփռեր:

\*  
\* \*

Ու գիշերը աստղածորան՝ երագներուս հետ կը հալի .  
 Մինչ դալկացած ոսկի մանգաղը լուսնի ,  
 Ի տես ծիրան երանգներուն արշալոյսին հարսենի ,  
 Կը տժգունի ու անոնց մէջ կը լուծուի:

ԱՐՇԱՒԻՐ Յ. ԽԱՐԻԹԵԱՆ

# ԼՈՒՍՆԱԿ ԳԻՇԵՐ



Մըքիև անպերու ծոցիև մեջ խաւար  
 Լուսնակը պայծառ  
 Հողմերէն փշուած քոչնակի նրնան  
 Անխոնց կը խոկար:

Փողոցի մը շուն՝ դունչը երկնիին,  
 Շուն մը կը հասէր:  
 Երկուքս փաղկիկի, մուք կածաններէն  
 Դողային, շաղին:

Միկնէս որ հասանի կասարը շերան,  
 —Բարձր հանգրուան,  
 Ուր սերն հերարձակ հարսի մը ննան  
 Աննիկց կը հսկեր:

Ըսի՛.—Կենանի փոյր, աչ ևս չի դառնանի.  
 Տե՛ս, հոս անէն ինչ  
 Լն՛յս է, յոյս, սե՛ր է, գիշերով շունակ  
 Աչ ինչո՞ւ դառնանի:

ՏԻՐԱՆ ՔԷՇԵՇԵԱՆ

3/ Մայիս 1926

Թօփ-Գաբու

## Գ Ե Ղ Ե Յ Ի Կ Խ Օ Ս Ք Ե Ր

Փիլիսոփայ եղի՛ր, բայց բու բոլոր փիլիսոփայութեանդ մէջ մարդ  
 Ըլլալէ մի դաղրիբ:

ՀԻԻՄ

Յանցանքը դատապարտէ՛ եւ ոչ թէ յանցաւորը՛

ՇԷՅՔՍՐԻՐ

## ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Ու այս գիշեր, մի՛ս միևնաչ, առազանին կապտորակ  
 Ձուրերուն՝ քոյ կարկային  
 Հոգիս ընդհուպ կը թըռչի փայտոտքիսնով մ'աննեկին . . . :

Զգայագիրկ մարմին մը, նազանիին հետ ջուրերուն,  
 Զերդ՝ այցելու ցայգային  
 Կ'երգե խորհուրդն այդ պահին, սիրոյ թըրթո՛ւնն հոգիին . . . :

Կապոյցին մեջ հեշտօրօր, ջուրակովն իր լայիսակ  
 Կը նըռագե գրչխահակ  
 Անծանօթ հիւրն այդ վայրին, էրգը՝ մըտող գիսերուն . . .

Հեծեծանկ, խո՛ւշ եղեւեջ, մերկութիւն մը դաշկացած  
 — Անդրադարձո՛ւնը լուսինն —  
 Բառեր կուսայ շըրթներու՝ համակ, ներքող ծարւրուած . . .

Աննխքանա՛յ ֆոյին սակ, կտուցուածքին այդ շըքեղ .  
 Առնեղ նիրհող անհունեկն  
 Անդորրութիւն մը վրսեմ, բաժնեղ հոգին մարմինեկն . . . :

Ա. ԵՂԱԿԵԱՆ

## Գ Ե Ղ Ե Յ Ի Կ Ե Օ Ս Ք Ե Ր

Աւելի լաւ է կոյր ըլլալ քան երեւոյթները սխալ տեսնել, աւելի լաւ  
 է համր ըլլալ քան սխալ խօսիլ:

ԲԻԻՇՔԻՆ

Առաքինութիւնը քաջ է եւ բարութիւնը անվախ:

ՇԵՅՔՍՔԻՐ



## ԶԱՏԻԿԸ ՈՐԻՍՆՈՅԻ ՄԷՉ



(Որքի մը յուշատեղի)

Սովորականէն կանուխ արթնցայ այս օր : Զարթօնքի զանգակը չէ հնչած . խոր լուսթիւն մը կը տիրէ : Ամբողջ ննջասենեակը կը հանգչի առաւօտեան անոյշ քունով մը , և բոլոր դէմքերու վրայ կը նշմարեմ տակաւին գիշերուան երազանքներու քաղցր ժպիտը : Անշուշտ բոլորն ալ յաջորդ օրուան Զատիկը երազած են այս գիշեր :

Վերարկուիս մէջ փաթթուելով դուրս կ'ելլեմ : Ամբողջ շէնքը լուռ է : Արշալոյսը հետզհետէ կը բացուի , արդէն արեւելքի կողմը բոսորագոյն թեթև ամպեր սկսած են նըշմարուիլ . ուրկէ քիչ յետոյ պիտի ծագի արեւը , որ իր հետ կը բերէ նաև Զատիկը :

Իսկապէս հրաշալի է երկինքը և պայծառ : Հոն արդէն քանի մը աստղեր հազիւ մնացած են ու կը պլպլան մարած լոյսով մը , քիչ մը դեզնած : Այսպէս երբ սևեռուն աչքերով այս հանդարտ բնութիւնը կը դիտէի , մոռցայ պահ մը ներկան ու ակամայ թաղուեցայ անցեալի երեւակայթեան մէջ :

Այո՛ , Զատիկ առաւօտ է և անսովոր բան մը չէ այս տեսակ օր մը կանուխ արթննալ : Ելնելուս պէս կը կարծէի լսել զանդակներու ձայներ , որոնց հանդարտ ու մելամաղձոտ զօղանջը , պիտի միանար երգեցիկ խումբերու անոյշ մեղեդիին : Անոնց պիտի միանային նաև աքաղաղներու զել ձայներ , մօտակայ առուակին խոխոնջիւնը ու արշալուսային գեփիւռին հեզիկ թռթուումը և բոլորը միասին ներդաշնակօրէն պիտի գոչէին «Քրիստոս Յարեալ ի Մեռելոց» : Յետոյ արեւը ծագելով իր սովորականէն տարբեր պայծա-

ութեամբ որ կարմրութեամբը պիտի հաստատէր թէ այո՛, Զատիկ էր: Հետզհետէ ամբողջ քաղաքը կենդանութիւն պիտի առնէր, բոլորն ալ ուրախ տրամադրութեամբ մը պիտի գիմէին եկեղեցի որ արդէն լեցուած պիտի ըլլար ջերմ հաստացեալներու հոմ բազմութեամբ: Եկեղեցիէն վերջ պիտի սկսէր ողջագութեամբ, տղաք պիտի համարուէին իրենց ծնողաց ձեռքերը ու անոնք ալ փոխադարձաբար պիտի հաբուրէին անոնց աչքերէն «Քրիստոսի օրհնութիւն»ը պիտի հրաւիրէին անոնց վրայ միեւնոյն ասան տատալով իրենց նուէրները:

Ի՞նչ երջանկութիւն:

Միթէ կարելի՞ է երեւակայել տղայոց այդ ուրախութիւնը՝ այս տեսակ տօնի օրերու:

Աւա՛ղ, ուր են ասոնք... Միեւնոյն խոր լուծիւնը կը տիրէ ամէն կողմ: Զարթօնքի զանգակը կը սթափեցնէ զիս այս երազանքէն: Տղաք ելնելով՝ իրենց սովորական տնային աշխատութիւնները կը կատարեն: Արեւը հետզհետէ կը բարձրանայ. և կարծես այսօր ան ալ տխուր կ'երեւի. կորսնցուցած է առաջուան պայծառութիւնը: Պարզ օրէն ոչինչ տարբերութիւն ունի, թերեւս աւելի տխուր իսկ է: Այլիւս երեւակայութիւն չէ ըրածս, այլ ինքզինքս պող իրականութեան առաջ կը գտնեմ: Այո՛, Զատիկ է բայց իրերը բոլորովին տարբեր են: Մենք որք, երկիրը օտար ու միջավայրը աննպաստ: Ահա ա՛յս է բոլորը, ահա այս է մեր Զատիկը:


1935 Ս.պրիլ 12

Կորնորս

Ս. ՄԱՆՈՒԷԼԵԱՆ



# ԵՐԿՈՒ ԼՈՅՍԵՐ



Մին՝ հնարքն ու գիւտը հին, պապ-շինականերու, որ դարերէ ի վեր կը պլպլայ եկեղեցիին մէջ, սուրբի մը մրոտած պատկերին մօտ կամ ջահի մը կտուցին վրայ՝ հին ու մոռցուած յիշտակի մը անտեսուած պարզութեամբ:

Միւսը՝ արդիւնքը լոյսի դարուն, գիտութեան մարդուն քրտնաթոր ջանքերուն, որ ակնթարթի մը զսպանակային արագութեամբ կը վառի ու զարմանքի արտայայտութիւն մը կը գծէ դէմքիդ վրայ:

Մին կեանքոտ է, անմեղ, զրեթէ սուրբ, սուրբերու դարաւոր պահապանը՝ որ կը պլպլայ խորանի մը վրայ, ուր՝ խաչերու, աւետարաններու եւ ծաղկամաններու շուքերը՝ անոր շարժումներուն հետ կ'երկարին, կը դողդղան ապա կ'անշարժանան:

Միւսը զեղխ է, պայծառ բայց անշունչ, որ միօրինակ ու անշարժ տեսողութեամբ մը կը լուսաւորէ պարասրահ մը, խաղասրահ մը կամ վաճառատուն մը:

Մին՝ պատկառելի է, լոյսը անդորրին, միւսը՝ սիրելի է, ու լոյսը զուարթ եւ խառնակ կեանքին:

Մին տեսեր է միւսին ծնունդը, որմէ առաջ ինք ալ լուսաւորեր է պալատներու դահլիճները, խաղաղօրէն պըլպըլալով ճոխ ջահերու վրայ, միւսը որ անոր տեղն է բռնների այսօր ամէն կողմ, ապերախտ զաւակն է կարծես բարի ու առաքինի հօր մը, որու թողուցեր է այսօր, միայն եկեղեցիին սուրբերն ու վանքին կամարները:

Մին ամբողջ դարեր խունկերու մէջ է վառեր ու մարեր, սերունդներու դէպի Արարիչը օրհնութիւններն է լսեր, միւսը՝ աշխատանոցներու մեքենաներուն հետ զալարուող

ու հիւժող կեանքերն է լուսաւորեր ու խաղասրահներու  
ու պարասրահներու միակ յոյսը կոչուեր:

Մոմն ու ելեքտրական լոյսն են անոնք . . . :

\*  
\* \* \*

Երէկ գիւղիս եկեղեցին գացած էի նորէն: Տաճարը կը  
նորոգէին: Յանկարծ ուշադրութիւնս գրաւեցին ելեքտրա-  
կան լոյսի մետաղէ երակները որոնք ամէն կողմ կը ցան-  
ցաւորուէին ու կը բարձրանային մինչեւ կամարներն ու  
գմբէթը, մերթ օձերու նման պլպլելով ջահերուն եւ խո-  
րանին դարձդարձիկ զարդերուն:

Շուարում մը պաշերեց զիս, ի՞նչ այս լոյսերը հո՞ս աչ-  
պիտի գան, հապա մոմ՞բը, ալ ո՞ւր պիտի պլպլան մոմե-  
րը. հոն՝ մութ անկիւնը խաչեալին պատկերին առջեւ կայծ-  
կըլտող մո՞մը հապա, ալ չպիտի՞ երեւնար տաճարէն ներս,  
ու վայրկեանին անզուսպ փափաքը ունեցայ մոմ մը տես-  
նելու, մոմ մը որ իր գողտրիկ ձեւով վառէր իմ մօտիկս, ու  
պատմէր ինձի լուելեայն՝ դարերու իր պատմութիւնները՝  
աղօթքները բոլոր սգաւորներուն ու թշուառներուն՝ որոնք  
իրենց սիրելիներուն կորուստը սգացիր, անօթի զաւակներ-  
ուն հաց խնդրեր եւ պաղատեր էին իր մօտ, մինչեւ իր  
սպառիլը, եւ ինք աշտանակին վրայ պատկառելիօրէն կե-  
կեցած՝ ամբողջ դարեր լսեր էր անոնց կսկիծները կանգ-  
նած տիրամօր ու հայցողներուն միջեւ:

Ու կրած զգացումէս տարուած՝ զմելիովս սուրեցի ե-  
լեքտրական լոյսի խողովակներէն մին, որու տակէն ամիջա-  
պէս պարզուեցան երկու պղնձեայ թելերը:

Նորոգութիւն տաճարին ջահերուն վրայ կը զետեղէին  
ապակեայ ճերմակ մոմեր, որոնց վրայ քանի մը օր վերջ,  
աւելի պայծառ անշարժ ու դեղնօրակ լոյսով մոմեր՝ պիտի  
փայլէին ու անօրինակ լոյս մի պիտի սփռէին տաճարէն  
ներս, սակայն անոնք կը նմանէին կենդանազրի մը միայն՝

որ իրականին անհետացումէն վերջ անոր յիշատակը յաւերժացնելու եւ զայն միշտ քովդ ունենալու համար կը կախես սենեակիդ մէջ, աչքիդ առջեւ:

Չէ՞ որ մոմը պիտի չշողար եւ պիտի չպլպլար այլեւ ու անոր ստուէրներն ալ պիտի չխաղային գետնին ու պատերուն վրայ որպէս կեանքոտ ստուերներ: Չէ՞ որ այլեւ լուսարարը՝ Ծնունդի կամ Զատիկի առաւօտները անոնցմէ հատ մը պիտի չվառեր ու շօշափելով ուղղուէր դէպի խորանը՝ հոն մէկիկ մէկիկ վառելու համար նաեւ մեծ ու իրական մոմերը:

Դուրս ելայ մայր տաճարէն եւ մտայ քովստի պահարանը, հոն երկիւղած պառաւ մը իր աղօթքը կ'աւարտէր, անոր հետ սպառելու մօտ եղող իր բերած մոմին առկայծող վերջին շարժերուն հետ:

\*  
\* \*

Սակայն ես պիտի ուզէի միշտ տեսնել գողտրիկ մոմը տաճարէն ներս ուր դարերու իր անցնալը կը թաղէ այսօր, այո՛ պիտի ուզէի միշտ տեսնել զայն հոն, հոն՝ սուրբի մը պատկերին առջեւ, միայնակ ու առանձին կայծկլտող դարերու պահապանը՝ որ կարմիր ու խաւար լոյսով մը խորհրդաւոր կերպով կը լուսաւորէ կիսախաւարին մէջ Սուրբին եւ աղօթողին դէմքերը:

ԱՐՇԱՒԻՐ Յ. ԽԱՐԻԹԵԱՆ

2 Հոկտեմբեր 1926



## Ա Ր Ե Ւ Ա Մ Ա Գ

Տանկ, տանկ, տանկ :

Ժամը հինգ է :

Եկեղեցիին համր ու միաչափ զօղանջները կը լսուին : Գարունի անուշ ու զով առաւօտ մ'է : Մեզմ՝ զեփիւռը բաց պատուհանէս ներս կը մտնէ... կը ծիծաղի երեսիս ու կ'երթայ... :

Արեւածագի ժամն է ճշգիւ :

Ի՛նչ անուշ է դիտել արեւածագը, դիտել այն տեսարանը՝ որ կը պարզուի այն պահուս :

Աչքերս դէպի արեւելք կը դարձնեմ կը փափաքիմ օրուան թագուհիին ծնունդը տեսնել... :

Ո՛հ, ահա այն տեղ ջահեր կը վառին կարծես, որովհետեւ օրուան թագուհին պիտի գայ. կարմիր ու վառվառն գոյն մը կը պատէ շրջակայքը, որ հետզհետէ կը մեղմանայ... ու կը տիրէ հորիզոնին ջինջ կապոյտին... կը մեղմանայ... ու կ'անհետի, ու այդ անհետման կէտէն կ'սկսի երեւիլ լուրթ գոյնը հորիզոնին՝ որ կարծես կը խայտայ : Այս միջոցին հոս հոն նիհա՛ր ու երկա՛յն, զուարթ ու ճերմակ ամպեր, կարծես վախկոտ ակնարկ մը կը նետեն դէպի վար, ու կ'սպասեն... :

Կանաչազարդ դաշտին վրայ դեռ ցօղն է որ կ'իջնէ. պղտիկ եռուզեռ մը կ'սկսի... ահա հեռուէն գիւղացի մը որ խթանը ձեռքին, կը զարնէ եզներուն ու կ'արտօրայ արեւածագէն առաջ գիւղ հասնիլ, ուրիշ մըն ալ ահա ուր որ շատ մօտէն կ'անցնի, իր քալուածքը դանդաղ է, ու քթին տակէն շարական մը կը մըթմնթայ, զլուխը բաց է, մէջքը կարմիր գօտի մը փաթթած է, իր մերկ կուրծքը՝ առանց կոճակի շապիկով մէ պատած, հին տափատ մը հագած է սուքերը մէյմէկ տրեխ անցուցած... կը քայլէ :

Յանկարծ լռութիւն մը կը տիրէ, խոր շշուկ մը կ'անցնի մօտակայ ծառաստանի մը մէջէն տերեւները կը շարժին և կարծես իրարու բան մը կը փոփոսան... աքաղաղը անդամ մըն ալ կը կանչէ... երջանիկ թռչնիկի մը ճուռողումը կը լսուի... թեթև մթութիւն մը կը տիրէ նախ, տարօրինակ սարսուռ մը կը պատէ զիս... և սակայն քիչ յետոյ՝ արդէն արեւելքէն հրաշէկ գունտ մը դէպի վեր կը բարձրանայ... : Արեւը ծագած է անա :

Շուռզեռը կը շատնայ... նողագործն ու մշակը իրենց տեղը հասած՝ սերտիւ փարած են աշխատանքին. կ'անցնի հօտը, կ'անցնին այն գառնուկները՝ որոնք մի քանի ամիս առաջ, երբ դեռ պղտիկ էին իրենց մօր ետեւէն մայելով կը վաղէին... : Ու տանտիկիւններ՝ կեր կուտան իրենց հաւերուն...

Ու այսպէս նոր օր մըն ալ կ'սկսի, որ կ'ըլլայ շատերուն համար օր մը ցաւի կամ երջանկութեան, վշտի կամ ուրախութեան... :

ՎԱՀԷ Բ. ԹԵՂԼԻՆՅԱՆ

Սկիւթար  
1 Հոկտ. 1926



## ՀԱՅ ՈՐԲԵՐԸ ՕՏԱՐ ԵՐԿՆՔԻ ՏԱԿ



Հազիւ ութ ամիսներ սահած են այն օրէն ի վեր երբ մօտաւորապէս հարիւր յիսուն որբեր հաստատուեցան Գահիւրէի մէջ : Յունական հիւրընկալ ափերուն մէջ հաստատուած չափահաս այն որբերը՝ կարծես գիտակ իրենց ճակատագրին առաջին օրէն իսկ վառվռուն նկարագիր մը ցոյց տուին, և դէպի գործ նետելու իրենց պատրաստակամութիւնը անշուշտ չլրիպեցաւ հանրութեան զննող աչքերէն :

Այդ տղաքը՝ որբանոցի մէջ գտնուած ժամանակնուն իսկ գէպի պայքար նետուելու մարմալէն բռնուած, կ'ուղէին անմիջապէս տեղաւորուիլ, որպէսզի անընդհատ աշխատելով կարենային օգտակար անհատներ դառնալ և իրենց պարտքը կատարել հայրենիքին հանդէպ: Այս եղած է հայ որբին մտայնութիւնը և միակ բաղձանքը. և կարծես հպարտ իրենց այս գաղափարին վրայ՝ ժպտուն գէմքերով և որբի անկեղծ փափաքներով զինուած ձեռք ձեռքի տուած կը դիմեն դէպի ապագան, և փոխարէն ոչինչ կը պահանջեն, բայց միայն ժպիտ մը հայ հասարակութենէն՝ որը քաջալերիչ և հայրական ըլլայ. իրենց անփորձ պայքարին համար:

Որքան հաճելի է լսել օրուան անցուդարձէն յոգնած, երեկոցին տուն վերադարձող պզտիկ հասարակութեան իւրաքանչիւր անդամին օրուան պատմութիւնը՝ որ երբեմն կ'ընդհատուի ծիծաղախառն քննադատութիւններով: Այդ խօսակցութիւններու մէջ չէ՞ միթէ որ շատ անգամ ի յայտ կուգայ գործի մարդը:

Միշտ կը ջանան ուրախ անցընել ժամանակը, վերցընելու համար ցաւալի յիշատակներով որդեգրած որբ անունը, և արդէն հատատութեան «Աշխատաւոր տղայոց տուն» անւանումը ինքնին ապացոյց մը չէ՞ այդ փափաքին:

\*  
\* \*  
\*

Եւ անա գիշերը կուգայ վերջ գնել երեկոյեան ուրախութեան, ձայները տակաւ կը մարին, լուսութիւնը կը արիւն: Պահ մը վերջը քնացող շարքերուն մէջ լուսինն է որ կը փայլի այդ փոքրիկ բայց յանգուզն աշխատաւորներու գէմքերուն վրայ:

Գնացէ՛ք, և կըբայրներ քնացէ՛ք ապագայի երազկոտ քունով, ձեզ կ'սպասեն արշալոյսի ոսկեշող ճառագայթները ու գիշերուան այս հանգիստ քունը նախօրեակն է վաղուան աշխատանքին՝ որը պիտի առաջնորդէ ձեզ դէպի իտէպին և ապագայի գեղեցիկ երազներու իրականացումը:

ԺԻՐԱՅՐ ՃԵՊԷԼՆԱՆ



## ՆԵՐՊՈՇՆԱԿ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ



Դաստիարակութիւնը մեր բոլոր ձիրքերուն ներգաշնակ զարգացումն է :

Ան մեր մանկութենէն կ'սկսի, գպրոցին մէջ կը շարունակուի բայց հոն չի վերջանար: Մեր ամբողջ կեանքին մէջ կը շարունակուի: Երկու տեսակ դաստիարակութիւն կայ, այն որ կը տրուի մեզի և այն՝ որ մենք մեզի կուտանք: Այս երկուքէն կարեւորագոյնը վերջինն է: Որովհետեւ ինչ որ մենք անձամբ կը սորվինք՝ աւելի օգտակար կը հանդիսանայ մեզի, քան ան զոր ուրիշները կը սորվեցնեն մեզի:

Մարդկային միտքը ունի շատ մը կարողութիւններ, զոր օրինակ՝ քննել, ուսումնասիրել, բազդատել և դատել: Քննելը ըսելով կը հասկնանք թէ, երկար ատեն բանով մը զրաղած է և կրնայ զանազանել անոր աղէկը կամ գէշը: Եթէ մենք քննադատելու կարողութիւնը չունենայինք՝ շատ զիւրաւ պիտի շեղէինք կեանքի ուղիղ ճամբէն:

Ուսումնասիրելը մասնաւոր բանի մը հետևիլ և անոր ամէն մէկ տարրերը սերտել կը նշանակէ:

Եթէ մենք բան մը յարատե կերպով ուսումնասիրենք, այն ատեն է որ մեր փափաքին կը հասնինք:

Բազդատել ըսելով՝ կը հասկնանք թէ երկու իրեր իրարու քով բերելով կը համեմատենք զանոնք: Մենք մեզի աւելի երջանիկ կ'զգանք երբոր բան մը ուրիշի մը հետ կը քաղզատենք և լաւը կը գտնենք:

Դատելն ալ մեծ դեր կը կատարէ մեր կեանքին մէջ, եթէ նախ ինքզինքնիս դատենք և վերջը ուրիշները. անչուշտ դատելով կը զօրանայ նաև մեր դատողութիւնը:

Մարդկային սիրտն ալ ունի իր յատուկ կարողութիւնները, — սիրել, զգալ, հաճիլ և ատել:

Սէրը բնազգական և փոխադարձ է, ան մեր մանկութենէն կ'սկսի և հետզհետէ զարգանալով մեր մէջ մեր շուրջը դառնուող անձերու միջոցաւ կը բազմապատկուի տակաւ:

Իրապէս սէրը մեր կեանքին գոհարն է, ինչու որ ան է որ մեզի մղում ու փափաք կուտայ բան մը աւելի ուսանելու և նոյնպէս սիրոյ խօսքերն ու գործքերն են որոնք ուրիշներուն երջանկութեան պատճառ կ'ըլլան:

Համակրութիւնն ալ զարմանալի յատկութիւն մըն է՝ երբ մէկը կը տեսնենք որ դառնապէս կուլայ, անմիջապէս կը յուզուինք, նաև ուրիշ գանազան պարագաներու մէջ: Ինչպէս երբ մէկը կը տեսնենք որ հիւանդ է՝ անոր օգնելու փափաքը կ'արթննայ մեր մէջ:

Համակրութիւնը մեզ ուրիշին հետ կը կապէ: Զօր օրինակ երբ մէկը հիւանդ է կ'օգնենք իրեն, սգաւոր է և կ'սփոփենք զինք. այսպէս երբ ամէնուն խնդրանքները մեծ յօժարութեամբ կը կատարենք:

Ատելը իրապէս շատ յուր գգացում մըն է, երբ կ'ատենք բարեկամները առանց անկեղծօրէն դատելու զիրենք, սակայն և այնպէս շատ ալ գնահատելի գգացում մըն է երբ կ'ատենք անձնասիրութիւնը, ազահութիւնը և բամբասանքը:

Այսպէս՝ մարդկային մտքին և սրտին կարողութիւնները ամբողջութեան մէջ մէկ են, ինչու որ մարդկային հողին անբաժանելի է:

Որովհետև նախ մտքին կարողութիւններով կ'ըմբռնենք և կը դատենք, և յետոյ մեր սրտէն, խղճի ձայնէն մղուած՝ անոր զրդումները կը գործագրենք:

Այնպէս մեր մտային և զգացական կարողութիւնները ներգաշնակ կերպով զիրար զարգացնելու՝ ստացած կ'ըլլանք իաէտլ կրթութիւնը:

ԱՆՆԻԶՍԵ ԹՒՍՓՈՐԱՆԵԱՆ

Ամերիկեան Վարժարան  
Սկիւտար



# ԿՈՍՏԱՆԱՍ ԱԼԵՐԿԱՆԴՐ

ԵՒ

## ՏՅՅ ԵՐԼԺՇՄՈՒԹԻՒՆԸ

Հայ տոհմիկ երաժշտութեան վեթերան, Կոմիտաս Վարդապետ (աւագանի անուամբ Սողոմոն Սողոմոնեան) ծնած է 1869 Սեպտ. 28ին, Փոքր-Ասիոյ Կուսինա կամ Քէօթանիա քաղաքը:

Սողոմոնի հայրը՝ Գէորգ, համեստ բայց իբրև երաժշտասէր մարդ, արդէն պզտիկ համբաւ շինած էր իրեն համար: Որպէս երգեհան և հեղինակած էր թուրքերէն բազմաթիւ շարֆիներ, որոնք յետոյ, իրենց արժանի տեղը ունեցան Կոմիտասին յուշատետրերուն մէջ, և որոնցմով օրօրուն եղաւ իր մանկունակ հոգին: Սողոմոն հազիւ տարի մը բոլորած, զժբախտութիւնը կ'ունենայ իր մայրը՝ Թագուհին կորսնցնելու:

Սողոմոն, 1880ին յաջողութեամբ կ'աւարտէ տեղւոյն նախակրթարանը և կը զրկուի Պրուսայ, Միջնակարգ վարժարան մը, իր ուսումը շարունակելու, բայց տարի մը յետոյ, հայրը անակնկալօրէն կը մեռնի և փոքրիկն Սողոմոն կ'ստիպուի շնորհատելու իր զպրօցը: Եւ կը պատահի որ, 1881ին տեղւոյն փոխառաջնորդ Գէորգ վարդապետ Դերձակեան, եպիսկոպոսական աստիճան ստանալու համար էջմիածին կը հրաւիրուի այդ ատենուան երաժշտասէր Գէորգ Դ. Կաթողիկոսէ, յանձնարարուելով վարդապետին, որ սրբապաշտ մը ևս բերէ իր հետ, Գէորգեան ձեմարանին մէջ ձրիօրէն ուսանելու խոստումով: Գէորգ վարդապետ երկար

օրէն խորհելէ ետք, կ'որոշէ վիճակ ձգել տեղւոյն 40 որբերու միջև: Եւ կը պատահի որ փոքրիկն Սողոմոնի վիճակի առաջնութիւնը: Վարդապետը Սողոմոնին հետ կ. Պոյսոյ ճամբով Էջմիածին կը մեկնի: Փոքրիկն Սողոմոն 12 տարուան տղու յատուկ չարաճճութեամբ և մանաւանդ վայրենութեամբ, իր մեծ ընկերակցին հետ կը ներկայանայ Հայրապետին, որ սակայն փոքրիկին պատասխաններէն խիստ շատ վրդովուած կը զայրանայ. — «Դուն զուր ես եկել այստեղ, որովհետև, մեր դպրոցում ամէն առարկայ Հայերէն լեզուով է աւանդուում». — ու ասոր վրայ չարաճճի Սողոմոն հետեւեալ սրամիտ պատասխանը կուտայ: — «Ես Հայերէն սորվելու համար հոս եկայ»: — Վեհափառ Կաթողիկոսը այս սրամիտ պատասխանին վրայ հիացած կը հարցնէ. — «Դուն երգել գիտե՞ս»: Յանդուգն պատանիին պատասխանը սակայն «Լոյս Զուարթ» շարականը ծայրէ ծայր երգել կ'ըլլայ. և ան ալ այնպիսի նուրբ ու քաղցր ձայնով մը որ Կաթողիկոսը կը փղձկի ու կ'սկսի արտասուել: Ու կը հրամայէ որ Սողոմոնը անմիջապէս ընդունուի ձեռնարան: Առաջին տարեշրջանին (1881—82) իսկ Սողոմոնը չնորհիւ իր յամառ աշխատութեամբ, կը յաջողի իր դասարանը փոխել:

Յաջորդ տարին բարեկենդանին, իր մտերմագոյն դասընկերներէն մին որ կը բնակէր, Էջմիածնայ մօտակայ գիւղերէն մէկուն մէջ, կը հրաւիրէ Սողոմոնը որ իրեն հետ գիւղ երթայ: Փոքրիկն Սողոմոն չուզելով փախցնել այս առիթը, հաճոյքով կ'ընկերանայ իր ընկերոջ մեկնելու համար Քէօփալու, որ յետոյ, ներշնչարանը պիտի ըլլար մանուկ արուեստասէրին: Սողոմոն, առաջին անգամ հոն է որ կ'ունկնդրէ ժողովրդական երգեր զորս մեծ արուեստագէտի մը խոհականութեամբ կը նօթագրէ, և քիչ ատենուան մէջ կ'ընտելանայ անոնց լեզուին և նկարագրին: կը փորձէ զանոնք ուսումնասիրել: Սողոմոն, տակաւին հազիւ Դ. դասարանի աշակերտ, Մակար Կաթողիկոսի օրով կը փորձուի վարժարանին մէջ դասախօսել իր նախասիրած ճիւղերը:

Տաղանդաւոր այս տղան շուտով սարկաւազ կը ձեռնադրուի (1890) և յետոյ Հայրիկին ձեռքով կը ձեռնադրուի արեղայ և կը կոչուի եղբայր ԿՈՄԻՏԱՍ ու ձեմարանի երաժշտութեան ուսուցիչ: 1895ին մեծ հանդիսաւորութեամբ կը ձեռնադրուի վարդապետ:

Ձեմարանի տաղանդաւոր ուսուցիչ Կարա-Մորզան պաշտօնէն վերջ կը արուի Հայրիկի և կարգ մը ուրիշ բարձրաստիճան հոգեւորականներու կողմէ, պատրուակ բռնելով քառաձայն երգեցողութեանց այլանդակութիւնը:

Հրա իրեալ Կարա-Մորզայի իբրև արժանաւոր յաջորդ ձեմարանի երաժշտութեան աւագ ուսուցիչ կը կարգուի Կոմիտաս վարդապետ, որ շնորհիւ իր յամառ աշխատասիրութեան և անդերազանցելի խանդավառութեամբ կը կազմէ երգեցիկ խումբեր և տեղական գործիքներով նուագախումբ մը, զորս այնքան մեծ ընդունելութիւն գտաւ հանրութենէն:

Կոմիտասի դէպի երաժշտութեան ունեցած սէրը մեծ համեմատութիւններ առած ըլլալով կը փափաքէր կատարելագործել իր կիսատ ուսումը, բայց նիւթականը կը դաւաճանէ արուեստի այս համեստ երգրագուլին ծրագիրներուն և իր տքնութեանց արդիւնքները, այսինքն ուսումնասիրութիւնները կը դատապարտուին կիսատ մնալու: Բայց բախտը շատ ալ չուշանար լաւագոյն տնօրինութեամբ մը բարեփոխելու Կոմիտասի ճակատագիրը:

Կոմիտաս Թիֆլիզ գտնուած միջոցին վանքին մէջ հանդիսաւոր պատարագ տեղի կ'ունենայ, երգեցողութեան ինք ալ կը մասնակցի: Պատարագէն անմիջապէս յետոյ, Ռուսահայ յայտնի հարուստներէն Ա. Մանթաշեան՝ ճաշի կը հրաւիրէ Կոմիտաս վարդապետը, որ առիթը կ'ունենայ դէպի երաժշտութեան իր սէրը և հակումը ներկայացնելու յարգելի վաճառականին, և որ յանձնառու կ'ըլլայ տաղանդաւոր վարդապետը իր սեփական ծախքով Պերլինի երաժշտանոցը ղըրկել, որպէսզի ան մշակէ իր ձայնը:

Կոմիտաս, 1896ին կը մեկնի Պերլին կատարելագործե-

լու համար իր ուսումը: Կոմիտաս, առաջին առթիւ իսկ Պերլինի conservatoireի տեսուչ հռչակաւոր ջութակահար և երաժշտագէտ Յ. Յոսիփովին կը ներկայանայ ու կը պարզէ իր այցելութեան նպատակը, խնդրելով միանդամայն՝ մի-  
ծանուն երաժշտագէտին որ օգնէր՝ իրեն: Արուեստագէտ Յոսի-  
փովն ոտքէն գլուխը դիտելէն ետք Կոմիտասը, կը յանձ-  
նարարէ իր բարեկամներուն, արուեստագէտ Ռիխարտ Շմի-  
թի, որուն հսկողութեան տակ Կոմիտաս յաջողութեամբ կ'ա-  
ւարտէ իր ուսման ընթացքը և կը դառնայ էջմիածին  
1899ին:

Վերջերս, Բարիզի «Արագած»-ին մէջ, Օր. Մարգարիտ  
Բարաեան շատ շահեկան յօդուածով թարգման կը հանդի-  
սանայ Կոմիտասի Պերլինի մէջ ապացուցած ուսանողական  
փայլուն... բայց տառապալից կեանքին:

«Կոմիտաս վարդապետին թոշակը շատ համեստ էր, գե-  
ղարուեստ ուսանելը շատ սուղ է և խեղճ սարկաւազին ամ-  
բողջ դրամը կ'երթար թէ՛ դաշնակ, թէ՛ երգեհոն վարձելու,  
թէ՛ դասերի թէ՛ համալսարանի ծախքերը հոգալու, չմու-  
նանք և սենեակին ու ազրուստին հոգսը այնպէս որ հազիւ  
օրը մի անդամ կարողանում էր ճաշել համեստ ժողովրդա-  
կան պանդոկում: Իր պրօֆէսօրը կը նկատէ, որ երեսա-  
սարդը քանի կ'երթայ աւելի ու աւելի կը նուագի ու կը  
հալի: Վերջապէս մի օր դասին հետ՝ իր դործերը ձգած կը  
հետեւի մեր սարկաւազին և կը մտնէ նոյնխօկ պանդոկը և  
հեռուէն կը տեսնէ նրա համեստ կերածը, այնուհետև կը  
չարունակէ հետեւիլ մինչև Կոմիտասին բնակարանը և կ'եր-  
թայ ծանօթանալու տանտիկնոջ հետ: Զուգադիպութիւնը  
կ'ուզէ որ սարկաւազին սենեակը ճիշդ արկնոջ ընդունարա-  
նէն մի յարկ բարձր լինի: Այդ սքանչելի դասատուն մնում  
է ամբողջ կէս օրը ընդունարանում և ունկնդրում է, ինչպէս  
սարկաւազը երգեհոն է նուագում, մերթ դաշնամուր սերթ  
երգում է և սարսափով հասկանում է, տղան ստելու ուրիշ  
առիթ չի պտրում»:

«Այ իմա թողնեմ պատմութիւնը Կոմիտաս վարդապետին՝ փամբ 10ին իրիկունը դուռս կը բաղխեն, զարմացած պրօֆէսորս կը տեսնեմ դռան յետին: «Դուն սիրելի պրօֆէսորս այս տե՛ղ»: Պ. Շմիտը ներս է մտնում և սկսում է սաստիկ բարկանալ, «Դուն անպիտան՝ ինձ կը վճարես երբ ուտելու հաց չունիս: Կ'արգելեմ քեզի մի պփե ցիգ ինձի վըճարելու այսուհետև:

Օր. Մարգարիտի յօդուածէն կը հասկնանք որ՝ վարդապետը, Պերլինի իր ուսանողութեան ընթացքին, նիւթական շատ անձուկ վիճակ մը ունի եղեր: Եւ արգէն ո՞ր արուեստագէտը չէ տառապիր նիւթականին անձկութեան պատճառաւ:

Կոմիտաս, Էջմիածին վերադառնալէն ետքը առաջին գործը կ'ըլլայ երաժշտական գործիքներ բերել տալ և կազմակերպել orchestre մը, որ յետոյ ծնունդ տար հոգեւոր երգչախումբի մը: Այսպէս, Կոմիտասի անդրանիկ գործունէութիւնը Էջմիածնայ վանքին մէջ է որ կ'սկսի համեստ բայց ուժեղ հաւատքով մը: Հոն վանքին մէջ յամառ աշխատութեամբ մը կը ժողվէ գաւառիկ երգեր և պարեր, ու իր կատարեալ արուեստով կը մշակէ դանոնք ու կ'երգէ, բոլորովին նոր շունչ մը տալով այդ սրտայոյզ երգերուն: Բայց, ինչպէս ամէն տաղանդաւոր մարդիկ, Կոմիտաս եւս կ'ունենայ նախանձոտներու շարք մ', օր ի դին ամէն չարութիւն կ'ուզեն խաբանել այս տաղանդին առաջին ճառագայթը: Թշնամիները, աւելի առաջ երթալով կ'սպառնան զինքը դուրս ընել վանքէն: Բայց Կոմիտաս, արուեստի անմահ դրոշմը ճակատին, անտարբերութեամբ կը կոխէ կ'անցնի անոնց յարուցած խութերը ճշմարիտ պանդուխտի մը պէս, կը դեգերի գիւղէ ի գիւղ, միշտ ալ ուսումնասիրելով հայ շինականը և իր երգը, որ պարզ ու սրտագրաւ կը գտնէ: Կոմիտաս, գեղջուկներուն բերնէն իսկ գրի կ'առնէ այդ անըման երգերը որոնք յետոյ, իր արուեստով մասնաւոր հրապոյր մը կը ստանան, կազմելու համար հայ տոհմիկ երա-



ժըշտութեան իբրև ամենաընտիր և յաջող էջերը: Այսպէս, Կոմիաասի ձեռագիր երգերու հաւաքածոն որ աւելի քան (3000) է աւելի գեղջուկ տաղեր և պարեր կը բովանդակէ, որոնցմէ հաշիւ 50—100ի չափը հրատարակուած են հետեւեալ անուններու ներքև:

1. «Հայ ֆևա» հաւաքածոյ գեղջուկ երգերի (12 երգեր, խմբերգ և միայնակ «solo» 1905 Բարիդ):

2. «Հայ գեղջուկ երգեր» մեներգ օրաչնակ (10 կտոր) Լայիցիդ:

3. «Հայ գեղջուկ երգեր» խմբերգ, բաղմաձայն (10 կտոր) Լայիցիդ:

Վերջերս, Բարիդի իր համակիրներու կողմէ երկու տետրակն եր եւս հրատարակուեցան, որոնք կը բովանդակեն՝

1. «Նոր սեռի Ա. տես» Հայ պարեր (6 կտոր Բարիդ):

2. «Նոր սեռի Բ. տես» Մեներգ (4 կտոր Բարիդ):

Իսկ ասոնցմէ զատ քանի մը երգեր ալ լոյս տեսած են գրական և գեղարուեստական պարբերականներու մէջ ու տակաւին մնացածներն ալ «Պոլսոյ Պատրիարքարանի փոշեթաթախ դարաններուն մէջ կը պահուին...» կը գրէ Պ. Ռ. Թէրլէմէզեան:

Վարդապետին երկրորդ գործունէութիւնը կ'սկսի Թուրքիոյ և Եւրոպայի մէջ, դասախօսութիւններ և համերգներ տալով: Իր առաջին դասախօսութիւնը տուաւ Պերլին 1899ին «Միջազգային երաժշտական ընկերութեան» սրահին մէջ, որուն հիմնադիրներէն էր նաև ինք: Ներկայ էին նշանաւոր բրոֆեսորներ, Հայ Գերման ուսանողներ, Այդ օրուան նիւթն էր հայ կրօնական և ժողովրդական երգեր: Ընկերութեան նախագահը բացման խօսքին մէջ հետեւեալ շահեկան խօսքերը ըրաւ.

«Առաջին անգամ է որ Պերլինի մէջ այսպիսի դասախօսութիւն մը կատարուի և գուցէ մինչև այժմ Բարիդի աշխարհանդէսներուն մէջ անգամ այս տեսակ դասախօսութիւն չէ կատարուած»:



ԿՈՐԻՏՍՈ ՎԱՐԳՍՊԵՏ  
ի փառքի օրերուն

Հայր սուրբը այդ օր գերմանացի երիտասարդներէ չորս հոգինոց քառաձայնի խումբ մը կազմած էր՝ որոնցմէ երկուքը օրիորդներ էին: Խումբը նախ երգեց կրօնական երգերէն «Փառք Քեզ Տէր», «Օրհնեցե՛ք գովեցե՛ք», «Ո՛վ զստեղծութիւնս», «Տէր-ողորմեա», իսկ ժողովրդական երգերէն «Մոնա էար» «Անձրեւ և իսա «Այ տղայ», «Հով սրե՛ք»: Եւ ինք ալ երգեց Արաբերէն, Պարսկերէն, Թուրքերէն և Քուրտերէն շարֆիներ, ցոյց տալու համար հայկական եղանակներու միջև եղած տարբերութիւնները:

Այս դասախօսութենէն յետոյ կ'անցնի էջմիածին: 1901ին Պերլինի մէջ Ընդհանուր և Եկեղեցական երաժշտութեան համագումար տեղի ունեցաւ: Հայոց Կաթողիկոսի (Սրբմեան հայրիկ) կարգադրութեամբ Կոմիտաս Վարդապետ երկրորդ անգամ Պերլին գնաց դասախօսութիւններ տալու հայ եկեղեցական երաժշտութեան մասին:

1905ին Թիֆլիզի մէջ երկու համերգներ տուաւ, հոգեւոր ու ժողովրդական երգերէ բաղկացած: Նոյն թիւին Թիֆլիզ երկու դասախօսութիւններ ալ ըրաւ:

Վարդապետին համերգներէն գլուխ գործոցը եղաւ Բարիզի մէջ տուած երգահանդէսը որ տեղի ունեցաւ 1906ին: Այս համերգին իրենց աջակցութիւնը բերին՝ Օրք. Մարգարիտ և Շուշիկ Բարաեանց, ծանօթ երգիչ Ա. Շահմուրատեան և գրագետ բանաստեղծ Պր. Արշակ Զօպանեան: Այս վերջինը դասախօսելով Հայոց ժողովրդական քնարերգութեան մասին:

Այս համերգին առթիւ Բարիզի գեղարուեստական և գրական պարբերաթերթերը թիւեր նուիրեցին Հայկական երաժշտութեան ուսումնասիրութեան համար:

«Le monde musical». պարբերաթերթը, Հայկական երաժշտութիւն խորագրով հեռուեալը կը գրէր. — «Ահա մի նորութիւն, մի յայտնութիւն, որ մեզ տանում է հեռու և ապրել է աալիս մի մոռացուած ժողովրդի կեանքով: Հարկաւոր կը լինէր Բուզուր Գիւզուզրէի լեզուն, որ հնարաւոր լինէր տալ մի գաղափար ժողովրդական և եկեղեցու երգերի մասին, որ Հայր Կոմիտաս բերել է մեզ Հա-

յաստանից՝ եւ միթէ դեռ չի՞ տեսնում մարդ այն երկար սև ուրուականի կիսադէմքը, որի բարձր վեղարը աւելի երկարացնում է նրա ստուերը, դեռ չի՞ն դգում այն երգերի խորհրդաւորութիւնը. այն քաղցր մեղամաղձութիւնը, այն հնչուն ճոխութիւնը, որ մաղթում են ամենակարողին կամ գովում բնութեան գեղեցկութիւնը, սիրելի «Հոլլը», «Բրան խնկի ծառը», «Բարերար անձրեւը», «Սիրելի եզր» կամ այն պարերի անգլիսադրեյի ոյժը...» (\*)

«Le courrier musical» թերթը կը գրէր. — «Հայկական համերգի քաղցրութիւնը որքան ուժգին էր, նոյնչափ էլ առանձնայատուկ այն ժողովրդական երաժշտութեան, որ ձեր առաջ բաց արաւ «Salle des agriculteurs», բազմաթիւ և ընտիր հատուածներով: Այս համերգը տեղի ունեցաւ Հայր Կոմիտասի շնորհիւ և աշխատութեամբ, կիրթ երաժշտագէտ և եռանդուն քարոզիչ իր ազգի բնական արուեստի: Լսեցինք սիրոյ, աշխատանքի, պանդխտութեան և կրօնական երգեր խմբով կամ միաձայն, այնչափ գրաւիչ, որոնցից մեծ մասը կրկնուեցան...: Հայր Կոմիտասը երաժշտական երեկոյթի հոգին, աննման էր պատարազի արարողութեան երգերում»: (\*\*)

«Le Mercure musical» թերթը կը գրէր. — «Այս համերգը մի յայտնութիւն, մի սքանչանք էր: Ես կարծում եմ մեզանից ո՛չ ոք չի կասկածում այն արուեստի գեղեցկութեան վրայ, որ իսկապէս ո՛չ եւրոպական է և ո՛չ էլ արեւելեան, բայց եղակի բնաւորութիւն ունի իր շնորհալի քաղցրութեամբ, թափանցող և յուզիչ ազնիւ քնքշութեամբ:

«Այս մեղեդիները քնքոյշ ելեւէջներով և ընտիր, ճկուն և կենդանի ռիթմով՝ մի երաժշտութիւն որ բոլորում է ամբողջովին սրտից և հոտում ինչպէս մի թարմ ջուր, վճիտ եւ լուսաւոր: Այս երգերը արեգակ ունին, ո՛չ կիզիչ արեւը

[\*] Տես. «Կոմիտաս վարդապետ» կեանքը եւ գործունէութիւնը Վիեննայ 1924 Ռ. Թէրլէմէզեան:

[\*\*] Տե՛ս նոյն:

Արաբխայի կամ Պարսկաստանի անապատների, այլ ոսկեղօծ պարզութեամբ ամբողջովին երկնային, որի ջերմութիւնը մի գրուանք է ձիւնապատ լեռանց գագաթների, սաղարթագեղ անտառների և խոխոջացող վտակաց փայլով: Թեքեւս սխալ չը լինէր ումանց կարծել, թէ երկրաւոր դրախտը Հայաստանում, Արարատ լեռան ստորտին էր, որովհետեւ այն աշխարհը, որի պատմութիւնը այնքան չարարատիկ եղաւ, իրօք ընտրեալ երկիր է, ուր արգաւանդ ու բարեբեր բնութիւնը բաշխում է մարդուն ամէն տեսակ բարիք:

Մի տեւական հովերգութիւն անդորր ու քաղցր, ժըպտուն, այն պիտի լինէր և այդ եղաւ իսկապէս Հայաստանի հովիտների կեանքը, չնայած այն բոլոր չարեաց, որ ակօսեցին այդ աշխարհը: Այսօր մեզ հաղորդուեցան սիրոյ երգերի մէջ չքնաղ շարքով, վառ, անոյշարոյր ծաղիկներ: Այս սիրոյ երգերն են մեկամաղձիկ խանդակաթ ինչպէս և ամբողջ աշխարհում, բայց մի առանձին նուրբ երանգով, քընքոյ յոյգերով:

«Աշխատանքի երգերը երկարագոչ մի աղաղակ են, հարուստ գեղգեղանքով, որ արձագանդ է տալիս մի լեռնից միւսը և ի գործ շարժում «Ազրէր Չան եզին», երկրագործ հայի մտերիմ խորհրդակցին:

«Դարձեալ ողբը, որով գեղում, թափում է ազատօրէն անտիրութեան և պանդխտի ամբողջ թախիծը, բայց խառը է ո՛չ գանգատ և ոչ ըմբոստութիւն:

«Պաշտամունքի (Պատարագի) երգերը նոյնպէս բոլորովին ազգային ժողովրդական, չունին ամենեւին այն երկչոտ յարգանքը, որ կասեցնում են նոյնիսկ յուսոյ և վստահութեան ժամերին: Սրանք հոգու զեզմունքներ են, որ բաց են անում ամբողջովին իր Աստուծոյ առաջ և Նրան մատուցանում սիրոյ ամբողջ թափով իր բոլոր խորհուրդները և իր կեանքը բոլորանուէր: Մարդ զգում է ջերմ խորհրդաւոր հաւատի թրթռալը, որ առանց ջանքի՝ հիացմանց կատարներն է հասնում:

«Վերջապէս պարերի եղանակը չունին մերանց արտաբանքը, ո՛չ էլ մեր չափի կոշտութիւնը, երբեմն վեհ ու կրօնական, երբեմն մեղմ, ինչպէս սիրոյ երգ, երբեմն թեթև անմեղ ու բախտութեամբ, բայց խորապէս հմայիչ... գեղեցիկ մարմինների ճշմարիտ երաժշտութիւնն ներդաշնակ ու ազատ» :

Քննադատը իր խօսքերը մասնաւորելով կամխոսա՝ Վարդապին կը շարունակէ .

«Հայր կամխոսան, որ չէր վախեցել դայ և զեկաժարեյ խումբը և երգել պաշտամունքի սեղեցիներ, մեր «Stabat Mater»-ի համապատասխան կտորի մէջ հասաւ մի այնպիսի յուզմունքի ուժգնութեան, որ համարեա արտասուեցինք, և Հայր կամխոսար արժանացաւ ովացիայի :

«Ոչինչ աւելի ազգու չէ, քան իր մեծ սև վեղարով քաղցրութեամբ և արժանաւորութեամբ խոնարհուիլը, և կրկին երգեհոնի առաջ նստելը և վերջին տողի վերակախելը որը երգեց համարեա անձայն, ուր լսում էր մեծ վշտի գաղտնիքը, մի երկարատարած արդահատանքի շեշտով, ամփոփւած վեհութեամբ, որ Աստուածային ներկայութիւն է ազգում հոգուն» :

«Հայր կամխոսա, որին պատկանում է այս եղանակները հաւաքելու և առաջին անգամ նրանց գեղեցկութիւնը ճանաչելու պատիւը, մի հանճարեղ, շնորհայի երաժշտագէտ է որովհետև այդ երգերից շատերը յարմարեցրել է երգեհոնի կամ խմբերգի, որ ցոյց է տալիս շատ ճիշտ և նուրբ բմբնումն՝ պահելով ազգային առանձնայատկութիւնը և երանգը» : (\*)

Վարդապետը այս վերջին համերգին, ժողովուրդին կողմէ Չերմայէս ընդունուիլը տեսաւ և թերթերու հրատարակութիւններէն ալ քաջայերուելով անցաւ Զուլցերիայ՝ և կարեւոր կեդրոններու մէջ համերգներ և դասախօսութիւններ տուաւ :

Այս անգուղական արուեստագէտը, որ ո՛չ միայն իր արուեստագիտական հմտութիւնը ի սպաս դրաւ հայ տոհմիկ

[\*] Տես նոյն:

երաժշտութեան արհուլացման և պահպանման, այլև իր հիասթափանչ ձայնով երկրէ երկիր արձագանգը եղաւ Արարատի բնակիչներուն հոյզին ու յոյսին: Ու օտարներն իսկ ափ ի բերան մնացին հայ զեզջուկ երգերուն արուեստին ի լուր:

Եւ համոզուեցան վերջապէս որ «Հայերը չար ընտրիկ չեն, վասնզի իրենց ուրոյն երգը ունին», ինչպէս ժամանակին գրքոյով փաստեր էին Ախվերտեանն ու Վահան Վարդապետ Պարտիզակցին:

Վարդապետը քանի մը անգամներ ալ համերգներ և դասախօսութիւններ բրաւ նաև եզրագոտս որուն մասին յօդուած մը նուիրած է տաղանգաւոր գրագէտ և յայտնի Եզրագոտի վաճառական Տիգրան Կամարական:

«Մենք կը կարծէինք թէ Վարդապետը որ կուգայ Եջմիածինէն, Մեռոն կը բերէ իր հետ միայն, բայց դուք վարդապետ, դուք Արարատը փոխադրեցիք Եզրագոտս, իրա՞ն է հայր Սուրբ, լեռները կը քալեն» (\*):

Հեքիաթային Եզրագոտէն յետոյ կ'անցնի զեղարուեստի աշխարհը Խաչիա, հոն ալ քանի մը դասախօսութիւններ կուտայ որոնց մասին Վենետիկի Միլիթարեանի Միաբաններէն Հ. Կ. Տէր Սահակեան հետեւեալ գնահատական տողերը կը գրէ «Բազմապէպ» ուսումնաթերթին մէջ:

«Եւ ահա Կոմիտաս վարդապետ յետ յտակ բանախօսութեամբ հայ երաժշտութեան տեսակները որոշելու և անոնց բաղդատական վերլուծումն բնելու, Խաչիական ներքնազմբէթին մէջ կամարածէ՛ կը ձգէ իր երգը, հօր՝ ինչպէս ժողովրդեան մը ձայնը ու թրթուոն՝ զայն արտադրող սրտերու նման»:

Սահմանադրութենէն ետքը Պոլսոյ հայութեան համար գրականութեան և զեղարուեստի նոր դարագլուխ մը բացուած էր: Բոլորովին նոր սերունդ մը երևան եկած էր, նորանոր գրասէր և զեղարուեստասէր երիտասարդներ՝ որոնք նպատակ

[\*] Տես զեղարուեստ. սարքերաթերթ թիւ 6, 1917 թ. Իֆիլիզ:

ուսնէին ազգը ալ աւելի առաջ տանիլ: Այդ միջոցին Կոմիտաս վարդապետ երեւցաւ Պոլսոյ բնմին վրայ, և այդ երիտասարդներէն խանդավառ ընդունելութիւն մը գտաւ: Վարդապետը՝ իրեն ցոյց տրուած յարգանքէն աւելի քաջալերուելով, եռանդուն կերպով կը փարի գործին և իբրև արզիւնք մօտ 300 հոգինոց երկսև խումբ մը կը կազմէ որ այն ժամանակ մեծ աղճուկ հանեց, մինչև հիմա ալ անոր աչակերտներուն շնորհիւ է որ նոր սերունդը (այժմու երիտասարդութիւնը) ծանօթացաւ անոր գոհարներուն:

Վարդապետին վերջին դասախօս-համերգը տեղի ունեցաւ Բարիզի՝ երաժշտական համաշխարային համագումարին մէջ, ստիկէ յետոյ նորէն վերագարձաւ Պոլիս ապա... խելագարուեցաւ:

Վերջին դասախօսութեան մասին ծանօթ հայրենագէտ Ֆրէտէրիք Մակկերն կը գրէ հետեւեալ հիացողական տողերը:

«1914 թուին Պարիսի երաժշտական-գրական մեծ համագումարում, ուր հաւաքուել էին տիեզերքի գլխաւոր երաժշտագէտներ, Կոմիտաս Վարդապետը հայ կրօնական մի համերգ տուաւ, հիացնելով ներկայ եղող երաժիշտները:

«Ժողովրդական երաժշտութեան, ինչպէս նաև արօրի, խոփի, գուքանի երգերի վրայ տուած դասախօսութիւնները, պիտի ասել համագումարի նիստերի ամենից թանկագինները եղան»: (\*)

Վարդապետին դասախօսութիւն—համերգներու շարքը հոս կը վերջանայ, իր շուրջ զարմանք ստեղծելով:

Բացի դասախօսութիւն — համերգներէն, վարդապետը մշակած է նաև երաժշտական գրականութիւնը, փիլիսոփայութիւնը և պատմութիւնը:

Ճեմարանի աշակերտած միջոցին՝ զբաղած էր երաժշտական գրականութեան հետ և աշխատակցեցաւ Մայր Աթոռի «Արարատ» կրօնական ամսագրին: Իր արժէքաւոր գրու-

[\*] Տես «Կոմիտաս վարդապետ» Բ. Թէրլէմէզեան:



Թիւնները գրած էր ուսանողական գրասեղաններուն վրայ: Այս գրութիւնները յետոյ լոյս տեսան «Արարատ»ի մէջ: Եւ այս յօդուածները կրնան օգտակար ըլլալ ամէն անոնց որոնք երաժշտութեամբ կ'զբաղին:

Պերլին ուսանող եղած միջոցին աշխատակցած է գերմաներէն և ֆրանսերէն պարբերականներուն, ջանալով ծանօթացնել հայ տոնմային երաժշտութեան պատմութիւնը օտար ազգերուն:

Հայ գուսաններու մասին համառօտ կերպով ուսումնասիրութիւն մը կատարելով երեւան հանեց գուսանական երկու դպրոցներ. Ա. ինքնուրոյն կամ անուսում դպրոց իսկ Բ. կրթուած դպրոց:

Յետոյ գրութիւններ ունի նաև ժողովրդական պարերու մասին, թէ զեղջուկ մը ինչպէս պար կամ խաղ կը հնարէ: Այս մասին յսնք Մեծ վարդապետը.

«1905 թուին ամառանոց էի գնացել Նաուիճոյ վանքը (Շիրակում, Արագածի վրայ): Վարդապառի տօնին, ուխտ է եկել մեծ բազմութիւն: Ուխտին գիւղացի աղջիկները, նորահարսներն ու տղաները, որպէս սովորոյթ է, պար են բռնում ու երգում: Այիսո՛ս որ այդ բնական, բանաստեղծական, բովանդակալից և գողտրիկ պարերին մեծ հարուած է տուել և տալիս է աչլանդակ և անճաշակ զոռնան: Ուխտատեղին կորցրել է իր բուն նշանակութիւնը և դարձել գուսանաչիների և ասաւերայպէս կեր ու խումի վայր: Ամէն մերձակայ և հեռու գիւղ բերում է իր գուսնաչիներու խումը: Երեւակայեցէք մի բակ, մի տասնեակ գուսնաչի, խումք խումք, այս ու այն անկիւնում, կամ բակի մէջտեղում, յաճախ իրար կից նուագելիս. խոնուած բազմութիւն, ասեղ ձգելու տեղ չկայ. բարձր սարերից, խոր խոր ձորերից, տասնեակ գուսնաչի ձայների արձագանգն է անդրադառնում: Մի զարհուրելի անյութի, խոռոտ ձայների անտանելի ժխոր: Փորձիր սենեակի մտնել, գոնե՛րդ պինդ գոցիր, բայց գո՛ւր. գուսնաչի զուգան ձայները պատից էլ են թափանցում: Ու-

զիւ մէկուկէս օր մեր ականջներն ու նիտրոյները յանձնեցինք նոցա բարեհաճ տրամադրութեան: Վերջապէս երկրորդ օրը ամէն մէկն իր գիւղը քաշտեցաւ:

«Հայր Երուսանդի եղբայր խնայն գիւղ գնաց, ազգականների հարսներին, ազնիւներին հասարակ վանքի բակը: Օրն երկուշարթի էր և մեռելոց: Ես թուզիմն ու մատիւր պատրաստ, դուրս էի եկել շինութեան ստալաշատակ տանիքը, և սպասում էի նոցան գտնուն: Այս անգամ ներկայ էի հէնց սկզբից, աւրիչ անգամներին հար չէր լինում, սրովհետև պար բոնելն սկսում են գիշերով. իսկ ես համում էի և պատրաստ երգեր էի լսում: Տեսայ և զգացի, թէ սրբան սխալուել եմ»:

«Առաջ տաջ, մի չորս հոգի եկան: Պարը բոլորեցին: Մի երկու չրջան, լուս, բայց համաջափ քայլերով: Դէպի աջ, սրպէս սովորոյթ է խազի սկիւրին, պտոյտ արին: Մէջի լաւ խաղաղօցն սկսեց երգել այս կրկնակով.

«Անան րեղո, րեղո,

Մխում րեղո, րեղո»

«Առումըն այս կրկնեց նոյնութեամբ և պարագլուխը շարունակեց երգի տաջին մասը և կրկնակի տաջին տաղ. խումբը երգեց նոյնը: Ոգեւորութեան ազդեցութեան տակ կամայ կամայ եզանակը զարգացաւ և ձեւափոխութիւններ ստացաւ. փոխուեցաւ տաղաչափութեան կշիւը, սրովհետև թռնում էին արագ: Ութերորդ ձեւը երգելիս եկաւ մի երկրորդ խումբ, որ պարի մէջ մտաւ՝ հէնց երգի ընթացքում: Նա պարագլուխ անցաւ պարի գլխին: Պարագլուխ լինում են յայտնի խաղ ասող և ձայնեղ ազնիւներ կամ տղայք, երբ գալիս է մի այգալիսին, նախկինը պարի զեկը տալիս է նրան և ինքը կանգնում ձախ կողմից: Երկրորդ պարագլուխը փոխեց եզանակը մի աստիճան բարձր բոնեց տաջին լուխը փոխեց եզանակը մի աստիճան բարձր բոնեց տաջին լուխը. այստեղ միացան էլի մի քանի ուրիշ հարսներ և ազ-

ջիկներ, պարագլուխը նորից փոխուեցաւ : Սա էլ աւելի բարձր երգեց . յանկարծ սկսան կանչել ու քաշքշել մի աղջիկայ որ հեռուն կանգնած դիտում էր, տարան և պարի գլուխ կանգնեցրին . խաղը միաժամանակ ընդհատեցին , մինչև որ այդ աղջիկն էլ մտաւ պարի մէջ : Սովորոյթի համաձայն , այսպիսին չեմ ու չեմով է գալիս , թէև սիրար ետում է երգել պարելու համար :

«Պարը հոտաւ ողեւորութեան գագաթին : Պարագլուխն իր սքանչելի ձայնով ոլորեց եղանակը և նոր ոգի ներշնչելով , երգին համ ու գոյն տուաւ :

«Այն օրը գրի առայ 34 նոր երգ :

«Այսքանը բաւական է պարգելու համար , թէ ինչպէս են ծնունդ առնում դեղջուկ երգեր , և թէ ինչպէս , տեղն ու տեղը բազմապատիկ աճում ու զարգանում են :

«Պարը վերջացաւ Խնդրեցի բոլորն էլ երգիցին առաջին խաղը , բայց վերջին պարագլխի եղանակով : Երբ ինքս արձարծեցի և յիշեցնել կամեցայ իւրաքանչիւր նախկին պարագլխի երգածը , ամենեւին կարեւորութիւն չտուին սեփական ստեղծագործութեան , քանի որ գիւղի առաջին երգչուհին , իբ ոլորուն ձայնով ու բնատուր ձիրքով , գեղարուեստական ամփոփ արտայայտութիւն էր տուել բոլորի թոթովանքին . առարկեցին թէ «էդ սնքը լաւ չեն» : Մինչև անգամ զարմանում էին , որ մի «խաղ ասող վարդապետ» ջնջին բաների յետեւիցն է ընկել . երգ է , խաղ է , ասացին ու գնաց էլ ս՞ւմ վէճն էր թէ ս՞վ , ս՞ւր , ե՞րբ և ի՞նչպէս է երգել» : (\*)

Կան նաև անհատական ստեղծագործութիւններ որոնց մասին վարդապետը կը գրէ .

«Մէկ օր էլ , նոյն թուին , Նաոիճոյ վանքին կից փոզոցից մի աղէկտուր երգի ձայն լսեցի : Դուրս թոռայ , ելայ կտուր : Դիմացը , տանիքի վրայ նստած է մի չափահաս աղ-

[\*] Տես «Անահիտ» ամսագիր 1907 թ. Բարիզ :

Ղիկ, աթար է շինում ու երգում: Հաղիւ արտասանել էր վերջին վանկը, եկաւ մի աղջիկ խօսքի բռնուեցաւ: Մի քանի բոպէ յետոյ, եկողը գնաց, իսկ նա շարունակեց: Յանկարծ մի պառաւ բարկացած պոռաց և ցոծ կանչեց աղջրկան: Անմիջապէս վեր ելաւ, անդից ու տուն իջաւ:

«Երգի բովանդակութիւնից երեւում էր աղջկայ հոգեկան վիճակը: Չափահան աղջիկ, ուրիշի տունը, մի կտոր հացի համար կաշկանդուած, գործի ժամին, մենակ նստած, յիշում է մօրը, որից, ինչպէս ասացին, զրկուել էր փոքրուց, զգում էր որբի դառն վիճակը, և բնական բերմունքով, թախծալի վիշտն արտայայտում կցկտուր երգ ասելով, որ իր հոգու պատկերն էր:

«Եթէ այս երգը լսէին նորա պէս ուրիշ որը աղջիկներ անշուշտ պէտք է խօսէր և նոցա սրտի խորքից: Նոքա՛ էլ իրանց ցաւի չափով, պէտք է ձայնակցէին և կարեկցէին:

«Կ'անցնէր մի ժամանակ, կամ կը մոռանային և կամ կը մնար մի ազօտ յիշողութիւն: Որովհետև զիւզացու համար երգաստեղծութիւնն էլ մի այնպիսի սովորական և բնական գործողութիւն է, որպիսին մեզ համար, առօրեայ խօսակցութիւնն է: Եթէ չգրենք այսօրուայ ասածը կամ հոգ չտանինք մտքում պահելու, յետոյ կամ չենք յիշի, կամ շատ շատ բովանդակութիւն կը մնայ» (\*):

Իր ամէնէն կարեւոր գրութիւններէն մին ալ է «Հայ գեղջուկ երաժշտութիւնը»: Որ հրատարակուած էր Բարիզի «Անահիտ» գրական պարբերականին մէջ: Այս յօդուածով կը նկարագրէ «երգի մը նկարագիրը և հայ ժողովրդական երգերու մասին կ'ընէ հետեւեալ խորհրդածութիւնները:

«Որ և է երաժշտութիւն ներկայանում է մեզ տունասարակ երկու նկարագրով: Կայ երաժշտութիւն, որ բնագրի խօսքերի հետ սերտ, ներքին կազ չունի, դա պարզապէս *mélodie* է, մի որոշ եզանակ յարմարեցրած բառերի: Կարելի

[\*] Տես նոյն:

է այդ եղանակին ուրիշ բնագիր տալ, կամ բնագրին ուրիշ եղանակ դնել, առանց անպատեհութեան: Այս տեսակ երաժշտութեան օրինակներ չատ կան, թէ մեզանում և թէ՛ օտարների մօտ:

«Բայց կայ և այնպիսի երաժշտութիւն ուր բնագրին ու եղանակը բացարձակապէս իրար են զուգորդուած: Անկարելի մինը բաժնել միւսից որովհետև librettistի և compositeurի ստեղծագործած մտածումի մէջ կատարեալ նոյնութիւն, մեր բոլոր ժողովրդական երգերը, որի թէ՛ խօսքերը և թէ՛ եղանակը միաժամանակ ստեղծել է ինք ժողովուրդը:

«Առաջին տեսակի երաժշտութիւնը զգացումների հետ գործուելի երկրորդը՝ մտածումների, գաղափարների: Այս պատճառով էլ առաջինը հասկնալու համար երաժշտական շատ մեծ դատախարակութիւն հարկաւոր չէ, իսկ երկրորդի համար՝ ընդհակառակը: Առաջինի հայրը Խաչապահանն է, երկրորդինը, Փերմանականը:

«Արդ, Փերմանիայում երբ սկսեցի ուսումնասիրել ամբողջ աշխարհի երաժշտական վառքերը, ամենից շատ ողուորից ինձ Տաննառզղոխ անմահ հեղինակը: Սկզբներում, ի հարկէ, ես ձգտում էի գէպի այն երաժշտութիւնը, որ շոյում էր մարդու սիրաբ, գէպի Խաչապահանը, բայց երբ կամաց կամաց իմ լսելիքը դատախարակուեց, երբ ես վարժուեցի երաժշտութեան մէջ վնասել ոչ թէ զգացումը այլ միտքը, գաղափարը, այն ժամանակուանից սկսած ես ինձ կապուած զգացի Փերմանական երաժշտութեան: Իմ մէջ ծնուեց բուն ցանկութիւն լսելի կերպով ուսումնասիրել Վազնի գործերը: որոնց բոլորի միջով՝ պայծառ կարմիր թելի նման անցնում է զուտ գերմանական ազգային երաժշտութեան սղին: Վազնի ստեղծագործութիւնները մի մի հսկայ կոթողներ էին, ուր պատկերանում էին Փերմանական հոգին, նրա տոկունութիւնը, աշխատասիրութիւնը, խորութիւնը բնորոշ, թանձր խոշոր գծերով: Մեծ խանդավառութեամբ ընդգրկեցի նրա ազնիւ և վսեմ սկզբունքը — տալ ամէն ժողովրդի և

լրաժշտութեան նրա ցեղային հոգեբանութեան համապատասխան գրոշմ — նրա մեքօղը, եղանակը հասնել խօսքերից և ոչ թե խօսքին եղանակ դնել :

«Ինչո՞ւ ի՞նչ նպատակով էի գնացել Գերմանիա . — Մեր ազգային երաժշտութեան շէնքի համետ գործաւորը զաւնայու իմ կարողութեան չափով :

«Ի՞նչ պիտի անէի . — Ուսումնասիրել մեր եկեղեցական և ժողովրդական եղանակները, որոշել նրանց հարազատութեան աստիճանը և հիմնել մեր երաժշտական պալատը, զուտ ազգային, ցեղական տարրերի վրայ :

«Ու նախկին հարցումը այս անգամ ցցուեց իմ գէմ աւելի հրամայող աւելի բանաւոր : (\*)

«Պէտք էր լուծել այդ հանելուկը : Ու սկսեցի դարձեալ աշխատել : Գերմանիայում ստացած երաժշտական գաստիարակութիւնս ինձ համար թանկագին օժանդակ հանդիսացաւ :

«Ես հիմք բռնեցի ժողովրդական երգերը, որովհետեւ նրանց ինքնուրոյնութիւնը անժխտելի էր : Եկեղեցական եղանակները, գատելով նրանց արտաքին կազմութիւնից, որը ոչ միայն բարդ, այլ զանազան տեղերի համեմատ զանազան գոյն և ձեւափոխութիւն ունէր, թուում էին օտարամուտ : Նրանք մօտ էին թուրք եղանակին : Միեւնոյն ժամանակ նրանք սերտ առնչութիւն ունէին մեր ժողովրդական երգերի հետ : Ուրեմն մեր հոգեւոր երաժշտութեան աղբիւր պիտի լինէին կամ առաջինները կամ երկրորդները : Եւ որովհետեւ պարզ արամաբանութիւնն իսկ ասում էր, որ մեր եկեղեցական եղանակները պէտք է աւելի մեր ժողովուրդի ստեղծագործութեան մօտ լինէին, ուստի ամբողջ ջանքս լարեցի գէպի այս ուղութիւնը :

«Շփոթեցնող կէտք այն էր, որ մեր ժողովրդական եղա-

[\*] Կոմիտաս վարդապետ էջմիածնում եղած ժամանակ չէր իմանում թէ մեր եկեղեցական եղանակները ինչ-ժագում ունին : Ահա՛ այս հարցն է որ դարձեալ ցցուում է երաժշտագէտի դէմ :

նակները, պարզ կազմ ունէին, նուազ զարգարուած էին, քան եկեղեցական եղանակները: Արդ, հանելուկի բանալին պիտի տային ինձ այն եկեղեցական եղանակները, որոնք աւելի պարզ էին:

«Եւ երկար որոնումներէց յետոյ վերջապէս գտայ այնպիսի եղանակներ, որոնք երկու տեսակ են երգւում, ծանր ու թեթեւ: Այդ եղանակները կոչւում են «Տօնակալ»։ Ծանրը նման էր իր դեղձեղանքներով թրքականին, իսկ թեթեւը՝ իր պարզութեամբ ժողովրդականին: Ուրեմն սրանից յտակ երեւում էր. որ այդ պարզ եղանակները զարգարուել էին թրքական ոճով՝ նրանց յանդիսութիւն և չուք տալու դիտաւորութեամբ. երբ մենք դեռ եւս չունէինք բազմաձայն երգեցողութիւն:

«Ահա՛ որտեղից էր ծագում առել մեր եկեղեցական եղանակների նմանութիւնը թրքականների հետ: Իսկ այդ այլափոխութեան անդիտակից հեղինակներն էին Պոլսի տիրացուները, որոնք ամիրայական խնջոյքներում, հանդիսականներին դուրս գալու նրանց հաճոյք պտտծառելու համար պարզ եղանակը զարգարել, բեռնաւորել էին:

«Այս կարեւոր ռուսարանութիւնից յետոյ, սկսեցի մանրամասն ուսումնասիրել մեր թէ՛ եկեղեցական և թէ՛ ժողովրդական եղանակները, նոյնպէս մեր հարեւան հին և նոր ազգերի երաժշտութիւնները, որոնք այսպէս կամ այնպէս կարող էին ազգած լինել մերինի վրայ:

«Այս դժուար ուսումնասիրութեան արդիւնքն այն եղաւ, որ ես յաջողեցայ երեւան բերել մեր երաժշտական տաղաչափութիւնը, մեր սեփական եղանակների և երգերի ձեւերը: Ժողովրդից սորվելով ձայների առողջանութիւնը, ձեռնարկեցի եկեղեցական և ժողովրդական մի քանի պարզ եղանակները բազմաձայնի վերածել, իւրաքանչիւր ձայնի համար դործ ածելով մի միայն ազգային ոճ, ազգային ձև, ազգային տաղաչափութիւն: Եւ երբ այդ կերպով իմ դաշնակած երգերը ներկայացրի իմ ուսուցչապետին, նա ասաց.

«—Դու ք լաւ ճամբի վրայ էք. շարունակեցէք ազգային ոճը՝ առաջնորդուելով արգի գեղարուեստական երաժշտութեան օրէնքներով: Այս կէտը լաւ ըմբռնելուց յետոյ, մի մտնաք և այն, որ ճշմարիտ արուեստագէտը օրէնքներու ստրուկ չպիտի լինի. օրէնքը կարող է ծառայել միայն իբրև ուղղեցոյց. ստեղծագործութիւններն օրէնքից չեն բրդխում. օրէնքն է բղխում նրանցից: (\*)

Այժմ, սակայն. հայ երաժշտութեան այս անխոնջ մշակը մտային խանգարման մը պատճառաւ, քանի մը տարիէ ի վեր արգելափակուած է Բարիզի յիմարանոցներէն մէկուն մէջ:

### ՊԵՏՐՈՍ Ա. ԻՇԱՆ


926 Սեպտ. 3

Կէսիկ - Փարս



[\*] Տես նոյն:





Մ Լ Ս Ո Վ, Փ Ո Փ Ո Ր Ի Կ Ը

«Փայտի» գծած է Պրֆ. Տիգրանի Տարեան, Գառն-Գիւղի Արամեան վարձ. 6ի 1925ի 2րդ ներկն



ՊՐ. ԲԻԻՉԱՆԴ ՏԱՏՐԵԱՆ  
որ զժամ է սկսող  
փոթորիկ» նկարը




ՊՐ. ԳԵՂԱՄ ԳՈՄՊԷՐԵԱՆ  
յաջող պատանի իւղանկարիչ մը  
Արա՛եան՝ փարժարանէն  
Գատը-գիւղ



ՊՐՆ. ԺԻՐԱՅՐ ՃԷՊԷՆԵԱՆ  
յաջող պատանի գրող մը  
Եգիպտոս



ՊՐՆ. ՂԱՀԷ ԹԷՂԵԱՆ  
պատանի գրող մը  
Սկիւտար



ՊԱՄԱՆԻՍԵՐՈՒ

ԳՐԱԿԱՆ

ԲԱԺԻՆ

# ՄԱՐԿ-ՈՅ ԵՆՉԱՌ-ՈՒԹԻՒՆԸ


Ծ. Գ. Յետագայ հետաքրքրական գիտական պատկերը որ կը պարզէ մարդու կեանքին ամենակարեւոր մէկ ազդակը եղող շնչառութեան պարագաները՝ անուած է «Das Berliner Tageblatt» անուն Գերմաներէն թերթէն եւ արտատպուած մեր Տարեցոյցին մէջ: Բացատրութեանց Գերմաներէնէն Հայերէն թարգմանութիւնը բրած է ծանօթ հրապարակագիր՝ Պրն. Արտաշէս Գալփարճեան՝ որու կը մատուցանէ Խմբագրութիւնս իր սրտանց շնորհակալութիւնը:

«Շնչառութիւնը անտեսանելի հանգամանքով քիմիական գործողութիւն մըն է: Չենք կրնար այդ գործողութիւնը աչքով դիտել ու զննել: Ուստի անոր պարագաները որոշապէս կարենալ հասկնալու համար, անոր ճարտարացի գործի մը հանգամանքը պէտք է տալ:

Ա՛րդ, մարդոց շնչառութիւնը՝ օդին մէջ գտնուած թթւածինին եւ արեան պարունակած ածխածին (gaz carbonique) միջև փոխանակութիւն մըն է:

Շնչառութիւնը կ'ըլլայ երկու ճամբով. օդի շրջաբերութեան ճամբայ (1-10) եւ արեան շրջաբերութեան ճամբայ (a-g): Օդի շրջաբերութեան ճամբան թթուածինը թոքը կը տանի եւ ածխածինը դուրս կը հանէ, իսկ արիւնի շրջաբերութեան ճամբան թոքին մէջի թթուածինը կ'առնէ եւ ածխածինը մէկդի կը թողու:

Շնչառութիւնը վանքիլարթոն գործիքի մը պէս, օդին մէջ գտնուած թթուածինի մասնիկները քթին վերի մասը՝ ունդերը կը հանէ (տես թ. 1): Իսկ քթին մէջ (տես թ. 2) այդ մասնիկներուն օգտակարութիւնը կը քննուի, այդ մասնիկները հոն կը տաքնան եւ փոշիներէն կը մաքրուին (3): Օդի հոսանքը (4)ին միջոցաւ կ'անցնի կոկորդի նշիկներէն եւ




Մարդոց ճնշանոթիներ

հոս, ջուրի շոգիէն կը խոնաւնայ և այս գործսղութիւնով նախապատրաստուած՝ կ'երթայ (թիւ 5) թոքը: Դէպի վար հոսող թթուածինը հակառակ ուղղութեամբ վեր ելլող արիւնին կը հանդիպի (տես թ. 6): Թթուածինէն զտուած օդը ետ, դէպի վեր կ'ելլէ ու իր հետ դուրս կը հանէ մարմնէն՝ արիւնին մէջ գտնուած ածխաթթուն: Օդը՝ ածխաթթուով բեռնաւորուած՝ շնչափողէն վեր (8)էն կ'անցնի բերանը (9) և դուրս կ'ելլէ մարմնէն:

Այս եղանակով, ածխաթթուով բեռնաւորած արիւնը մարմնէն վեր կը բարձրանայ (a) սիրտը, արեան ածխաթթուն թոքին մէջ կը մզէ (b) և (c) ի միջոցաւ թոքին մէջ կը տանի: Հոս՝ արիւնը՝ իր ածխաթթուն գէպի վեր ելլող, արտաշնչող օդին d)ին կը յանձնէ, ածխաթթունէն զերծ արիւնը՝ ներս շնչուած օդին թթուածինը կ'առնէ (e) թրթուածինով լեցած արիւնը ետ՝ գէպի սիրտ կը դառնայ և հոնկէ (g) մարմնոյն մէջ կը տարածուի:

- Թիւ 1.— Շունչի կեդրոն  
 » 2.— Վեր հանող քթին ճամբան  
 » 3.— Վեր ելլող օդին ճամբան  
 » 4.— Սրտի բարախման կեդրոն  
 » 5.— Ջեռուցման սենեակը  
 » 6.— Ջեռուցման տեղ  
 » 7.— Նշիկի ջուր  
 » 8.— Կազերու փոխանակութեան կեդրոն  
 » 9.— Կոկորդ  
 » 10.— Նշիկ  
 » 11.— Երակ  
 » 12.— Շնչառութեան կեդրոն  
 » 13.— Օդին գէշ կամ աղէկ ըլլալը հաստատող կեդրոն  
 » 14.— |  
 » 15.— } Թունաւոր ըլլալը հաստատող կեդրոն  
 » 16.— Դաղարը հաստատող կեդրոն

- Թիւ 17.— Շնչառութեան Բ. կեդրոն  
 » 18.— Հոտոտելիքի ջիզ  
 » 19.— Թթուածինի ջիզ  
 » 20.— Մաքրուած օդի ջիզ  
 » 21.— Շնչափող  
 » 22.— Սիրտ  
 » 23.— Ածխաթթու



## ԿԻՒԹԷՄՊԷՐԿ (1397—1468)

Հէնտէ Կիւթէմպէրկ ծնած է Գերմանիոյ Մայնց քաղաքին մէջ 1397ին: Տասնըհինգ տարեկան հասակին մէջ հայրը կորսնցուց: 1420ին ստիպուեցաւ հայրենիքէն հեռանալ՝ Փրէտէրիկ Գ.ի հանդիսաւոր մուտքին առթիւ պայթող խռովութեանց հետեւանքով:

Կիւթէմպէրկ հաստատուելով Սթրազպուրկ, գեղեցիկ յղացում մը ունեցաւ. տպագրութիւնը հնարել, այսինքն շարժուն գիրերով գիրք տպել: Այս գաղափարը իր մտքին մէջ այնչափ զօրացաւ որ սկսաւ գիշեր ցերեկ անոր վրայ մտածել: Եւ ահա գործի սկսաւ, ու տասը տարի անընդհատ աշխատեցաւ, մեծամեծ ծախքերու ենթարկուեցաւ: Դրամական նեղ վիճակի մատնուած ըլլալով, ստիպուեցաւ իրեն ընկերներ առնել: Ընկերներն են՝ Տոիձհայն, Ռիֆ և Նոյմանն: Վերջապէս գիւտը եղաւ. մետաղի վրայ գիրերը փորագրելու միջոցը գտնուեցաւ, միայն թէ գտնել հարկ էր այնպիսի բաղադրութիւն մը որուն վրայ գրերը կարելի ըլլար գիւրութեամբ փորագրել, և որովհետեւ երկաթը շատ կարծր ըլլալուն թուղթը կը ծակէր, կապարն ալ շատ կակուղ էր՝ ան ալ մամուլին տակ կը ճեմուէր, իսկ փայտն ալ



ոչ ոյժ ունէր ոչ ալ տոկունութիւն : Վերջապէս գտան բազադրութիւն մը որով կարելի պիտի ըլլար իրենց զիւտը յառաջացնել շուտով : Աշխատութիւնը արագնթաց սուրաց, բայց դժբախտութիւնը շուտով դաւաւ զինքը, իր ընկերները իրենց ստացուածքը ծախեցին ի պատիւ մեծ զիւտին :

Չախողութիւնները իրարու յաջորդեցին. իր ընկերներէն Տիւնայն 1439ին մեռնելով ընկերութիւնը լուծուեցաւ : Ասոր վրայ պահանջատէրները գտաւ բացին Կիւթէմպէրկի գէմ : Դատի միջոցին, ընկերութեան գաղտագողի պայմանագրութիւնը երեւան ելաւ ուր պայմանագրած էին սպաղրութեան գաղտնիքը երեւան չհանել : Ու իրենք գաղտնորէն կ'աշխատէին անվհատ, հայելի շինելու պատրուակին տակ :

Կիւթէմպէրկ պարտապահանջ սուրէն հալածուելով Սթրազպուրկէն կը հեռանայ և կ'անցնի իր ծննդավայրը (1450)ին ուր նորէն կը շարունակէ իջ աշխատութիւնները : Կրկին ընկերութիւն մը կը կազմուի հետեւեալ անձերէն, Կիւթէմպէրկ, Ժան Փաուսթէն, Բիէս Շէօֆէր : Այս անգամ զիւտը իր կատարելագործութեան գաղաթը հասած էր, իր ընկերներէն Շէօֆէր խառնուրդի գաղտնիքը լուծեց, հաւասարապէս իրարու հետ խառնելով կապար ու (արեմուրմ) և անա բազադրութիւն մը որ լիովին պիտի բաւէր իրենց նպատակին իրագործման : Այլեւս կարելի էր երկաթէն նըլաղ կարծրութեամբ գիրեր ձուլել և կարելի եղաւ անվախ կերպով գիրքեր տպել : Դիւտը կատարելագործուելուն պէս մեր զիւցազնին աստղն ալ մթննալ սկսաւ, իր ընկերները գայն աւելորդ համարելով ընկերութենէն դուրս հանեցին : Փաուսթ այս ապերախտութիւնը ընելէ վերջ ինքզինքը սպաղրութեան հայրը կոչեց : Իսկ խեղճ Կիւթէմպէրկ՝ իր բազդէն դժգոհ Մայնցէն կը հեռանայ անտէրունջ :

Փաուսթ այս յաղթանակէն դոհ, նոր զիւտը սկսաւ Չահագործել անխիղճ կերպով, իր ընկերը Շէօֆէրն ալ իրեն փիսայ առաւ : Գործաւորները այս անձուգարձէն թէև զըմ-

գո՛հ էին , բայց իրենց ձեռքը կապտուած էր սուրբ երզումով մը : Որովհետեւ ցած հողի տպարանատէրները Ս . Գրքին վրայ երզում ընել կուտային անոնց , որպէսզի դուրս չհանեն արւեատին գազոնիքը : Փառասթ անխուսափելի պատիժը գտանոյն տարին Մայնցի մէջ ժանտախտ համաճարակէն մեռնելով : Տպարանն ալ փոխանցուեցաւ իր փեսային : Այս վերջինն ալ սակայն ծանր պատիժի ենթարկուեցաւ երբ Մայնց յանկարծ գրաւուեցաւ թշնամիին կողմէ : Փառասթի հիմնած տպարանն ալ աւարի տրուեցաւ , իսկ Շէօֆէրն ալ անխնայ սպաննուեցաւ աւերակներուն վրայ : Շէօֆէրի որդին տիրանալով ուղեց գործը շարունակել աւելի կանոնաւոր կերպով : Շէօֆէր միայն զիտցաւ հնարիչին յարգը :

Կիւթէմպէրկի անունը բոլորովին մոռցուած էր , գիւտը կը վերագրէին Փառասթին և Շէօֆէրին : Բարեբախտաբար 1505ին տպագրուած և Մաքսիմիլիքէն կայսեր ձօնուած գիրքին ճակատը հետեւեալ արձանագրութիւնը փարատեց գիւթիմացութիւնը «Մայնցի մէջ է որ տպագրութեան հրաշալի արուեստը հնարուած է 1450ին հանճարեղն Կիւթէմպէրկէ , տպա բարելաւուած ու տարածուած իր յաջորդներէն՝ Փառասթի և Շէօֆէրի շնորհիւ :

Եթէ փրկարար այս արձանագրութիւնը գոյութիւն չունենար , երկու հրէշները գիւտը իրենց պիտի սեփականացրնէին և այսօր փոխանակ Կիւթէմպէրկի՝ անոնց անունը պիտի յիշատակուէր :

Դիւցազնին միակ տպագրած գործն է «Humonague Vac-ture catholique» գիրքը :

1460ին իր ընկերներուն կողմէ արտաքսուելէ վերջ 10 տարի թշուառութեան մէջ թափառելէ յետոյ , իր ապաշնորհ ընկերներուն մահուրնէն երկու տարի յետոյ ինքն ալ մեռաւ 15 Փետրվար 1468ին Մայնցի մէջ :

Իր անմահ անունին ի յիշատակ՝ «Կիւթէմպէրկ-հրապարակ»ին վրայ արձան մը կանգնեցին : Արձանին ձեռքերուն մէջ կայ թերթ մը թուղթ , որուն վրայ գրուած է հետեւեալ նախադասութիւնը «Եւ Եղև Լոյս» :

Ահա գիւցազնի մը կեանքը որ իր ամբողջ ստացուածքը վատնեց միմիայն աշխարհը խաւարամիտներուն և կողպտիչներուն ձեռքէն ազատելու համար :

Պ. ՄԱԺԱԿՈՒՆԻ

## ՌԻԹՐ ՏԱՐԻ ՀՈՂ ԻՆ ՏԱԿ ԱՊՐՈՂ ՌՈՒՍ ՄՐ

Մօսկուայէն կը տեղեկագրեն .

Ընդհանուր պատերազմին միջոցին Վիլնա քաղաքէն քաշուելու ատեն , Ռուսերը չուղելով թշնամիին ձգել զինուորական պարենաւորման մթերանոցը՝ օդը հանեցին այս կառուցումը որ քաղաքին ամենագեղեցիկ շէնքերէն մին էր :

Բայց այդ շէնքը օդը հանելու յատուկ ուսմբը գետեղած ատեննին՝ Ռուսերը մոռցած էին իրենց զինուորներէն մին , երկրաչափ մը , որ այս միջոցին հանդարտօրէն կը քնանար մթերանոցին մէջ :

Պատրոյզը վառած ըլլալով՝ անոր յաջորդող պայթումը մէկ ակնթարթի մը մէջ աւերակոյտի մը վերածեց մթերանոցը :

Երբ Ռուսերը Վիլնայէն քաշուեցան , ապրող մարմին մը կը շարժէր աւերակներուն մէջ , զինուորական երկրաչափն էր ան : Հրաշքով երկրաչափը չէր վիրաւորուած : Բայց այնպիսի դուրսեան մը մէջ կը գտնուէր որ իրեն անկարելի կը դառնար աւերակներուն մէջէն դուրս ելլելը , որովհետեւ ամէն անցք գոցուած էր փլուզումին տակ : Իր շուրջը առատօրէն ուտելիք գտնուելով ամէն անօթենալուն կ'ուտէր , այս կերպով ան կըրցած էր ապրել : Օրեր և ամիսներ սահեցան , գժրաղց երկրաչափին եղունգները առիւծի ճիրաններու պէս երկարեցան , գալով իր մազերուն՝ մինչև մէջքը կը հասնէին :

Տարիներ վերջ Ռուսերը վերագրաւեցին այդ քաղաքը , բայց խնդրոյ առարկայ եղող մթերանոցին աւերակներով զբաղելու ժամանակ չունեցան : Կերջապէս վերջերս կ'որոշեն մաքրել աւերակները և կառուցանել նոր շէնք մը նոյն հողին վրայ :

Բայց հող փորող գործաւորները յանկարծ ինքզինքնին

դէմ առ դէմ գանելով տարօրինակ էակի մը, կը փախչին իրողութիւնը իրենց պետին հաղորդելու համար:

Դժբախտ երկրաչափը կըցած էր ապրիլ ութը տարիներ աւերակներուն տակ, բայց արկածին սարսափը իրեն խօսիլու բախտը կորսնցնել տուած էր բոլորովին:

Այս միջոցին համը ըլլալով հանդերձ, ան յաջոցեցաւ ձեւերով պատմել պատահածները: Անմիջապէս իր մազերը և եղունգները կտրեցին և զայն հիւանդանոց փոխադրեցին և ջանացին անոր վերատանալ տալ՝ իր խօսելու վարժութիւնը: Բայց Երկնքին մէկ տարօրինակ քմահաճոյքով՝ հոգին տակը երկար տարիներ ապրող այս մարդը՝ միայն երեք օր կըցաւ ապրիլ հիւանդանոցին մէջ՝ ուր հոգին աւանդեց:

Յրանս. քարգմ. \*\*\*

## ԲԱՂԴԱԳՈՒՇԱԿՆԵՐՈՒՆ ՀԱԻՍՏԱՆԻՔ

Ի. Դարուն մէջ եղած գիտական վերջին փորձերը կ'ապացուցանեն, որ ձայնի լոյսի թրթռումներուն պէս, կան նաև հոգեկան թրթռումներ, որոնք մարդկային մարմնին վրայ որոշ չափով մը կ'ազդեն: Այսպէս, գիտուններ մութ տեղերու մէջ փորձեր ընելով՝ տեսած են թէ մարդկային մարմինը օժտուած է տեսակ մը ճառագայթներով, այդ ճառագայթները կըցած են նաև լուսանկարել: Նորօրինակ լուսանկարիչներ ևս գիտուններու ըսածը հաստատած են ըսելով. «Այո՛, ոյդպէս աղոտ բան մը կ'ըլլայ երբեմն մեր քաղած լուսանկարներուն շուրջը»:

Շատ զարմանալի թող չի թուի ուրեմն, երբ մեր ըսելիքը, մեզմէ առաջ մեր գիմացինը ըսէ և փոխադարձաբար: Ինչո՞ւ. — Պատասխանը շատ պարզ է, երբ ես կը խորհէի,

իմ այդ խորհուրդս արտայայտող թրթուռմաները, ուղեղէս  
և վերջապէս մարմինէս դուրս ելլելով, գացին ազդեցին  
իմ քովս գանուողին վրայ, հետեւաբար քովս գանուողն ալ  
տեղեակ եղաւ իմ մտածումիս: Ուրեմն, մենք պարզ զու-  
գաղիպութիւններ չի սեպենք հետեւեալները և անոնց ու-  
րիչ պատահարները:

Ա.— Կը պատահի որ մեր մտքէն մէկը կ'անցնենք և  
կը պատահի, որ քիչ մը վերջը մեզի հանդիպի այդ անձը  
կամ այցելէ մեզի:

Բ.— Մենք սենեակին մէջ նստած ենք, մեզի կը ծա-  
նուցանեն թէ դուրսը մէկը կայ և մենք, մէկէն մտքեր-  
նէս կ'անցնենք թէ այդ անձը Բ. է և արդարեւ ճիշդ կ'ըլ-  
լայ:

Հիմա խնդիրը այն է, թէ մարմնոյն ո՞ր մասը կ'զգայ  
այդ հոգեկան թռթուռմաները, առաւելագոյն չափով: Կը  
կարծուի թէ կայ այդպիսի տեղ մը, գործարան մը մեր մար-  
նոյն մէջ կամ վրայ՝ սակայն տակաւին չէ գտնուած:

Արդ, դառնանք սա բազդագուշակ ըսուածներուն և նա-  
յինք թէ ի՞նչ է անոնց ըրած գործը: Բազդագուշակները և  
կարգ մը անձեր շատ աւելի կ'ազդուին ուրիշներու գա-  
ղափարէն, որովհետեւ ինչպէս որ միւս գործարանները գոր-  
ծածուելով կը զարգանան, այս ալ միեւնոյն պարագան կը  
ներկայացնէ: Պէտք է վստահ ըլլալ, որ բազդագուշակի մը  
մեզի մեր ժամին ըրած յայտարարութիւններուն հարիւրին  
եօթանասունը հինգը, ութսունը, մեր մտքէն անցածն է և  
մնացածը յարմարեցուած է, զոր այնչափ չենք զգար մեր  
միտքը զարմանալու զբաղած ըլլալով՝ անոր ճիշդ գուշա-  
կութիւններուն համար:

Երկու օրինակներ. Ա. Ծեր կնոջ մը ամուսնացած մէկ  
ազջիկը Մարտիոյ կը գտնուի և մայրն ալ Պուլիսէի մը կը դիտէ,  
որ վերջին երկու անգամներուն իր ազջիկէն ստացած նամակ-  
ներուն մէջ՝ իր թողանք մասին որեւէ տեղեկութիւն չկայ-  
կը խորհի. կը խորհի և կ'եզրակացնէ, թէ իր թողը մեռած

է և իր աղջիկն ալ՝ իր արդէն ծեր մօր, հեաւոր անմխիթար երկրի մը մէջ, կսկիծ չի պատճառելու համար, տաժամապէս չ'իմացներ: Այս արամադրութեամբ կը գիմէ բազմագուշակի մը և ահա բազմագուշակ պարոնն ալ «թուղ մեռած է տիկին» կ'ըսէ: Կինը իր ծերի յատուկ սովորութեամբ մէկ երկու օր կուլայ կ'ողբայ մինչև որ նոր նամակով մը, իր թուան ողջ առողջ ըլլալը և լուսանկարը կ'ըստանայ:

Ա. — Օր մը, մէկը, ուսուցիչներէս մէկուն և անոր ընկերներուն ըսաւ. «Ասանց զբամապանակնիդ բռնալու, անոնց մէջ որչա՛փ զբամ գտնուիլը պիտի գիտնամ»: Եւ ահա, մարդը մէկիկ մէկիկ ճշգորէն ըսաւ թէ իւրաքանչիւրին զբամապանակին մէջ որչա՛փ զբամ կար, սակայն երբ կարգը իմ ուսուցչիս զբամապանակին պարունակութիւնը գուշակելուն եկաւ, չի կրցաւ գուշակել և գիտէ՞ք ինչու. — Որովհետեւ ուսուցիչս ինք ալ չէր գիտեր թէ իր զբամապանակին մէջ որքա՛ն զբամ կար...»

Ուրեմն բազմագուշակը ոչ թէ մեր չի գիտցածը մեզի կ'ըսէ, այլ մեր մտածումը կամ գիտցածն է որ մեզի կը ծախէ:

ԱՆԳՐԱՆԻԿ ԸՆԲԱՊԱՊԵԱՆ

Մառտիլ

Ք Ե Ղ Ե Յ Ի Կ Խ Օ Ս Ք Ե Ր

Չար ընկերը կը նմանի գերանի մէջ միտած գամի մը զոր առաջին կամ երկրորդ հարուածէն յետոյ կարելի է քաշել առանց դժուարութեան. սակայն անգամ մը որ մինչև զլուխը միտի, հարկ կ'ըլլայ գերանը քանդել. զայն գուրս հանելու համար:

## ԿԱՏՂԱԾ ՇՈՒՆԻ ՄԸ ՀԱՆԴԻՊԵԼՈՒ ԱՏԵՆ

Կատողած շուներ որ ամենազօրաւոր չըջուն վտանգն է հետեւեալ յատկանիչները ունի :

Փողոցին մէջ ընդհանրապէս ուղիղ գէպի ասաջ կ'երթայ :  
Վայրագ ու դաժան աչքեր կ'ունենայ : Խոպոտ ունումներ և հաչիւններ կ'արձակէ : Կոկորդէն , հեծկտալու նման կ'ոտնայ : Իր ճամբուն վրայ ամէն ինչ կը խածնէ :

Ամէն ոք իրաւունք ունի անմիջապէս սպաննելու նրմանօրինակ շուն մը հրացանի գնդակով , զօրաւոր գաւազանով մը անոր ծոծրակին հարուածներ տալով և այլն :

Կենդանին դիւրաւ ձեռք ձգելով մեկուսացնելու համար անոր առջև նետել կերպասի կտոր մը . յարդի շիւղ մը կամ գլխարկ մը : Խածնելու պարագային վէրքը արիւննել , ալքօլով լուալ և հրաչէկ երկաթով այրել , ապա մօտակայ կատարութարան մը տանիլ և քննութենէ անցնել տալ :

Նոյնպէս ջերմօրէն յանձնարարելի է որ նոյն խսկ առանց խածնուելու եթէ կատողած շունի մը դպած է՝ զգուշօրէն ձեռքերնիդ լուաք , որովհետև կրնայ ըլլալ որ իր բերնի փըրփուրէն ու լորձուէքէն մաս մը մնացած ըլլայ հոն :

Եթէ հազուադէպ անոր լորձուէքին դպած ըլլայ՝ զանոնք պէտք է հականնելէք :

Ֆրանս. քարգմ. \*\*\*

## Գ Ե Ղ Ե Յ Ի Կ Խ Օ Ս Ք Ե Ր

Ան , որ մտաբերած է մեծ գործ մը կատարել այս կարճատեւ կեանքի ընթացքին , պէտք է ուժերու այնպիսի կեդրոնացումով մը լծուի աշխատանքի , որ դատարկապորտ հանդիսականները , որոնք կ'ապրին միայն զուարճանալու համար զինքը յիմար նկատեն :

## Տ Ե Ս Ո Ղ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ստորև նշանակուած հեռաւորութիւններէն կարելի է որոշապէս տեսնել յիշեալ առարկաները, պայրանաւ ու պայ-  
ծաւ օդի մը դիտելի գտնուի :

### Հեռաւորութիւն

15	քիլօմէթրի	հեռաւորութենէ մը	գիւղին հասարակ եկեղե- ցիներն ու զգեակները :
11	»	»	Հողմադացները
5	»	»	Սովորական տուները
4	»	»	Ծիւնելոյցները
2	»	»	Մեծ և առանձին ծառերը
1,200	»	»	Առանձին ծառերը և փո- ղոցի նշանատախտակները
0,300	»	»	Պատահաններու ապակի- ներու խաչածև փայտերը
0,050	»	»	Տանիքներու կղմինտրնե- րը մարդ, ձի, կառք :

### Հեռաւորութիւն

1500	մէթր	հեռաւորութենէ մը	խումբով քաղող մարդոց խումբը, ձիաւորներու խումբ մը, ձիաւորներու չարքերը ձիերէն անջատ կերպով կը տեսնուին :
850	»	»	կը տեսնուին ոտքերուն չարժումները, սանտրը- ւած եւ երկուքի պառ- կած մազի մը ճեղքը ; ձիերու գլուխները :
700	»	»	Մարդիկը կարելի է իրար- մէ զանազանել ձիերու ոտքերը կը տեսնուին :



## ՀԵՌԱՆՈՐՈՒԹԻՒՆԸ

500	մէթր հեռաւորութենէ մը	Որոշապէս մարդիկ և ձիերը կը տեսնուին:
300	»	»
		Դէմքի կլորութիւնը ուսերէն անջատ կերպով կը տեսնուի:
250	»	»
		Կը տեսնուին փայլուն կոճակները:
150	»	»
		Աչքերու գիծերը կը տեսնուին:
70	»	»
		Երկու աչքերը իրարմէ ծանօթ հեռաւորութեամբ կը տեսնուին:

**Ֆրանս. քարգմ.\*\*\***

## Գ Ե Ղ Ե Յ Ի Կ Ե Օ Ս Ք Ե Ր

«Աշխատութիւնը» մայրն է մարդկային երջանկութեան, իսկ «Ժուլութիւնը» թշուառութեան:

\* \*

«Խնայողութիւնը» կարելի է նկատել խոհեմութեան դուստրը, չափաւորութեան քոյրը, եւ ծնողքը՝ անհատական անկախութեան:


\* \*

«Կծծի» մը կը հարստանայ աղքատ երեւնալով, «շուայլ» մը կ'աղքատանայ հարուստ երեւնալով:

\* \*

Ան որ «շուայլ» է շուտով պիտի աղքատանայ, եւ աղքատութիւնը զինքը պիտի ստրկացնէ եւ անբարոյացնէ.

## ԵՐԲ ՓԱԽՉՈՂ ԵՉԻ ՄԸ ՀԵՏ ԴԵՄ ԱՌ ԴԵՄ ԷՔ



Անխոհեմութիւն է անցնիլ առանց կարեւոր պատճառի այն արօտատեղիներէն ուր եզեր կ'արածեն:

Կարմիր գոյնը, հագուստները, հովանոցները, մասնաւորապէս այս կենդանիներուն ուշադրութիւնը կը հրաւիրեն և զանոնք կ'ըմբոստացնեն:

Եթէ այս կենդանիներէն մին յարձակի ձեր վրայ, մի' ջանաք փախչիլ ինչ որ ամէնէն աւելի վտանգաւոր միջոցն է:

Կենդանիին հետ դէմ առ դէմ մնացէք և պիտի տեսնէք որ շատ յաճախ ան ձեզի մէկ քանի քայլ մնացած պիտի կենայ: Անոր գլխուն նետեցէք հողի կոշտ մը, քար մը, թաշկինակ մը (կարմիր չըլլայ) և այս կերպով ան գրեթէ պիտի փախչի արագօրէն:

Եթէ ամէն սպասումի հակառակ, կենդանին դարձեալ վերանիդ գալ շարունակէ՝ պաղարիւնութիւննիդ մի կորսընցնէք, երբ շատ մօտեցած է ձեզի՝ կողմնակի ճարտար ստուամով մը (շաշտրքիս) ազատիլ ջանացէք:

Պատսպարան անկիւն մը գտէք միշտ առանց երբեք կռնակ ցոյց տալու և վազելու:

## Գ Ե Ղ Ե Յ Ի Կ Խ Օ Ս Ք Ե Ր

Հոգի մը ազնուութեան կամ ստորնութեան համեմատ ճարպիկութիւնը կը դառնայ կ'ըլլայ ձիրք կամ թերութիւն:

Լաւ է արժարժել խնդիր մը առանց որոշում մը տալու, քան թէ որոշումը տալ՝ առանց զայն արժարժելու:

## ԱՐԱՏՆԵՐԸ ՀԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Նախ եւ առաջ հագուսները բոբուել եւ խոզանակով: Բնաւ կերպասին մագերուն պառ. կամ կողմին հակառակ չի խոզանակել: Այսպէսով կերպասին արասները որոսակի կ'երեւին, որոնք հետեւեալ կերպով կը հանեմ:

Մակերիտային, արտաները (շաքար արզանակ, հաւկիթ եւ այլն):	1. Գաղջ ջուր: 2. Marseille օճառով զաղջ ջուր: 3. Ապա խոզանակել այդ լուծոյթը կերպասին ա. բառին վրայ:
Ճարպի արտաները:	Հանքային essence .ը. պեղզին
Ճարպի հինցած և օքցճե եղած արտաները:	Alcool Concentré, ապա պեղզին
Իւղաներկի արտաներ:	Essence de Térébenthine
Իւղաներկի հինցած արտաներ:	Alcool concentré և ապա Essence de Térébenthine
Գինի և կարմիր պտուղներու արտաներ:	Բանամայի փայտի լուծոյթ

Ճերմակ բուրդի վրայ արատներ  
(բուրդի բաճկոնի, ֆանէլա եւ այլնի)

Ծծումբի շողի

Արիւնի և մեղանի արատներ

Քրթնջուկի (oseille) աղ փոշխացած, լիմոնի ջուր

Բրտինքի հինցած արատներ

Acide Oxalique

ԾԱՆՅԹ.— Արատ ունեցող հագուստը տարածել սեղանի մը վրայ, արատ ունեցող մասին տակ զետեղել ճերմակ լաթի կտոր մը բանի մը անգամ ծալուած վիճակի մէջ: Արատը շփել սարճզի մը միջոցաւ՝ որ թափառած ըլլայ վերը յիշուած լուծոյթներէն պէտք եղածին մէջ: Ապա կերպասին լուծոյթով թրջած մասը, այսինքն արատը եւ անոր շրջակայքը ճերմակ լաթով մը սրբել: Այսպէսով արատը պիտի անհետի, անոր աղտը եւ գոյնը պիտի անցնին անոր տակ գետեղուած ճերմակ կտորին վրայ:

Պէտք եղած պարագային այս եղած գործողութիւնը կրննել բանի մը անգամ, վերոգրեալ բոլոր լուծոյթները թուշող կտգեր կ'արտագրեն, որոնք զգիւու ցաւ կը պատճառեն եւ այրելի են այս պատճառաւ լաւ է որ ցերեկատնն եւ բաց օդի մէջ կրակէ եւ լուցկիէ հեռու ըլլան գործողութիւնները:

Ֆրանս. բարզմ. \*\*\*

ՕՂԸ ԳՈՒՇԱԿԵԼՈՒ ԶԱՄԱՐ

Պիտի ԸԼԼՈՂ	Երկիրը	Ամպերը	Հովը	Կենդանիները
Գեղեցիկ օդ	Պարձառ կապույտ, Մայրամուտը՝ վարդագույն, առաօտեան յառակ մեխրադույն, թեթև մեղ, չողջողուն աստղեր:	Թեթև ու բարձր, ակփի ձեւով, ճերմակ գոյնով, թափանցիկ:	Արեւելեան կամ հիւսիսային թեթև:	Ծիծեռն ա կնակն և իր շատ բարձրէն կը թռչին, ճարտները կ'երգեն, գորտերը ճահիճները խորը կը մնան:
Անձրև	Առաօտեան կարմիր, թանձր և բարձր մեղ, իրիկուան գեղնորակ, կաթնագույն աստղեր լուսին չափը լուսաւոր շրջանակ մը:	Մեծ և սև ամպերու միանուագ ծուէններ որոնք հարկընեն արագորէն վեր կը բարձրանան:	Արեւմտեան կամ Հարաւ - Արեւմտեան:	Ծիծեռնակները շատ ցածէն, գրեթէ գետնին քաշուով կը թռչին, թռչունները մուր և խառվեալ լողորկ կը ճիչիը կը ճաննեն և կը քաշուին, գորտերը ճահիճներուն երես կ'ելլեն:

Պիտի ըլլալ	Երկիւրը	Անգերը	Հովը	Կենդանիները
Հով	Կապոյտ սև կամ նա- ւընջագոյն:	Ծանր և խիտ:	Սաստիկ և ընդ- հատ սուլումներ տեղի կ'ունեն- նան: սոսկալի մրրիկներէ քա- նի մը ժամ ա- ռաջ:	Աբոտավայրերուն մէջ արածող արջառները կը հաւաքուին պա- տրպարուող ան- կիւններ:
Փոփոխում	Մայրամուտին՝ գոր- շագոյն և կարմիր ամպերու շարաջա- րումով:	Հով և փայլուն անգերու կուտա- կում մը:	Հովը յանկար- ծակաճ և ընդ- հատուող փչում- ներ:	խտավաթիւն և ջգայնատու թիւն:

## ԵՐԲ ԱՅՆ ՏԵՍԱԿ ՏԵՂ ՄԸՆ ԷՔ ՈՒՐ ԱՐԴՈՒԿ ԶԿԱՅ

Եւ որ սակայն հագուստնիդ չափազանց ծաւրեր ունի՝  
բնաւ մի՛ յուսահատիք հետեւեցէք այն միջոցին որուն կը  
դիմեն Ֆրանսացի սկաուտները:

Ամիջապէս շիշ մը գտէք և անոր մէջ լեցուցէք. չափազանց տաք. գրեթէ եռացած ջուր և ձեր հագուստն ալ եռացնելով դրէք հարթ սեղ մը և այդ տաք ջուրը պարունակող շիշը լաւ մը խցելէ վերջ արդուկի դրութեամբ քսեցէք կամ գլտորցուցէք հագուստին վրայ և պիտի տեսնէք որ լաւ յաջողած արդուկ մը և արդուկուած հագուստ մը պիտի ունենանք: Ափրիկէի Զուաֆները իրենց պետերուն հագուստները այս կերպով նոյն իսկ կ'օսլային:

Ֆրանս. քարգմ. \*\*\*



## ԵՐԲ ՄԷԿ ԲԱՆԻ ԺԱՄ ՊԻՏԻ ԲԱԼԷՔ

Զիր մօտ ունեցէք լաւ զմեղի մը, 6 հատ զնդասեղ, 6 հատ անգլիական ասեղ, տուփ մը լուցկի մէկ քանի կոճակ, ազոաւուկ և ասեղ դերձան: Մի՛ մոռնաք նաև զանազան մեծութեամբ և հաստատութեամբ չուաններ, չուանը անհրաժեշտ է պզտիկ թէ մեծ ճամբորդութեանց մէջ:



ՕԳՏԱԿԱՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

## Ե Ր Կ Ա Թ Ը

Եգիպտացիք երկաթը երեք հազար տարի առաջ գիտէին Քրիստոսէ առաջ 1800 թուականին, նորէն Եգիպտոսի մէջ առաջին անգամ ըլլալով երկրագործական գործիքներ և իրրև զէնք կը գործածուէր:

\*  
\* \*

## Կ Ա Ռ Ք Ե Ր Ը

Կառքերը Քրիստոսէ 2000 տարի առաջուրնէ սկսեալ Եգիպտացիք ու Ասորիք սկսած էին գործածել: Իսկ Եւրոպացիները այս թուականէն հազար տարի վերջ այսինքն Քրիստոսէ 1000 տարի առաջ կառք գործածելու սկսան:

\*  
\* \*

## Ա Ռ Ա Ջ Ի Ն Ք Ա Ր Տ Է Ս Ը

Առաջին քարտէսը Քրիստոսէ 1370 տարի առաջ Եգիպտոսի մէջ երրորդ փարաւոն Ռեհսես և կամ Սեզ Վեսրիսի ժամանակ մագաղաթի վրայ շինուած էր. այս քարտէսը կը ցուցնէր «Պէլէմ» գտնուող ոսկիի հանքերը:

\*  
\* \*

## Ե Ր Կ Տ Ո Ղ Ը

Երկաթը Քրիստոսէ 2633 տարի առաջ Չինաստանի մէջ հնարուած է ըստ 1302 թուականին (Ն. Ք.) «Փիեոսա» անունով Իտալացի նաւաստիի մը կողմէ Եւրոպա փոխադրուած է:

\*  
\* \*



## Հ Ե Ր Ա Ք Լ Ի Տ Ի Մ Ի Տ Ք Ը

Քրիստոսէ 325 տարի առաջ Հերաքլիտ, Երկրին ինքն իր վրայ դառնալու կարծիքը յայտնեց :

## Գ Ի Ր Ք Ի Ն Թ Ո Ւ Ա Կ Ա Ն Ը

Եգիպտացիները Քրիստոսէ 1800 տարի առաջ «Բորչոմէններուն» գրած նամակները գլանած և վիճակի մէջ կը պահէին: Թուղթերը գրքի ձեւով պրակ առ պրակ կազմողները Իտալացիներն են և այս փոփոխութիւնը Քրիստոսէ 400 տարիին կը հանդիպի :

Առաջին անգամ հովանոցները Երեւցան Պալթիմօրի փողոցներուն մէջ 1772ին :

Իուլանտայի մէջ 107 հրաբխային մեծ գաղաթներ կան ու անհամար ալ փոքրեր :

Գալիսիոյ աղի հանքերուն մէջ մեծ փապուղիներ ու սենեակներ շինուած են 30 մղոն երկայնութեամբ. հանգագործներուն շատերը նկուղներուն մէջ կը բնակին և շատ քիչ անգամ դուրս կ'ելլեն :

Հնդկաստանի մէջ 100է աւելի լեզուներ կը խօսուին :

Ժան Վան Տիգ անունով նկարիչ մը առաջին անգամ իւզաներկը հնարեց 1395ին :

Երկրախոյզներէն ունանք կ'ըսեն թէ Ալպեան լեռներուն շարունակութիւնը ծովու մէջն է :

—

Նիւ Ճըրսըրի մէջ վիթխարի ժամացոյց մը կայ որուն սլաքները թօնօ մը կը կշռեն :

—

Փրանսացի երկրախոյզ մը Ասորեստանի քարայրի մը մէջ, գտած է շերտ մը չոր հաց ու կը կարծէ թէ 2400 տարուան է :

—

Եէյլ քօլէճը հիմնուած է 1701ին :

—

Ամենավերջի վառելու կազը որ գտնուած է 500 միլիոն մոմի լոյս ունի ու կը տեսնուի 127 մղոն հեռաւորութենէն :

—

Աստղագէտները միջոց մը գտած են երկնային բոլոր մարմիններու ջերմութիւնը չափելու :

—

Աշխարհիս մէջ մօտաւորապէս 30 միլիոն ինքնաշարժ կը գտնուի. ասոնց կէսը «Ford» են :

—

Կը կարծուի թէ Չինացիները Քրիստոսէ 200 տարի առաջ հրթիռը գտած են :

Միացեալ Նահանգները իւրաքանչիւր տարի մօտաւորապէս 2,000,000,000 տոլար կորուստ կ'ընեն զանազան միջատներէ և որդերէ:

—

Աշխարհիս ամենամեծ Շթաքարային հաստատութիւնը Բաբելոնի աշտարակն է:

—

Երկրախոյզները Վէլսիւնայի աւերակներուն մէջ ջրհան մը գտած են կը կարծուի թէ 2000 տարուան է:

—

Վերջերս Ամստերտամէն Բարիզ օդանաւով ձի մը տարուած է:



### Գ Ե Ղ Ե Յ Ի Կ Խ Օ Ս Ք Ե Ր

Ձիկայ աւելի պերճախօս քարոզ մը, քան օրինակը:

Երջանկութիւնը չի կայանար շատ ունենալուն, այլ շատ սիրելուն եւ յուսալուն մէջ:

Նախատինքները զէնքերն են անիրաւ եղողներուն:


Միջակ վշտերը պերճախօս, իսկ մեծերը լուռ կ'ըլլան:

Առաքինութիւնը իր յազթութիւնը կը շահի իր հալածանքներով:

ձշմարտութենէ զատ կատարեալ բան չիկայ:

Գաղտնապահութիւնը կ'արգիլէ հարցուփորձելը, իսկ փափկանկատութիւնը կ'արգիլէ նոյն իսկ գուշակել:

Անձնական հպարտութիւն մի' ունենար եւ ահա չէր գանգատելր այլոց հպարտութենէն:





Ա. Շխարահչյակի Հայ Ճամբի  
Թ. Ա. Հ. Ր. Ա. Պ. Է. Յ.  
Ստորև կ'երևի Ճամբիին ձեռագիրը

## ՖԱԲՐԻՆ ՎԵՐՋԻՆ ՓՈՐՁԸ

---

Հայ նշանաւոր Ֆաբրի Թահրա պէյ իր վերջին փորձերը կատարելու համար Ամերիկա հրաւիրուած է:

Սոյն ուղեւորութիւնը որ ամիսէ մը պիտի կատարէ՝ մեծ հետաքրքրութիւն յառաջ բերած է Ամերիկայի գիտական եւ ժողովրդային խաւերուն մէջ:

Ֆաբրը ցարդ չի կատարած իր մէկ փորձը պիտի ընէ հոն՝ Յ ամիսի չափ արգելափակուելով ապակեայ սենեակի մը մէջ:

Սոյն տեղեկութիւնները մեզ կը հաղորդուին իր եղբոր-մէն՝ այժմ ի Բարիզ Ֆաբրին մօտ, որ ուղարկած էր նաեւ Ֆաբրին վերջին լուսանկարը կ'երեւի մեր նախորդ էջին մէջ:

ԽՐԱՍԳՐՈՒԹԻՒՆ

---

## Գ Ե Ղ Ե Յ Ի Կ Խ Ո Ս Ք Ե Ր

Նախընթաց չարիքէ մը խուսափելու համար, կատարուած երկրորդ չարիքը չէ կարելի բարիք համարել:

---


Մահը ազատարարն է չարին, բժիշկը անբուժելիին, եւ մխիթարիչը անմխիթարին:



ՊԱՐԵՍԻ ԱՆՈՒ

ՏԱՐԵԱԿԱՆ

ԲԵՐԻՆ



# ԴՐԱՄՆ ՈՒ ԿՍԵՍԻՐԸ

Դրամը իր այսօրուան դերին մէջ կարելի է նկատել առանցքը մարդկային ամէն գործունէութեան: Քանի գոյութիւն ունի տնտեսական արդի վիճակը ամբողջ աշխարհի մէջ, չկա՛յ դրամականէն լաւ դրութիւն մը, պահելու համար հաւասարակշռութիւնը նոյն այդ տնտեսական գետնին վրայ:

Մարդկային ընկերութեան աշխատանքի կազմակերպութիւնը, իր նախնական ձեւէն մինչև այսօրուան աշխատանքի բաժանումով ժամանակին համեմատ շատ բնական և լաւագոյնը եղած է: Մարդը անով է որ կրնայ առաւել կամ նուազ չափով գոհացում տալ իր պէտքերուն, կ'արտադրէ այն բանը և այն չափով միայն, որուն պէտք ունի: Ահա հոս դրամն է որ կը խողայ բարերար դեր մը, դիւրացնելով փոխանակութիւնը այդ արտադրութիւններուն: Եւ կարելի է երեւակայել որ առանց դրամի միջնորդութեան մատուցում և պահանջ կարենան պահել իրենց համեմատութիւնը՝ մանաւանդ առօրեայ փոխանակութեան մէջ:

Թոյլ մարդու գործ է ուրեմն արհամարհել դրամը, ինչպէս կ'ընեն կարգ մը շատ նրբացած հողիներ: Արհամարհել դրամը, կը նշանակէ արհամարել աշխատութիւնն ու արտադրութիւնը. վասնզի դրամը առանձինն ոչինչ կ'արժէ և կերպով մը ան չափանիշն է կատարուած աշխատութեան և արտադրութեան, այսինքն բուն հարստութեան: Դժբախտ չեղա՞ն Սպանիացիք երբ չաշխատեցան և չարտադրեցին, աչքերնին չլացած իրենց ոսկիներէն:



Մնաց որ անպայման նիւթը չէ որ կը ներկայացնէ դը-  
րամը, վարկն ալ պատուական դրամ մըն է և աւելի կրնայ  
բարձրացնել և բացատրել դրամին նշանակութիւնը: Այն կը  
ներկայացնէ մարդուն ո՛չ միայն նիւթական, այլ և բարո-  
յական կարողութիւնը: Ինչո՞ւ այս պարագան կ'անտեսեն,  
ամէն բանի մէջ բարոյական փնտոող և նիւթը ատող պատ-  
ւելիները:

Հեռո՞ւ ինձմէ կարծելը սակայն թէ, պէտք է պաշտել  
դրամը կուրորէն, զուրկ մարդկային ամէն զգացումէ: Եր-  
բե՛ք: Մարդ պէտք է շահի դրամը, զայն իր փափաքներուն,  
իր ըմբռնած գաղափարական կեանքին գերին ընելու և ոչ  
թէ ինք անոր գերին դառնալու համար: Վայ անոր որ կը  
պարտուի անկէ: Այս պարագային մարդը ուրիշ բան չէ եթէ  
ոչ անիմաստ նիւթի մը ջղայնոտ մէկ պահապանը որ կուր-  
ցուցած է իր մէջ ապրելու լաւագոյն գաղափարը:

Դրամէն պարտուել, ապրիլ միմիայն դրամով և դրամին  
համար, կը նշանակէ ոչնչացում: Իսկ արդիւնաւոր և լաւա-  
գոյն կեանք մը ունենալու համար, ամէն բանէ առաջ մարդ  
պէտք է իր ոյժերը՝ ըլլան ասոնք նիւթական թէ բարոյա-  
կան, լաւ գործածել գիտնայ, տնտեսագիտութիւնն է լաւա-  
գոյն կեանքի մը միակ միջոցը, բայց մեծ և ազնիւ նպա-  
տակի և բարձրացումի՝ ծառայող տնտեսագիտութիւնը և ոչ  
թէ այն որ լեցուն է անիմաստ խնայողութիւններով:

Ի՞նչ յանցանք ունի դրամը մարդոց դժբախտութեան  
մէջ: Չեն ամչնար մարդիկ երբ մեզի կը դանդափն անքան  
լիւի մը մասին: Մարդկային ընկերութեան տնտեսական զրժ-  
բախտութիւնը շատ բնական է: Այն արդիւնք է, պարտա-  
դրուած այն ձեւին որով գրուած են ընկերութեան հիմերը:  
Եւ եթէ պատահի, որ օր մը բարեխաւուի ան, դարձեալ  
բնական կերպով մը և մարդոցմէ վեր ոյժով մըն է որ պիտի  
ըլլայ: Ընկերային կեանքին մէջ ոչինչ կայ փոփոխելի. հոն  
ամէն երեւոյթ ենթակայ է հանդարտ բնաշրջումի: Մերթ ընդ  
մերթ պատահող յեղաշրջումներն ալ ուրիշ բան չեն եթէ ոչ

երկար ատենէ ի վեր փնտուռած փարոսի մը խաբուսիկ կամ իրական երեւումը :

Երեւոյթները մեծ դեր ունին մարդոց կեանքին մէջ : Մարդիկ առաւելագէս պարտադրուած են գործել երեւոյթներու ազդեցութեան տակ : Հարստութիւն, դրամ կը նշանակէ սպրեկը իրաւունք : Իրաւ ալ հարստութեան ազդեցութիւնը այնքան մեծ է մարդուն վրայ որ նոյն իսկ կարող է փոխել անոր նկարագիրը : Ինչ բանի արդիւնք են ամէն օր պատահող այնքան գողութիւններն ու անիրաւութիւնները, նոյն իսկ պէտք է ըսել պատերազմները : Այդ բոլորին պատճառը կեանքի պահանջն է որ կը մղէ մարդիկը տաս փարա աւելի, հետեւաբար՝ քիչ մը աւելի լաւ կեանք մը ունենալու. եւ ս՞ով է ըսեր թէ անիրաւ են մարդիկ. այս պահանջները, լաւ սպրիլը, քիչ մը աւելի շատ բան տեսնալը կեանքի էն կարեւոր պայմանն է. և այդ բանը մարդկային ընկերութեան արդի կազմակերպութեան մէջ մի միայն հարստութեամբ է որ կարելի է ձեռք բերել : Ինչո՞ւ չփնտուռուրեմն դրամը՝ որ կերպով մը այդ հարստութեան ներկայացուցիչն է : Իրամը փնտուռը և անոր վրայ գուրգուրացողը պարզ մետաղը չէ որ կը սիրէ, այլ, անոր շնորհիւ ունենալիք վայելքը, յառաջագիմութիւնը հետեւաբար և կեանքը :

ԿԱՐՊՈՍ ԳԱԶՆՐԵԱՆ



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՍՆԲԸ

Դէպի Հայաստան ներգաղթը կապուած է երկրագործութեան և ճարտարարուեստի վրայ: Արդարեւ երկրագործութիւնը առանձինն չէր կրնար ապրեցնել Հայաստանի և արտասահմանէն հոն գաղթելու վրայ եղող 1,200,000 ժողովուրդները: Երկրին բնական հարստութիւնները սկսած են օգտագործուիլ: Ասոնցմէ են պղնձի հանքերը: Պատերազմէն առաջ այս հանքերուն արտադրած պղինձն էր 13,088,000 քիլօ: Սկսած գործել Ղափանի պղնձի գործարանը: Մեծ տեղ կը գրաւէ բամպակը որ կրկին հունձ տուաւ Վամպակին շնորհիւ կը ծնին իւղի, օճառի ճարտարարուեստները: Մանածի գործարանը օրական 7,500 կանգուն կտաւ կ'արտադրէ:

Իսկ օճառինն ալ 4500 փ: Այգեգործութիւնը ոչ այնքան լաւ արդիւնք տուաւ: Ծխախոտին մշակումին զարկ տուաւ Թրքահայ գաղութը: Տասնեակ գործադործարաններ հաստատուած են: Շերամարուծութիւնն ալ հետզհետէ կը տարածուի: Մետաքսի, մեղուաբուծութիւն, պողամշակութեան, անասնաբուծութիւն և ձկնորսութեան գործերն ալ բաւական կը յառաջանան: Կտթնտնտեսութիւնն ալ բաւական կը յառաջանայ, պանիրի նոր գործարաններ հիմնուած են:

Սակայն վերջին աղէտը իր սրոյ և կարեւորագոյն վընասները պատճառեց նաև Հայաստանի տնտեսական կեանքին մէջ:

\*\*\*



ՊԱՐԱՆԻ ԱՆՐՈՒ

Զ ՈՒՆՐՃԱՆԻՐԻ

ԲԱԺԻՆ



# ԶՈՒՔՐՃԱԼԻՐ

---

Գիտենք թէ Կասքոնցիները շատ կը չափազանցեն իրենց խօսքերուն մէջ: Օր մը երեք Կասքոնցի նկարիչներու միջև հետեւեալ խօսակցութիւնը տեղի կ'ունենար:

Ա. Նկարիչ.— Տախտակի մը, մարմարի այնքան նման գոյն մը տուի, որ զայն ջուրին մէջ ձգած ատենս տախտակը անմիջապէս տակը դնաց:

Բ. Նկարիչ.— Հիւսիսային Սառուցեալ ովկիանոսին նրկարը այնքան վարպետօրէն գծեցի, որ երբ ջերմաչափը վրան դրի՝ անմիջապէս զեռօհն հինգ աստիճան վար իջաւ:

Գ. Նկարիչը.— Հարուստի մը պատկերը այնքան ճշգրիտ կերպով գծեցի, որ այս նմանութեան պատճառաւ պատկերը չաբաթը երեք անգամ ածիլելու ստիպուեցայ:

---

## ՄԱՀՈՒԱՆ ԺԱՄԸ ՉՄՕՏԵՅԱԾ ՄԱՐԴ ԶԻ ՄԵՌՆԻՐ

---

Յրանսացի մը անձնասպան ըլլալ կ'որոշէ, սակայն կ'ուզէ առանց հոգին ցաւցնելու մեռնիլ, եթէ թոյն խմէ՝ ազիքները պիտի գալարուին, եթէ դանակ մը խօթէ, ցաւ պիտի զգայ, եթէ բերանը հրացան մը պարպէ, կարելի է անմիջապէս չմեռնի: Ի՞նչ ընէ ... եթէ գետը նետուի անմի-

ջապէս պիտի չխեղդուի և նոյնիսկ կարելի է մէկու մը կողմէ ազատուի :

Վերջապէս, կ'որոշէ երեք ձեւով անձնաստան ըլլալ: Զօ-  
ղաւոր թոյն մը; ատրճանակ մը և հաստատուն չուան մը  
գտնելով կ'երթայ Սեն դետին եղերքը. հոն չուանը վիզը  
կ'անցնէ, թոյնը կը խմէ, յետոյ ինքզինքը օդին մէջ թող  
տալով ատրճանակը կը պարպէ: Կ'երեւի թէ մարդուկին  
մահուան ժամը չէր մօտեցած, որովհետև գնդակը կ'երթայ  
չուանը կը փրցնէ և մարգը կը գլորուի Սէն դետը որուն  
ազտոտ ջուրերը զինքը փոխելու կը ստիպեն: Շուրջէն գայն  
տեանողները անմիջապէս օգնութեան փութալով կ'ազատեն:  
Ատոր ի՞նչ պէտք է ըսել, երբեմն մարդ շատ մը վտանգներէ  
կ'ազատի և սակայն անկարեւոր դէպք մը անոր մահուան  
պատճառ կրնայ ըլլալ:

## ՄԻԹԷ ՌԻՍՈՒՅԻՉԸ ԿԸ ԽԱՐՈՒԻ



### ՊԵՏՐՈՍԻՆ (\*)

Գիւղը մասամբ պարպուած ըլլալով, վարժարանին ա-  
չակերտութեան թիւը հազիւ 90—100ի կը հասնէր: Ասոնց-  
մէ արդէն 50ը մանկապարտէզի մաս կը կազմէին. իսկ մնաց-  
եալները կը բաժնուէին երեք դասարաններու. տարր. Ա.  
և Բ. և միջին Ա.: Այս վերջնոյն մէջ կը գտնուէի քանի մը  
դաղափարակից և չարածճի ընկերներով:

Վարժարանի պիւտճէն հազիւ հազ կ'ապրեցնէր երկու-

(\*) Պրն. Կարագեան՝ որ այժմ Խորհրդային Հայաստան կը գտնուի,  
գրական հակում ունեցող պատանի մըն է: Վերի գրութիւնը իր ընկեր-  
ներէն Պետրոս Ֆրէնկեանի յուշատետրին մէջ գրած է որ հաճոյքով սի-  
րով տրամադրեց մեր Տարեցոյցին համար:

ուսուցիչներ, որոնց կարողութիւնները իրար բերելով թե-  
րեւս կարենայինք ստանալ Մարգար սայի մը :

Ուսուցիչներէն մէկը ձերունի մըն էր, որուն համար  
կ'ըսէին թէ ատենօք քաջ և կարող որսորդ մըն էր. իր տղա-  
յութեան ատեն «շեմօն»ի կեղեւով իսկ թռչուն կը զարնէ  
եղեր : Այս մարդը խիստ սրամիտ ըլլալով՝ սովրած էր ան-  
գիր թուարանութիւն, յետոյ որսորդութիւնը շատ սիրելուն  
պատճառաւ սովրած էր նաև Ազգ. պատմութիւնը : Չէ՞ որ  
մեր նախահայրերը և մասնաւորաբար Հայկ և Արամ նահա-  
պետները խիստ վարժ են եղեր նետաձգութեան մէջ, չէ՞ որ  
Հայկի արձակած նետը Բէլի զրահապատ կուրծքը ծակե՛ր,  
կռնակէն դուրս ելեր և այնպէս մը ժայռը մխուեր է որ  
ցարդ կարելի չէ եղեր դուրս քաշել զայն :

Այս ձերունին կը հսկէր ընդհանուր աշակերտաց կար-  
գապահութեան : Մանկապարտէզը և նախակրթարանը մէկ  
յարկի վրայ գտնուող և դուռով մը հազորդակցող երկու սը-  
րահներու մէջ տեղաւորուած էին, այնպէս որ խեղճ ուսու-  
ցիչը դատապարտուած էր մինչև իրիկուն մէկ սրահէն միւսը  
երթեւեկել, չարաճճիները ձեռքի հաստ փայտովը պատժելով  
միանգամայն : Երիտասարդութեան ժամանակ որսի ետեւէ  
վազելը չէր բաւեր կարծես՝ ձերութեանն ալ մէկ սրահէն  
միւսը ձեմելով չարաճճիներ սրաւու դատապարտուած էր  
խեղճը :

Միւսը՝ որ վարժարանին տեսութիւնը կը վարէր, Պեր-  
պերեանի աշակերտած կայտառ երիտասարդ մըն էր : Յաջոր-  
դաբար նախակրթարանի երեք դասարաններուն կը դասա-  
խօսէր իր մասնաւոր սենեակին մէջ, ուրկէ ձերուկին օգ-  
նութեան հասնելու համար միայն վար կ'իջնէր. երբ քանի  
մը անառակներ խօսք մէկ ըրած խեղճ ուսուցիչը կը խաղ-  
ցընէին :



Գարնան գեղեցիկ օր մըն էր: Տղաքը կէսօրուան ճաշերնին ըրած՝ հետզհետէ վարժարանին բակը կը հաւաքուէին իրար գալով խաղ մը կազմակերպելու համար: Զանգակը հնչելու շատ չէր մնացած երբ «Քարքան Եօրկօ»ն (այսպէս կ'անուանէինք մեր ընկերներէն մին՝ որ իր գլխարկով յոյն նաւապետի մը կը նմանէր) երեւցաւ և ըսաւ:

— Օ՛հ տղաք, մեր թուժը անանկ հասեր է ս'ր...

— Ազէ՛կ, բայց հիմա զանդակը կը զարնէ, ըսաւ մեզմէ մէկը: Քարքանը թուժին հասնութիւնն ու անուշութիւնը նկարագրեց, տակաւին ատեն կայ եւայլն ըսելով, համոզեց մեզ վերջապէս և իրենց պարտէզը տարաւ, որ գպրոցին շատ մօտ էր:

Հինգ հոգի էինք, քարքանը, Մոսօն, Շեյխ Մըկըրը, Նասրաւը և ես այլ անուամբ Աքօսօր...

Մոսօն իսկոյն ծառը ելլելով սկսաւ ուժգնօրէն թօթել: Գետին նստանք ուտելու համար, և ահա զանգակը հընչեց...

Ո՞ր աշխատասէրը կամ ո՞ր ուշիմը այդ թուժի գաշտը լըքելով գպրոց կը վազէ՛ր... մեր մէջ կա՞ր այդպիսի մէկը:

— Բնաւ մի վախնաք տղա՛ք — քաջալերեց Շեյխ Մըկըրը որ իսկապէս չէյս մը ըլլալու յատկութիւնները ունէր. անգամ մը ուտենք և վերջը ուշանալուս համար պատրուակ մը կը գտնենք: Ամենքս ալ համակերպելով սկսանք ուտել հասո՛ւնցած թուժերը, անհանգիստ ըլլալու աստիճան, միեւնոյն ատեն իւրաքանչիւրս մէկ մէկ սուտ որոնելով ուսուցչին հրամանելու համար:

— Տղա՛ք, ըսի, գեղեցիկ գաղափար մը յղացած ըլլալու հաւակնութեամբ, «Տէր հայրը եկեղեցիին համար ծաղիկ հաւաքելու ղրկեց մեզ», կ'ըսենք:

— Այս չորեքշաբթի մեզ խոստովանցնելու պիտի գայ տէր հայրը աւելցուց Մոսօն ծառին դադաթէն, կրնայ ըլլալ որ հարցնէ և խայտառակուինք:

Իւարթաւն Եօրիօն, որ մինչև այդ ատեն ուստիէ չէր յազեցած .

— Ի՞նչ կեցեր պարապ բաներով կ'ըրազիք, յարեց—այդ տղան ասանկ պարագաներու մէջ ելք մը գտնելու յատկութիւնը ունէր. — Հիմակ խոշոր պնակ մը կը լեցնենք և Պրն. Յովհաննէսին ներկայացնելով «Ձեզի համար թուր ժողովելու գացինք», կ'ըսենք: Ամենքս ալ ուրախութեամբ ընդունեցինք այս պոչաւոր սուտը, և պնակ մը ձեռքերնիս դէպի վարժարան ուղղուեցանք:

Երբ դուռը հասանք՝ սրտերնիս ուժգնօրէն տրոփել սկսան. . . կատարուելիք պարտականութիւն մը կար, զոր մեզմէ ոչ ոք կ'ուզէր ստանձնել: Այդ պարտականութիւնն էր պնակը ուսուցչին ներկայացնելը:

Երկար խորհրդակցութենէ վերջ, այդ նուիրական պարտականութիւնը ինձի վիճակեցաւ. . . : Թութի պնակը ձեռքս տղոց առաջ անցած, վարժարանի դռնէն ներս մտայ: Սրահին դուռը հասանք ուր ահա ոստիկան զինուորի մը նման առաջնիս ցցուեցաւ Պրն. Յովհաննէս, ձեռքը հաստ փայտը բռնած կը ժպտէր.՝ ո՛վ զարմանք, մոռցայ թութը մատուցանելու առթիւ ըսելիքներս. . . սակայն ուսուցչիչս օգնութեան հասաւ:

— Կարօ՛, այդ թութը սենեակս տար որպէսզի եաքը ուստեմ: Շուտ եկուր որպէսզի դուն ալ ընկերներուդ հետ քու նուէրդ ստանաս:

Աւելորդ է ըսել թէ՛ այդ նուէրը ձեռքի հաստ փայտին հարուածը պիտի ըլլար:

Խորամանկ ուսուցչիչը, զրան առջև մեր ունեցած խօսակցութիւնը լսած էր:

ԿԱՐԱՊԵՏ Պ. ԿԱՐԱԳԵԱՆ



## ԴՊՐՈՑԻՆ ՄԷԶ

## Ա. Քերականութեան դասին

Աւել.— Պարոն, ո՞ր գիրերը կը կոչուին բաղաձայն :

Ուս.— Այն գիրերը որ ձայն չունին :

Աւել.— Հապա ինչպէ՞ս կը կարգացուին :

Ուս.— Զայնաւոր գիրերու օժանդակութեամբ :

Աւել.— Շնորհակալ եմ պարոն :

## Բ. Երաժշտութեան դասին ձայներու ֆևևութիւն

Ուս.— Սուրէ՛ն, ոտքի ել, հիմա արտասանէ do, ré, mi, fa, sol, la, si, do... Շա՛տ աղէկ լաւ ձայն ունիս ձայնաւոր ես :

Ուս.— Արչակ, դո՛ւն ալ ոտքի ել, հիմա արտասանէ do, ré, ... օ՛յ, օ՛յ, օ՛յ, կը բաւէ հստէ ձայն չունիս քաղաձայն ես :

## Գ. Պասմութեան դասին

Ուս.— Արչա՛կ, դասի ել :

Արչ.— Ոտքի կ'ելլէ (դասը չէ սորված) :

Ուս.— Նաբօլէ՛ոն Պոնաբարթ, ո՞ր երկիրները դրաւեց, և որքան զո՞ն տուաւ :

Արչ.— (Լուռ է) :

Սուրէն.— (Յուշելով) Կերմանիա, Աւստ... ֆր...

Արչ.— Կերմանիա, Աւստրիա, Ռուսիա, Փոլոնիա :

Սուրէն.— Իտալիան մոռցար, ըսէ՛ քն կարեւորն է :

Ուս.— Աս ո՞ր անկարգն է որ պատմողին կ'ընկերանայ :

Սուրեն .— Ներեցէք պարոն, ես անկարգ չեմ ընդհակառակը կարգ ու սարգին բացարձակ կը հնազանդիմ:

Ուս .— Ա՛յգ է քու կանոնդ անպիտան:

Սուրեն .— Ներեցէ՛ք պարոն, քերականական կանոնին կը հետեւիմ տառաջիօրէն մեր քերականութեան ուսուցիչը ըստ որ բաղաձայն գիրերը, ձայնաւորներու ընկերակցութեամբ միայն կրնան գործածուիլ և ըստ երաժշտութեան ուսուցչին՝ քանի որ Արշակը բաղաձայն է՝ պէտք ունի ինծի պէս ձայնաւորի մը ընկերակցութեան կամ օգնութեան:

### Գ Ե Ղ Ե Յ Ի Կ Ե Օ Ս Ք Ե Ր

Թշուառութիւններ կան որոնց հանդէպ մարդս երջանիկ եղած ըլլալուն համար ամօթ կ'զգայ:

Հաճոյքները ցնորքներու վրայ միայն կրնան կայան դնել. երջանկութիւնը կը սիրէ հանգչիլ սակայն ճշմարտութեան վրայ:

Ամէն գոց դուռի ետին երեւակայութիւնը դրախտ մը կ'երագէ:

# ԱՆԱԿՆԿԱԼ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

## ՄԷԿ ԱՐԱՐՈՒԱԾ

### Ա Ն Ձ Ե Ր

Պրն.	Արևենակ	45	սարկիսև
Տիկ.	Աղաւնի	30	»
Օր.	Մառի (ապաստուհի)	20	»
	դռնապանուհի մը		

### Տ Ե Ս Ի Լ Ա.

Դէպքը տեղի կ'ունենայ Գառը-գիւղի հարաւ. արեւելքի կողմը տան մը մէջ:

Բաւական մեծիկ սենեակ մը, աջ կողմը 3-4 թիկնաթոռներ չարւած, դիմացը դռն մը, մէջտեղը խոշոր սեղան մը, գետինը գորգով ծածկուած, քովի կողմը պատուհան եւայլն:

Վարագոյրը բացուած պահուն՝ Տիկ. Աղաւնի նստած կ'ասեղնագործէ. յանկարծ դուրսէն պնակներ կոտորելու աղմուկ մը յառաջ կուգայ. և Մառի ձեռքերը բան մը բռնելու ձեւով բացած շուարուն ներս կը մտնէ:

Տկն. Աղաւնի. — (Բարկացած աթոռէն կ'ելլէ) Ի՞նչ է ինչ եղաւ նորէն:

Մառի. — (Ապուշ ապուշ) բան մը չեղաւ տիկին պնակները տարած ատենս ձեռքէս ինկան ու կոտորեցան:

Տկն. Աղաւնի. — (Աւելի բարձրաձայն) Ինչպէ՞ս պնակները կոտորեցիր ու դեռ բան մը չեղաւ կ'ըսես:

Մառի. — (Նոյն ձեւով) այո՛ տիկին պարոնին նոր առած պնակները:

Տկն. Աղաւնի.—(Մարելու պէս)՝Ա՛հ անպիտան այդ աղ-  
ւոր պնակները կտորեցիր այնպէս չէ՞, աչքերդ դոցեցիր ու  
սաքդ տեղ մը դարնելով ձեռքէդ ձգեցիր ու կտորեցիր:

Մառի.—(Աղաչական) կարելի՞ է տիկինն ես... պնակ-  
ները դիտմամբ կտորեմ...:

Տկն. Աղաւնի.— Դիմացս կեցեր և տակաւին կարելի է  
կ'ըսես, ապո՛ււշ, տակաւին ինծի կը հարցնես. եթէ քիչ մը ու-  
շադրութիւն ընէիր չէիր կտորէր. սակայն ո՞ւր է ուշադրու-  
թիւն ըսուածը քու քովդ... խելքդ ո՞ւր է... անպատճառ այդ  
պահուն նպարավաճառին աչակերտը կը մտածէիր... Այո՛...  
Այո՛... ինչպէս աղէկ միտքս ինկաւ, անպատճառ անոր  
վրայ կը մտածէիր, այդպէս չէ՞ պատասխան տո՛ւր:

Մառի.— Ե՞ս, տիկին ... նպատավաճառին աչակերտը ես  
մտածեմ:

Տկն. Աղաւնի.—Ո՛չ, դու չես այլ ես... ապուշ դուն ալ...  
գոնէ դրացիին աղջիկը ըսէ որպէսզի վայրուն բան մը ըսած  
ըլլաս... Ե՛ս, ըսելով յանցանքը իմ վրաս նետած կ'ըլլաս ...  
աս ու ան չեմ դիտեր... կտորած պնակներուդ զինը պիտի  
վճարես. ամէն մէկը քսան դրուշ է... տասը պնակդ կ'ընէ  
երկու սկի, ամսականէդ շատ աղէկ կրնամ կտրել. դուն ու-  
զածիդ չափ մուտայ ... վերջին օրերուս աղքատ ըլլալու  
ու վերջն ալ մուրալու աստիճանին հասներու պարտականու-  
թիւնը չունիմ... ինծի միլիոնատէ՞ր կարծեցիր որ կտորած  
պնակներուդ ու ինծի պատճառած ահագին վնասներուդ  
ձայն չհանես... ինչ որ ալ ըլլայ ամսագլխուն երկու սկի  
պիտի կտրեմ:

Մառի.— Երկո՛ւ սկի՛:

### Տ Ն Ս Ի Լ Ը.

Տ. Աղաւնի, Մառի եւ Արմենակ

Պրն. Արմենակ.— (Տկն. Աղաւնին Մառիի հետ վիճարանած  
պահուն, ձեռքը նամակներու ծրար մը բռնած ժպտերս ներս

կը մտնէ) Հոգ չէ Մառի, հոգ չէ, աղւորս, տիկինը այդ բաները կատակի համար կ'ըսէ... ամսագլխուն ոչ մէկ բան պիտի կտրուի, հասկցա՞ր ... կտրածը պնակ թող ըլլայ... ի՞նչ կարեւորութիւն ունի... :

Տկն. Աղաւնի.— (Սպաշած) Ընդհակառակը շատ կարեւորութիւն ունի մեզք չե՞ն այդ գեղեցիկ պնակներուն... :

Պրն. Արմենակ.— Այո՛ Մառի ամսագլխուն սուէ բան մը չպիտի կտրենք, ընդհակառակը այս օրուընէ սկսեալ ամսականդ հինգ ոսկի աւելցած է, հասկցա՞ր հողիս :

Մառի.— (Խնդայով) Իրա՞ւ, ճշմարիտ կը խօսի՞ք պրն. :

Տկն. Աղաւնի.— (Չայրացած) Ինծի նայէ Արմենա՛կ, ըրածդ գիտե՞ս... սա ի՞նչ կը նշանակէ :

Պրն. Արմենակ.— (Կնոջը լուծեան նշան ընելով : Մառիին) Ամսականդ 15 ոսկի է այնպէս չէ՞... :

Մառի.— Այո՛ պարոն :

Պրն. Արմենակ.— Այն ատեն քսան ոսկի պիտի առնես, գնա աղջիկս հասկցա՞ր, երբեմն պնակ մը կտորեր ես ի՞նչ կ'ըլլայ... մենք ողջ ըլլանք միթէ չուկան պնակ պիտի չմնա՞յ. անգամ մըն ալ կ'առնենք եթէ ան ալ կտորի դարձեալ կ'առնենք պտոր համար երբեք սիրագ մի նեղացներ :

Մառի ուրախութեամբ դուրս ելած պահուն տիկին Աղաւնի բարկութենէն կասկարմիր կտրած ամուսնոյն կը նայի :

## Տ Ե Ս Ի Լ Պ.

Պրն. Արմենակ եւ Տիկին Աղաւնի

Տկն. Աղաւնի.— Ինծի նայէ Արմենակ, դուն խենդեցա՞ր, թէ ոչ զիս բարկացնել սրոջեցիր. այս ապուշին առջև ըսած խօսքերդ լաւ ըմբռնեցի՞ր. ապուշ սպասուհիի մը առջև զիս խայտառակ ըրիր ձգեցիր. այլեւս սուէ աղդեցութիւն չունիմ վրան... ասկէ վերջ մէկ խօսքս պիտի չընէ... քեզմէ երես առնելուն համար, ալ ձեռքը ինկած բոլոր պնակները պիտի

կոտրէ: Ես անոր զաւկիս պէս պատուէր աալու պահուս  
 դուն եկար... ասոնց պէս սպասուհիները երբեմն չախելու է,  
 ապա թէ ոչ իրենց ձեռքը անցածը կը կոտրեն... մեր զը-  
 խուն վրայ անդամ կ'ելլեն... իբր թէ երես տալը չբաւեր՝ մէյ  
 մըն ալ, աղջիկս, հոգիս, կ'ըսես պոսվօ՛, շիտակը ասոր ըսե-  
 լիք չմնաց: Չէ նէ Մառին քու աղջիկդ է... բնաւ չկրցայ  
 հասկնալ... գոնէ քիչ մըն ալ առաջ երթայիր ու, երկու աչ-  
 քիս լոյսը ըսէիր... ես ալ ասոր զիմաց ստիպուեցայ լսել:  
 Ո՛հ Աստուած իմ... սրտիս պիտի իջնէ... իմ տանս մէջ այս-  
 քան կարեւորութենէ զուրկ ըլլալս չէի գիտեր: Չեմ կրնար  
 համբերել, գիտես Արմենակ, անպատճառ...

Արմենակ.— Ի՞նչ մը լսէ որպէս զի քանի մը խօսք ալ  
 ես ըսեմ, միշտ դո՞ւն պիտի խօսիս, գործէ լուռ չունիս. մի-  
 նակ խօսելով...

Աղաւնի.— Երկո՞ւ խօսք ա՛լ պիտի չըսեմ. ո՛հ, Աստ-  
 ուած իմ... մեռնիլը բան մը չէ... թէ ստորնացիր և թէ բե-  
 րան մի բանար, եղա՞ծ բան է:

Արմենակ.— (Իրան գոց ըլլալը քննելով տեսնելով որ  
 չուրջը ուէ մէկը չկայ) Հոգի՛ս, գործը չհասկցած կը խօսիս  
 ... այս ապուշ արարածին պնակները կոտրած ըլլալը իմա-  
 նալուս պէս հոս վազեցի որպէս զի պոչէն բռնելով դուս նե-  
 տեմ, սակայն դրան առջև դռնապանը Մառիին յանձնելի  
 նամակ մը տուաւ, որմէ դալը հասկնալու համար բացի ու  
 կարդացի: Իրաւունք ալ ունիմ սպասուհին մերն է, գրողը  
 հասկնալ մեր պարտականութիւնն է, թերեւս գլխէ կը հանին:

Աղաւնի.— Շատ ձիշդ է, ես ալ ըլլայի նոյնը կ'ընէի:

Արմենակ.— Նամակը անս հոս է, ա՛՛ո կարգայ:

Աղաւնի.— (Նամակը առնելով կը բանայ ու կը կար-  
 դայ)... և կը յայտարարուի ձեզ թէ, ձեր հօրաքրոջ մահուամբը  
 ձեզի երեք հարիւր քառասունը վեց հազար ոսկիի ժառանգ  
 մը ինկած է, կը խնդրուի յուլիս 17 ներկայանալ...:

Արմենակ.— Ի՞նչ կ'ըսես, միտքդ հասկցուր տեսեմ:

Աղաւնի.— Երեք հարիւր քառասունը վեց հազար ոսկի



...հասարակ սպասուհիի մը, երեք հարիւր քառասունը վեց հազար ոսկի... եղած բան չէ:

Արմենակ.— Ի՞նչ մը առաջ իրեն աղջիկս, հոգիս ըսելու իրաւունք ունէի այնպէս չէ՞:

Աղաւնի.— Հասկցայ իրաւունք ունիս, հիմա այսպիսի որս մը պիտի փախցնե՞ս:

Արմենակ.— Հարկաւ չփախցնելու պիտի աշխատեմ:

Աղաւնի.— Երեք հարիւր քառասունը վեց հազար ոսկի՞...

Արմենակ.— Մատին ուշ կամ կանուխ մեզմէ պիտի բաժնուի:

Աղաւնի.— Պէտք եղածը ընենք:

Արմենակ.— Այո՛, անուշ լեզուով խօսինք, Մատին ինչպէս գիտես շատակեր է, կարկանդակի և անուշեղէնի նման բաներ պէտք է ուտենք. անկէ զատ ապուշ ալ է ասկէ պէտք է օգտուիլ, կարիլի է զինքը այդ միջոցաւ հոս կըրնանք պահել ու հարստութենէն օգտուիլ:

Աղաւնի.— Եթէ մեր քովը մնայ զո՞ն կ'ըլլայ:

Արմենակ.— Ծիշտ է:

Աղաւնի.— Ի՞նչ մըն ալ մենք կ'օգտուինք:

Արմենակ.— Մօտայի շիտակին վրայ հինգ յարկնոց տուն մը կայ զայն ծախու կ'առնենք: Այդ տունը շատոնց ի վեր կ'ուզեմ, տեսնաս ի՞նչ աղւոր պատշգամ մը ունի:

Աղաւնի.— Աւելորդ սենեակները վարձու կուտանք:

Արմենակ.— Ու այդ գրամն ալ կը պահենք:

Աղաւնի.— (Խորին մտածումէ մը վերջ հառաջանք մը արձակելով) Լուսնի լոյսով ծովուն վրայ պտտելու համար անպատճառ նաւակ մը կ'ուզեմ միայն թէ շողեչարժ պէտք է ըլլայ:

Արմենակ.— Շողեչարժ:

Աղաւնի.— Գալամըջ եթէ ամառանոց մը գնենք աւելի լաւ է, ա՛հ եթէ հոն ամառանոց մը ունենայի ուրիշ բան չէի ուզեր... (մարմրուն) աչքերուս առջև ամառանոց մը բե-

ըի, խոշոր և գեղեցիկ պարտէզ մը ունի, ուր ամէն տեսակ պտուղի ծառեր, ծաղիկներ, աւազաններ, շատրուաններ, ա՛հ դեռ ինչե՛ր կը գտնուին, լիալուսին ասոնց մէջ պտըտիլ, նստիլ պառկիլ... ո՛հ, Աստուած իմ ի՛նչ երջանկութիւն, կեանքը այս. է մեր տունը անոր քով գրեթէ աղբանոց մըն է:

Արմենակ.— Սրգարե ատանկ ամառանոց մը կը փափաքէի:

Աղաւնի.— Ինքնաշարժ մըն ալ կ'ուզենք... քալելէն ոտքերս մաշեցան, ուռեցան... տակաւին երիտասարդ տարիքիս մէջ ոտքերս կոշտ բռնեցին:

Արմենակ.— Ինքնաշարժը ես կը վարեմ, եղբօրս պէտք չունիմ:

Աղաւնի.— Եղբայրդ ալ որքա՛ն շուտ յիշեցիր, քեզի շիտակը ըսեմ, եղբայրդ աղէկ աչք մը չունի, ես եթէ քու տեղը ըլլամ մէկ փարա չեմ տար. ինչո՞ւ պիտի տամ:

Արմենակ.— Ամէն մարդ իրեն համար, ասիկա աշխարհի մէկ օրէնքն է, թող շահի ու ան ալ թող շինէ. քովն անգամ չեմ մօտենար... ըսել է ամառանոցը Գալամըշի մէջ պիտի ունենաք:

Աղաւնի.— Այո՛, Այո՛:

Արմենակ.— Եղբայրս եթէ դայ հինգ փարայ անգամ չեմ տար:

Աղաւնի.— Ո՛հ, սիրելի ամուսինս ալդպէս ըսելով հանդերձ նորէն կուտաս սիրտդ փափուկ է, չեմ գիտեր...

Արմենակ.— Ես ալ քեզի լաւ կը ճանչնամ, սիրելի՛ կինս, դուն ալ միթէ քու հին շապիկներդ աղքատներուն չե՞ս տար...

Աղաւնի.— Մարդ որքան հարստանայ այնքան առատաձեռն կը դառնայ, որքան որ տանք այնքան մեր վրայ կը խօսին:

Արմենակ.— Արգարե ճիշտ է. սակայն...

Աղաւնի.— Լուէ... Մառին գալու վրայ է, ապո՛ւշ աղջիկ երեք հարիւր քառասունը վեց հազար ոսկին ալ ճիշտ տեղը գտեր է... ա՛հ, եթէ մերը ըլլա՛ր...:

## S U B I, Գ.

## Նոյնի եւ Մառի

Մառի.— (Տաք սպուրի պնակը ձեռքը) կը ներէք Տկն-Աղաւնի, ապուրին անուշադրութեամբ երկու անգամ ալ գրիք Աղաւնի.— Հոգ չէ՛ Մառիս, հոգ չէ եթէ կ'ուզես մոռցիր ու չորս անգամ գիրք:

Արմենակ.— Անշուշտ տիկինը իրաւունք ունի որովհետեւ... (կը խնդայ, իր կինը նոյնպէս կը խնդայ, Մառի ասոր վրայ ինքն ալ կը խնդայ) Մառի՛ աղջիկս, մեզի հետ գաւաթ մը գինի կը պարպե՞ս:

Մառի.— (Ապշութեամբ) Զիս կը ծաղրէ՞ք պարոնս:

Արմենակ.— Բեզ ծաղրել, քաւ լիցի, այդպիսի բան մը երեւակայութենէս անգամ չանցնիր:

Աղաւնի.— Կարգը ինձի եկաւ Մառի, գինի խմած պահուդ քեզի ես պիտի ծառայեմ, այդ բանը ինձ մեծ պատիւ կը համարեմ... արդէն մեր մէջ ի՞նչ տարբերութիւն կայ որ... դուն ալ մտրդ չե՞ս... ա՛հ գիտնաս քեզի որքան կը սիրեմ, գրեթէ քրոջ մը պէս:

Մառի.— (Ապշութեամբ) ինձի պիտի ծառայէ՞ք, ի՞նչ կ'ըսէք տիկին... թէ ոչ երազ կը տեսնեմ... ես ս'վ... ձեզի հետ միատեղ ճաշողը ով... ինձի պիտի ծառայէ՞ք:

Աղաւնի.— Բայց ինչո՞ւ այդպէս կը խօսիս ինչո՞ւ չըլլայ. ի՞նչ կ'ըլլայ (դաւաթները կը լեցնէ)— Կենա՛ցդ Մառի:

Մառի.— (Կարմրելով գաւաթը կ'առնէ) Քանի որ կը պնդէք կը խմեմ՝ (կը խմէ):

Աղաւնի.— (Ինքնիրեն) Ապուշ դուն ալ, այս գաւաթները այս հիւրամեծարութիւնը ոչ թէ քեզի այլ ապագայ հարստութեանդ է, եթէ քիչ մըն ալ երես տամ, գինիի տակառը կը պարպես: (Բարձր) Մառի, գիտե՞ս այսօր սիրտս ի՞նչ ուզեց. ես, պարոնը և դուն երթանք և ազուր դաշտային ճաշ մը ուտենք... այսօր քիչ մը անհանդիստ եմ,

եթէ քիչ մը պտտիմ լաւ կ'ըլլայ... Մառի այսօր քեզի չափազանց գոհ կը տեսնեմ... իմ ալ սիրտս կը բացուի :

Արմենակ.— Պտոյտը աղէկ յիշեցիր, շատ լաւ կ'ըլլայ :

Աղաւնի.— Բայց ինչո՞ւ չես նստիր, Մառի, անհանգիստ չըլլաս (Պարոնը և Մառին դէմ դիմաց կը նստին), ինչպէս սիրելիս, տեղդ լա՞ւ է, հանգը՞ստ է, օդի հոսանքէն չմտիս ու չի հիւանդանաս :

Արմենակ.— (Սպասուհիին ազահօրէն ուտելը դիտելով) Շատ գոհ եմ Մառի... հատ մը եւս խմենք... հոս քու տունդ է, երբեք մի' նեղուիր... քեզի որքան գոհ տեսնենք մենք ալ նոյն աստիճան կ'ուրախանանք :

Աղաւնի.— Ճիշտ է, չեմ գիտեր ինչո՞ւ քեզ այսչափ կը սիրենք :

Արմենակ.— Գրեթէ մեր աղջիկն ես, և թերեւս բուն մեր աղջիկը ըլլայիր՝ այսքան չպիտի սիրէինք :

Մառի.— Ես ձեզի իմ ծնողքիս տեղը կը համարեմ ու այնպէս կը սիրեմ : (ինքնիրեն) Այսօր չեմ գիտեր ինչ պատահած է, երբեք այս տեսակ վարմունքի մէջ չէին գրտնուած հետս... վերջը տեսնենք արդարեւ շատ զարմանալի է : (բարձր) Բուն ծնողքս համարած Տիկին Աղաւանիի և Պարոն Արմենակի կենացը (կոկորդալիր կը խնդայ և ձեռքը բռնած գաւաթը կը պարպէ) :

Աղաւնի.— Մառի, ի՞նչ գեղեցիկ խնդալ մը ունիս գիտե՞ս... այս վիճակը տեսնելով որքան կ'ուրախանամ... բայց գրեթէ բնաւ ապուր չխմեցիր, քանի մը դգալ ևս առ, թէ՛ խմէ և թէ խօսէ :

Արմենակ.— Խմէ՛, խմէ՛ աղջիկս, բնաւ մի' վախնար, եթէ լմնայ, շուկան շատ կը գտնուի :

Մառի.— (Ելլելով) Երթամ խորովածը բերեմ :

Աղաւնի.— Դուն Հանգիստ ըրէ աղջիկս, յոգնած ես : (կ'ելլէ) :

Մառի.— Իրաւ ալ շատ յոգնած եմ... նստելուս պէս յայտնի եղաւ :

Արմենակ.— Մառի՛, աղջիկս առտուները շատ կանուխ կ'արթննաս, ասկէ յետոյ իննէն վերջ ելիր, պառկէ հանգիստ ըրէ՛ :

Աղաւնի.— (Ձեռքը խորովածով ներս կը մտնէ) Մառիս, ասկէ վերջ առտուները սուրճով կաթը ես պիտի հրամջընեմ. ասկէ մեծ ախորժ պիտի զգամ :

Մառի.— (Ուրախութեամբ) իրա՞ն տիկին :

Աղաւնի.— Ինչո՞ւ իրաւ չըլլայ, ասոր մէջ ի՞նչ կայ զարմանալու իսկ եթէ սրճախառն կաթ չես ուզեր՝ շոքուայով կաթ բերեմ :

Արմենակ.— Եթէ կ'ուզես թէյով սուրճ :

Աղաւնի.— Կեր խմէ հանգիստ ըրէ, դուն ողջ եղիր... առտուները ի՛նչ որ ուզես կուտանք, Արմենակ դուն ալ քիչ մը օգնէ Մառիին... մեր ազնիւ, սիրասուն Մառիին... Ա՛հ, Մառի, քեզի հանդէպ սիրոյ զգացումներս ինչպէ՛ս յայտնեմ :

Մառի.— (Խնդալով) Այսօր ձեր երկուքն ալ շատ զուարթ կը գտնեմ... երէկ այսպէս չէր... :

Աղաւնի.— Երէկ ալ այսպէս էր, սակայն մարդուս մէկ ժամը միւսին չի յարմարիր, երբեմն սիրտ նեղացնելիք լուրեր կ'առնէ... արդէն մինչև այսօր ըրած խօսքերս կատակի համար էին... ոչ թէ սրտանց... Մառի դուն բնաւ մեզմէ մի՛ բաժնուիր. միշտ մեր զաւակին պէս մեր քով կեցիր, չըլլա՞ր :

Մառի.— Ինչո՞ւ չըլլայ, այս անուշ սէրը, գեղեցիկ գինին, լաւ կերակուրները, քիչ աշխատիլ և շատ հանգիստ ընելը, ո՞ր տան մէջ պիտի գտնեմ, մինչև մահս հոս կը մնամ :

Աղաւնի.— Ահ Մառիս, քեզի գրկել կ'ուզեմ :

Արմենակ.— Ես ալ :

Մառի.— (Դուռը կը զարնուի) Երթամ դուռը բանամ :

Աղաւնի.— Ո՛չ, դուն անհանգիստ մի ըլլար սիրելիս, ես կը բանամ (կ'ելլէ) :

## Տ Ե Ս Ի Լ Ե .

Նոյնիք եւ դունապսնունիքն

Դոնապ.— Բարև՛ տիկին և պարոն քիչ առաջ ձեզի նամակ մը յանձնած էի :

Արմենակ.— Այո՛, միտքս եկաւ, ինծի համար չէր Մառիինն էր, իրեն տալու մոռցայ (նամակը կը հանէ ու Մառիին տալու համար կ'երկարէ) :

Դոնապ.— (Փութով նամակը կ'առնէ ու խնդարով) անպատճառ Մառին ուրախացած է. յանցանքը ոչ մէկունն է. ես ալ... (Մառիին) ձեր անունը ի՞նչ է օրիորդ. ասիկա Մառի Սալաբուրեանին կը պատկանի :

Մառի.— Անունս Մառի Խաչատուրեան է տիկին :

Դոնապ.— Այն ատեն այս նամակը ձեզ չպատկանիր :

Աղաւնի.— (Գիտովի մը նման երեքտակով) Ինչպէ՞ս, Մառիինը չէ՞ :

Դոնապ.— Ո՛չ տիկին, սխալմունք մը եղած է, կը ներէք... յանցանքը իմ քովս է. բարի ախորժակ... կերակուրի ժամանակ ձեզ նեղութիւն պատճառեցի... նամակը բացուած է բայց հոգ չէ. մնաք բարով (կ'երթայ) :

## Տ Ե Ս Ի Լ Զ .

Պրն. Արմենակ, Տիկ. Աղաւնի եւ Մառի

Աղաւնի.— (Բարկութենէն կասկարմիր կտրած) Մառի՛ ինչ ապուշ ապուշ երեսս կը նայիս, ելի՛ր անմիջապէս խնձանոցդ գնա. այդքան երես առնել չըլար :

Մառի.— (Ինքնիրեն) Հովը փոխուեցաւ. այս օրն ալ նամակին սխալմունք ըլլալը փոխեց :

Աղաւնի.— Կը բաւէ որքան կերար, այլեւս ելի՛ր ու գործիդ նայէ՛, տակաւին պնակները պիտի լուացուին, սենեակը պետի աւլուի... առտուները քիչ մը կանուխ ելիր որ-

պէսզի գործ տեսնես... սա ալ ըսեմ. պնակները լուարու ա-  
տեն ուշադրութիւն ըրէ, եթէ կոտրես ամսականդ անպատ-  
ճառ կը կտրես: (ինքնիրեն) Ի՛նչ ալ աղէկ կ'երագէինք,  
սպանիական զղեակներ կը շինէինք: Մե՛ղք, մինչդեռ ամէն  
ինչ երազ է եղեր: (բարձր) Մտով՝ քեզի չուտով ելի՛ր կ'ը-  
սեմ, խոհանոց գնա, աչքի մի՛ երեւիր:

Արմենակ.-- Սակայն ինչ ալ աղէկ է երագել, իրաւ է  
թէ երազն ալ անուշ բան է... Աստուած այդ նամակին պա-  
տիժը տայ:

### Վ. Ա. Ր. Ա. Ռ. Յ. Ր.

Վ. Ա.

## ԻՆՏՈՐ ԸՆԵԼՈՒ Է ՄՈՎՈՒ ԼՈՒՍՆԻԷ

Բարիքի համարարանէն վկայեալ նշանաւոր բժիշ-  
կի մը յանձնարարութիւնները:

1. Կարելի եղածին չափ պիտք է զգուշանալ հագուած  
սքուած ծովու բազնիք մտնելէ: Առողջապահութիւնը և  
կենցաղագիտութիւնը կը պահանջեն որ ծովու բազնիք մըտ-  
նելէ առաջ մարդ լաթերը հանէ:

2. Ձեր զգեստները հանելէ ետքը, երբ պատրաստուիք  
զլուխ ի վար ծով նետուիլ, ոտքերնիդ և ձեռքերնիդ չուա-  
նով կապեցէք:

3. Երբ վերէն վար նետուելով, մինչև շուրին յատակը  
հասնիք, աւելորդ է ծովուն խորէն ձեր բարեկամները կան-  
չել, որպէսզի ձեր լողուորդի վարպետութեան հիանան:

4. Մովու բազնիքէն ելած ատեննիդ մի՛ մոռնաք  
պանծօնիդ հանել և ձեր զգեստները հագնիլ:

5. Զգեստնիդ հագած ատեն, սխարլամբ մի՛ հագնիք  
ուրիշին զգեստը, մինչև որ վստահ չըլլաք թէ՛ ձեր առած  
զգեստները՝ ձերինէն աւելի նոր ու ձեւաւոր են:

6.— Դուքս ելած ատեննիդ մի՛ մոռնաք բաղնեպանին  
 դրամը վճարելու, բայց երբ անիկայ մոռնայ, յիշեցնողը  
 դուք մի՛ ըլլաք:

7. Վերջապէս՝ երբ ծովու բաղնիքէն ելլէք, շիտակ տաք  
 բաղնիք մը գացէք... լուսցուելու համար:

## ԱՊՈՒՇ ԽՕՄՔԵՐ ԽԵԼԱՅԻ ՄԱՐԴՈՅ ՀԱՄԱՐ

Հիմակուան բարեկամները... սեխի կը նմանին. յիսուն  
 հատին համին նայելու է՝ մէկ հատ աղէկ գտնելու համար:

Աղուորութիւնը յանձնարարագիր մըն է, զոր բնու-  
 թիւնը կուտայ իր նախասիրածներուն:

Ղազարոս իր գրասենեակին մէջ կ'աշխատէր, երբ եկան  
 իրեն իմացնել թէ տունը կ'այրի:

— Գացէք կնկա՛նս ըսէք, ես տունի գործերուն չեմ  
 խառնուիր, ըսաւ:

Ղազարոս սուգի մէջ է:

Կը հարցնեն իրեն թէ՛ սուգի մէջ ըլլալով հանդերձ, այս  
 տարի գիւղ պիտի երթա՞յ:

Հարկա՛ւ, կը պատասխանէ. միայն ի նշան սգոյ, Սեւ  
 ծովու զիւղերէն մէկը պիտի երթամ:

Ղազարոսին կը հարցնեն թէ՛ ի՞նչպէս կ'ըլլայ որ միշտ  
 դրամ ունի:

— Որովհետեւ երբեք հին պարտքերս չեմ վճարեր կ'ըսէ:

— Հապա նորե՞րը:

— Անոնք ալ... կը հինցնեմ...



## ՄԵԾԱՊԱՏԻՒ ԴԷՄՔԵՐ Մ. Ե. Ս. Մ. ԵԱՆ

## ԱՐՇԱԻՐ ԱԼԵԱՆԱՔԵԱՆ

Նախ՝ Ալեանաք, ապա՝ Կարմիր-Այտունի .  
 Արդ, չեմ գիտեր թէ քանի՞ անուն ունի:  
 Տպած՝, Ալիպէյ, Թիք-Թա՞ք, թէ Փանջունի  
 Բայց շատ լաւ գիտեմ թէ Կարմիր այտ չունի...:

Բայց թողո՛ւնք ատոնք մեզի ի՞նչ: Կուզէ Կարմիր այտ ունենայ, կ'ուզէ կանանչ: Խնդիրը անոր թաւազագեղ կամ Կարմիր-խնձոր այտերուն վրայ չէ՛, հապա ընկեր Կարոյին օձիքներուն պէս իր անուան ալ ամէն օր փոխուելուն վրայ: Շիտակը եթէ կ'ուզէք, ես՝ որ ամէն մեղքիս վրայ կենսագիր ըլլալու... դժբախտութիւնը ունիմ, ժամերով շուարած կը մնամ երբ զինքը կանչել պէտք ըլլայ: Չեմ գիտեր թէ ի՞նչ անունով կանչեմ որ մեր բարեկամը չվիրավորուի և իր բուն անունը տուած ըլլամ: Կարծեմ, շատ երկարեցի: Ուստի, պիտի խնդրէի յարգելի ընթերցողներէս, որ պահ մը բարեհաճին վերանալ կամ լաւ եւս է ըսել, ճախրիլ դէպի...տնչութիւն, ուր ապահովաբար պիտի կարենան ձերբակալել նոյնինքն Ալեանաքը, Ալիպէյը, որը՝ որ կ'ուզէք: Ընթերցողներէս ատոնք, որոնք հեռուէն կամ մօտէն զինքը ճանչնալու պատիւը կը վայելեն, խիտ հաւանական է որ դայրանան ինձի դէմ՝ «ձերբակալել» բառը գործածելուս համար: — Ինչո՞ւ չէ — Եւ իրաւունք ալ ունին: Վասնզի, իրենց ճանչցած Ալեանաքը ո՛չ կը ձերբակալուի, ո՛չ կը կապուի և ո՛չ ալ կը — քաշուի: Որովհետեւ

ինչպէս որ ինծի յայտնի է, Տէրն մեր Արարիչն արարածոցը այնպիսի մածուցիկ, թացիկ հողէ մը բարեհաճած է ստեղծագործել նոր դարերու այս նորեւուկ ազամեանը, որ մարդ սկամայ կը տարուի խորհելու թէ իրաւցնէ՞ արդեօք հողէ շինուածք մ'է: Եթէ չէք հաւատար ինծի՝ վկայութեան կանչեմ պատկ. բնայուծագէտը որ ի հարկ է սուտ խօսելու սովորութիւն չունի, երկար ու մանրակրկիտ քննութենէ մը ետք սապէս կը բանաստեղծէ,

Անիկա ո՛չ քե հողի  
Այլ սապէս շինուած է  
Կոնսխք պողպատե  
Չսպանակ մ'է.  
Մխտը կոզի

Ջիղերը մեքիկ  
Թեղ ջուրակի.  
Իսկ անդին  
Ինչ որ ունի՝  
Թեքեւ է որպէս շոգի:

Անտարակոյս դուք ալ ինծի հետ գլուխ պիտի ծռէք այս տարբազարութեան առջև: Որովհետև ճշմարտութիւններ կան, որոնց դէմ չի... բողոքուիր ըսեր է չեմ գիտեր ո՞ր անլեզու փիլիսոփան:

Օճօ, ս'ըր էինք, ուր գացինք: Ուրեմն իր անուան կազմութեան այսքան շատախօսելէ ետք, անմիջապէս դառնանք իր կենսագրութեան, որ ինչպէս գիտէք մեծ կարեւորութիւն ունի:

Արշաւիր Ալեանքեան.—Նախ ամէն բանէ առաջ՝ դերասան գրագէտ, քննադատ (Ալա Օշականեան) լուսանկարիչ, երգիչ, մարզիկ դատաւոր, թրքագէտ-գրագիր և վաճառական... Ծնաւ յամի Տեան 1887 թուին Մայիս ամսոյ 23ին հինգշաբթի օր մը (չեմ գիտեր ժամը քանիին) Ատարագարի մէջ վարդի թուփի մը ներքև: Մկրտուած է Չարխի անմահական ջուրով ի դիմաց յողմախոսուն բազմութեան և դերասանուհւոյ մը կնքամայրութեամբ: Մկրտութեան արարողութիւնը կատարուեցաւ Ատարագարի Ա. Հրեշտակապետ եկեղեցւոյն մէջ, հովանաւորութեամբ տանե-

քէց՝ Տէր Գրիգորիոս քահանային, որ քաջ զբարարագէտ մը չըլլալուն՝ Արշաւիրէն ասպտակուեցաւ իր մէկ սխալին համար:

Մկրտութեան արարողութիւնը աննախնթաց հանդիսաւորութեամբ մը կատարուեցաւ յանձին նոյն եկեղեցւոյ անմահական երգչախումբին, որ առաջին անգամ ըլլալով երգեց Լնքապապեան ձայնագրութեամբ՝ ի պատիւ նորածինին, որ կը խոստանար ասպագային սրբագրել և գերմանական երաժշտութեան հրապոյրով օժտել զայն: Ու մինչ այս աննախընթաց և շքեղ արարողութիւնը կը կատարուէր՝ խումբ մը ձգուսներ ներս խուժեցին անվհօրէն «Դա է որդի մեր սիրելի» ճրճուացին ժամ մը անընդհատ: Եւ տակաւին մտադիր էին ուրիշ բաներ ալ պատգամելու՝ եթէ Տէր Տէրին հրամանին վրայ ժամկոչ ազբարը չի քշքշէր այս խեղճ շատախօսիկները:

Արշաւիր հազիւ 4 տարեկան մանկիկ մըն էր, երբ առաջին անգամ դերասանի վայել ճկունութեամբ Ամերիկացի զբօսաշրջիկներուն քալուածքն ու խօսուածքը կեղծեց այնքան բնականօրէն: Ասոր վրայ դուռ-զրացի եկան հաւաքուեցան Ալեանաքենց տունը և յորդորեցին անոր ծնողքը որ Արշաւիրը Պոլիս դպրոց մը դնեն և ներկաներէն մին երկիւղածօրէն յայտնեց թէ՛

— Իրենք եկած էին պարզապէս երկրպագելու սոխակին առջև, որովհետև — ըսաւ երխտասարդը — յանձին այդ փոքրիկ բզեզին մենք կ'ողջունենք ասպագայ մեծ հայ դերասանը, մարզիկը, զբաղէտը միանգամայն:

Շիտակը ի՛նչ աղուոր երրորդութիւն... Կեցցէ՛ մեր սոխակը և իր արարելը», ազադակեցին ամէնքն ալ միարեւրան: Ի վերայ այս արմենայնի, Արշաւիր յաջորդ օրն իսկ իր մօրը վեհապանծ գահուն վրայ բաղմած շունչը Պոլիս առաւ:

Պոլիս գալուն պէս տետրակ ու մատիտ առած վարպետ-տուտու գնաց ու արձանագրուեցաւ: Յ տարի շարունակ վարպետ-տուտու գնաց եկաւ և սակայն օր մըն ալ օրիորդը

ազգասրարեց իրեն որ այլևս «կոկոն» եղած՝ և հետեւաբար պարտ էր մանկապարտեզ երթալ: Արշաւիր որ հնազանդին տղան էր, հնազանդեցաւ այս որոշման ալ և ծնողքէն խընդրեց որ զինքը հասեան վարժարանի մանկապարտեզը տանին: Ծնողքը սակայն, որ կը թուէ քիչ մը նախապաշարեալ էր, կարծելով որ տղան որսորդ ըլլալ կ'ուզէ, քիչ մը գովամակեցան թէ և, բայց ի վերջոյ անդի տունն Արշաւիրին լացուկոճէն պարտուած: Ասոր վրայ Արշաւիր գնաց ներկայացաւ վարիչ մանկապարտիզպանուհիին: Ղինուորական բարեւ մը ըրաւ և համարձակօրէն սապէս ներկայացուց ինքզինքը:

Անաւասիկ կ'ես, կ'ես եւ  
 Հնազանդին տղան եւ  
 Հպարտիկ աներձագն եւ  
 Փառաստեղիկ քոռն եւ  
 Եւ հյուրուստի աչ գաւակ եւ,  
 Երբ դեմս երդող կայ և  
 Ասուած վրայ կը ծեծեւ:

Ա'ն պարտիզպան օրիորդ,  
 Հասկցա՞ր, խնամփիղ կարօս  
 կոկոն մ'եւ, ևսխշուն-կարօս  
 Թե ուզես կը բողբոջիս,  
 Ձի ևոյն ինքն Չարն եւ,

«Օ՛, շատ բարի, շատ բարի ըսելով օրիորդը ընդմիջեց կրակոտ բանաստեղծը, որ տակաւին մտաղիւր էր ուրիշ բաներ ալ ըսել, եթէ երբեք անփափկանկատ օրիորդը չընդմիջէր զինքը: Պարտիզպանուհին կ'երեւի թէ շատ գոհ մնացած էր այս չարածճի տղուն ատենախօսութենէն, ձեռքէն բռնելուն պէս «բողբոջ» դասարանէն ներս խոթեց և այսպէս ներկայացուց:

Պը. Արշաւիր Արեանաք, ինքնակոչ բանաստեղծ և կրակոտ ատենարան, բայց քիչ մը շատ չարածճի, զգո՛յն տղաք: Յետոյ արշաւիրին դառնալով շարունակեց օրիորդը. «Նստէ տղաս, հոս «Բողբոջ» դասարանն է, ասոնք ալ ուսուցչուհիներդ են (մատովը ցուցնելով), իսկ ասոնք ալ ուշիմ՝ ընկերուհիներդ են: Հատէ՛, խաչդ հանէ, խելօք-խելօք նստէ որ սորվիս անուշիկս: Չըլլա՞ր տղաս»:

Մեքենաբար «Բէք աղէկ» ըսաւ Արշաւիր և ընկերուհիներէն մէկը կարմրելով իրեն նստելու տեղ մը բացաւ : Հաւասարութեան ձայնն էր որ առաջին անգամ ըլլալով կը զարթնուր իր մէջ : Բնական է, Արշաւիր «Կոկոն» դասարանը երազած ասան «Բողբոջ» ըլլալուն համար շատ ուրախացաւ և որոշեց որ անկէ վերջ ամէն օր ատենարանութիւն ընէ : Երեք տարի յետոյ մանկապարտէզի վերջին դասարանէն յոյժ պատուաբեր մրցանակով կը վկայուէր : Կ'ըսեն թէ տարեկան հանգէսին Օր. Մառիի թելագրութեամբ Արշաւիր մասնակցեցաւ դպրոցին տրամաթիքական խումբին և իր «Հուսկ բանք»ը ըսաւ Կաղանդ-պապայի դերը անձնաւորելով : Դարձեալ կ'ըսեն թէ, Արշաւիր իր այս խաղով այնքան փայլեցաւ, որ Էսսեան վարժարանի Տնօրէնը առանց քննութեան և մանաւանդ առանց փողի դպրոց բնագոնեց այս տաղանդաւոր տղան : Բայց Արշաւիր, ինչպէս գիտենք, հոս ալ հանգիստ չկեցաւ, և քանի մը տարի յաճախելէ վերջ օր մըն ալ չեմ գիտեր ի՛նչ պատճառով խիստ շատ բարկացաւ, այնպէս որ Պր. Տնօրէնին հետ կոկորդ-կոկորդի կռուելու իր երախտագիտական պարտքը հատոյց և ապերախս տիտղոսով դպրոցէն մեկնեցաւ անդարձ :

Նոյն տարուոյ աշնանամուտին Ազգ. Կեդր. վարժարանը գրկաբաց ընդունեց այս տաղանդաւոր տղան և հինգ տարի անընդհատ իր թեւին տակ պահել յաջողելով՝ 1908ին սուսիկ-բուսիկ ազդին ընծայեց զայն... որպէսզի վարժապետ ըլլայ : Բայց եկուր տե՛ս որ, փոխանակ վարժապետ ըլլալու, եղաւ գրագիր համրիչավաճառի մը քով :

Իր սնդիկային ճկնութիւնը չկրցաւ երկար ատեն մնալ տեղ մը, ուր շատ շատ սովորական երկու մահկանացուներ միայն կրնային սեղմուիլ, բայց Արշաւիր մը երբեք, երբեք... Բնականաբար, անտեղէն ալ առաւ քայեց և յանկարծ ինքզինքը գտաւ Պապը-Ալիի էն խոշոր խաներէն մէկուն մէջ, ուր Բեկլանխիսարուժագործիխալխանաւսան մը մէջ սեփրըքերի պաշտօն ստանձնեց :

Չերկարելու համար ըսենք, որ մեր թուած տեղերէն զատ  
4—5 վաճառատուն փոխեց և վերջապէս գնաց հաստատուե-  
ցաւ մանիֆաթուրայի վաճառատան մը մէջ՝ որպէս թրքագէտ  
գրագիր: Ահա՛, ասկէ վերջ է որ Արշաւիր կը յաջողի  
պատուոյ տեղը գրաւել կէտիկ-փաշայահայ հասարակութեան  
մէջ իբրև սիրերգակ անարթօն դերասան մը և մանաւանդ  
նորավիպագիր մը... անզուգական և անզուգական:

Թատերասէրներու աշխարհի մէջ կիները իր անունով  
կը պարծենան. «Ալեանաքը (Ալեան) կը ճանչնա՞ք» կ'ըսեն.

— Ինչպէս չէ՛, իմ դպրոցական ընկերս է:

— Իմ ալ բեմի ընկերս է կը պատասխանէ այս վերջինը:  
Իր բանաստեղծ ընկերներէն մէկը հետեւեալ քառեակը ար-  
ձանագրած է իր օրագրին մէջ, զոր շահեկան կը համարենք  
արտագրել ստորև:

«Ալեանաքը հպարտ է տեղին համեմատ.

«Երբոր ըլլայ մէջը Բըրի Շանի

«Շիֆ անդամներուն հետ Տարխաչիսայի

«Ո՛չ իսկ կը տեսնէ Խըճըջը բարի,

«Թէ աչքին զարնէ անդին կը նայի.

«Հնգկահաւի յոսորտանքով մը պողպատ:

Բայց, ինչպէ՞ս, զարմանալի չէք գտնե՞ր, բանաստեղծին  
ըսածը, վասնզի Արշաւիրը եթէ հպարտ մէկը ըլլայ, ինչ-  
պէս կը կարծէ Պրն. բանաստեղծը, հարկա՛ւ պիտի չի զիջա-  
նի թրինկի գաճէ արձանիկներուն հետ տեսակցելու...: Շի՞ք  
ըլլալուն համար:

Ամէն պարագայի տակ, ա՛ս ստոյգ գիտեմ որ Արշաւիր հը-  
պարտին աներձագն ըլլալով հանդերձ պիտի զիջանէր խօ-  
սելու ամէն անոնց հետ, որոնք ըստ ընկալեալ սովորութեան  
ձրի մուշեմիկի պաշտօնը կը կատարեն:

Առանց չափազանցելու, կարելի է ըսել, որ ճարտասան  
մի՛ է ինքը և խօսք չհասկցողներուն խօսք հասկցնող վարժա-  
պետ մ'է: Ես, պաշտօնիս բերումով — կատակ չկար-  
ծէք հա՛ — գրաւ կը գնեմ, որ վերջերս Ամերիկայի մէջ

տեղի ունեցած շատախօսութեան մրցումին եթէ երբեք մասնակցէր, մեր ազգի այս շատախօսը, հաւատացէ՛ք, անպատճառ շատախօսութեան որջօղը կը կոտրէր: Ասիկա այնքան վտանգրեւում, որքան անուսինս «Լազրաւոր» ըլլալը: Հետեւորար տարակուսելու պատճառ մը չունին ընթերցողներս: Մնաց որ արդէն, զինքը ճանչցողները ջերմազինա պիտի հաստատեն մեր այս ըսածը, սա՛ արդար պատճառով, որ մեր ազգի այս Վարպետ-Շատախօսը ո՛չ միայն լեզուով կը բարբառի—ինչպէս սովոր ենք տեսնել բանական անասունները—այլև իր հինգ զգայարանքները հաւասարապէս կը պաշտօնավարեն, երբ ան խօսիլ սկսի: Այսինքն, ըսել կ'ուզենք, իր դէմքը դիտողները եզական փնտնասօրօրաճի պատրանքը պիտի ունենան: Մինչդեռ շատախօսութեան ախոյանուհին միայն և միմիայն հասարակ մահկանացուի մը բերանը ունէր, ան ալ աւանդ, կեռասի մը նման փոքրիկ: «Օ ինչ կ'ըսեմ, ես ալ քիչ շատախօսներէն չեմ հա՛ . . . Բայց ի՛նչ մեղքս պահեմ, ամէն մեղքիս վրայ կենսագիր մ'եմ, մանաւանդ որ ուրիշ կերպ կարելի չէ լեցնել «Մեծապատիւ դէմքեր» ու յօգուածաչարքս: Մն ուրեմն առանց ժամանակ կորսնցնելու, այսինքն մուսաս չփախցուցած կ'ենսագրեմ, որովհետև ինչպէ՞ս գիտենք Մուսաները կը բնակին Երևանի մէջ զետեղուած Պառնաս լեռան բարձունքը և հետեւորար դիւրին չէ հոնկէ մինչև հոս ամէն օր ճամբորդել, եթէ երբեք տոմսակը աշտորբուռ ալ առած ըլլայ: Մնաց որ բանաստեղծ Ղազարեանէն, Բալուեանէն և Ջիլինկիրեանէն զատ ինծի ալ պատուելու չեմ գիտեր որ ժամանակ կ'ունենա՞ց: Բայց ես ի՛նչ հոգ կ'ընեմ, քանի որ մեծանուն Պառնասին մինչև իմ համեստ խցիկս գալու բարեհաճեր է նոյն ինքն Պր. Մուսան, օղտագործենք ուրեմն իր ներկայութիւնը: Օ՛ն, անգր յառա՛ջ): Եւ որպէսզի դիւրութիւն մը ըլլայ ընթերցողներուս, որոնցմէ շատեր ապահովորար ցարդ պատիւը չեն ունեցած ծանօթանալու այս «հանրածանօթ» և «Կազմութեամբ» երիտասարդին հետ, ստորև կուտանք մեր այն տպա-

ւորութիւնները; զորս փոզոցին մէջ իրեն հանդիպած ատեն նիս լուսանկարելու ճարպիկութիւնը ունեցանք!

Գուք ի՞նչ կ'ըսէք ասոր: (Ականջը խօսի մեր Պետրոսիկին): Արշաւիրը, զոր ներկայացնելու պատիւը ունինք հիմա, միջահասակ, բարեձև, բաւական նիհար, մարմին մ'է, զոր Պրն. Բիւրքձեանը անգամ պիտի զժուարանար զայն տարբաղադրել և պիտի բաւականանար ըսելով թէ՛ «տղա՛ք», այս մարմինը չի տարբաղադրուիր»: Բայց որովհետև մենք մեր կողմէ խոստացանք, պիտի տարբաղադրենք:

Այժմու պարասէր տղոց պէս կրցած տեղը կը պարէ ան, ինչպէս գուշակած էինք ատենին, «զսպանակաւոր մարմին մ'է» զոր թել թել պիտի անջատենք և ըստ կարելւոյն պիտի ցուցնենք ձեզի:

Տեսէ՛ք: Ունի երկու սև ու փաղփուռն աչեր, որ կը թուի թէ հայկական քթի մը հովանաւորութեան ներքև ապաստանած ըլլալուն համար կը փորձեն նոյնիսկ մեր Պր. Շանթին դէմ շանթեր արձակել: (Դերասան Նրուանդ Նրեցեանին ականջը խօսի, խեղճը եթէ կարենար Շանթ մը ըլլալ, առանց այլեւայլի, ուղղակի Պրն. Շանթին գլխուն կը թափէր: ) Ականջները կը հարցնէք հարկաւ, ղխտեցէք կարգաւ: Ականջները օժտուած են անտարբեր զգայնութեամբ մը, որովհետև կը լսեն միայն այն խօսքերը որոնք իրենց տիրոջ փառասիրութիւնը կը զգուեն, կամ տիտղոս մը եւս կը շնորհեն անոր: Բայց, ո՞վ զարմանք, կը իւլանան եթէ երբեք հակառակը պատահի:

Բիթը ո՛չ դուք հարցուցէք ո՛չ ալ ես ըսեմ, որովհետև, այնքան բնական է որքան անբնական է Կախոջիներ սակայն այսպէս, տժգուն է ան, բայց ոչ-գունատ, ինչպէս սովոր ենք տեսնել մեր բանաստեղծները, դէմքի այս տըժգունութիւնը մասնաւոր հմայք մը կ'ստանայ բոցեղ շրթնելու պչրանքին ներքև: Ձի մոռնանք, ունի նաև առփառիկ երկար մազեր, որոնք սակայն անհնազանդ են իրեն, այլապէս պէտք պիտի չունենար զանոնք կարգի բերելու հա-



մար թեւին մէկը անոնց յատկացնելու՝ որ զսպէ անոնց յորդումը . . .

Որքան գիտեմ, կարծեմ, ո՛չ ոք պիտի կարենայ հակառակը փաստել մեր այս դիմագծումին: Որովհետև այն տեսակ Ալեանաք մ'է որ մենք կը ճանչնանք:

Մեր աշխատանոցին դուռը գոցելու համար կրկնե՛նք իր խօսքերը:

Հանրւմ ֆեկնի շաքֆէն գարշը գարա՛ռնըսընը . . .

Լ. Ա. ԶՈՒՍ. ՐԹ.

Կէսիկ-փաւս

## ԶՈՒՍՐՃԱԼԻՔ ՄԸ ՃՌԱՆՍԱՀԱՅ ԿԵԱՆՔԻ

Կեսարացի ընտանիք մը եւս որ դեռ նոր էր եկեր Պոլլիս, հետեւելով իրենց կարգ մը հայրենակիցներուն՝ որոշեցին Ֆրանսա գաղթել: Ընտանիքին հայրը, Յակոբ աղա, աւնուս մը, քաջ ծանօթ Կեսարիոյ հռչակաւոր թրքերէնին՝ Ֆռանսերէն բառ մ'իսկ չէր գիտեր:

Հազիւ թէ չարաթուան մը Մառսէյլ եկած էին իրեն տղան որ Պեկօ անուամբ մկրտած էր, պատճառով մը լայու կ'սկսի: Մայրը ձանձրացած դուստրը կանչելով կը յանձնարարէ անոր որ երթայ ու հօրմէն առ մը ուզելով շաքար գնէ իր փոքր եղբոր:

Մայրամ, Յակոբ աղայի աղջիկը սենեակ մտնելով,

— Պապա պիտ առ վիտ:

— Վայ դրզըն փս՛յ, անևարև փաշքումևու դուշքուդումուզա աշրպ կևսկախևսկև եկօրխւմէյե դարշաևսուխ, շիևսիսե դաշխրպ սանս առ վիտեանէյիւմ քի դաշխս դէշիպ իշէսիև հե՛:


Ա. ԸՆԲԱՊԱՊԵԱՆ

Մարտէյլ

ՊԵՐՆԱԽՐԱՆԵՐՈՒ

ՄԵՐ ՉԵԿԱՆ

ԲԵԺԻՆ



# Մ Բ Օ Ր Դ Ի Ն Ա

## Վ Ե Ր Գ Ն Ա Տ Կ Ա Ր Ո Ւ Մ Ը (\*)



Հայ Պատանիներու Տարեցոյցին մէջ, որ, ըստ իր անուան, ամէնէն առաջ Հայ պատանիներու իրե՛նց սահմանուած է, ոչ մէկ նիւթ այնքան պատշաճ և շահեկան պիտի ըլլար որքան սրօրդի շուրջ դարձած խօսակցութիւն մը: Արդարև, մեր օրերու պատանիներուն ոչ մէկ բան այնքան սիրելի է որքան սրօրդը՝ սիւնեախին հետ: Ու ճի՛շդ անոր համար որ սրօրը ու սինեման պատանիներու ամէնէն շատ սիրած բաներն են, կ'արժէ՛ որ քննուի թէ ի՛նչ է անոնց օգտակարութեան կամ վնասակարութեան ատիճանը: Այսօրուան պատանին վաղուան քաղաքացին է. պէտք է գուրգուրալ անոր վրայ, պէտք է շատ զգուշ ըլլալ անոր ընդհուպ դատարակութեան գործին մէջ, որպէս զի այսօրուան պատանին վաղը ըլլայ իր ազգին համար կարելի եղածին չափ շատ օգտակար քաղաքացի մը, մանաւազ այնպիսի ազգի մը որ բացառիկ ճիգերու միջոցաւ պէտք ունի շատ աղէկ տնտեսելու իր ոյժերը՝ իր կեանքը պահպանելու համար:

Արդ, թէ՛ սրօրդը և թէ՛ սինեման իրենց թանկագին օգտակարութեան քով կը ներկայացնեն մեծ վտանգներ: Այս մէկ քանի տողերուն մէջ, նպատակս պիտի ըլլայ մատ-

[\*] Յօդուածիս ընդհանուր յատակագիծը առնուած է այն բանախօսութենէն զոր հեղինակը արտասանեց, 12 Մայիս 1926ին, Ազգ. Կեդրոնական վարժարանի աշակերտներուն:

նանիչ ընել սրօրդին կարեւորութիւնը՝ իբր Փիղիքական և բարոյական դաստիարակութեան միջոց, անոր վերգնահատման պէտքը՝ այս նպատակին ծառայելու համար, և, վերջապէս անոր վտանգները:

\*  
\* \*

Թէ՛ բնական (քալել, վազել, լողալ,) թէ՛ արուեստական (գործիքի միջոցաւ) սրօրդներու առաջին օգուտը սա՛ ըանին մէջ կը կայանայ որ բաց օդին մէջ և արեւուն կենսատու ճառագայթներուն տակ ապրելու առիթներ են անոնք, և այսօր դժուար է գտնել մէկը որ չգիտնայ բաց օդին մէջ և արեւուն ճառագայթներուն տակ ապրելու կարեւորութիւնը՝ առողջութեան համար: Բացօդեայ դպրոցները, պարապուրդից գաղութները, սանադորիօնները, ֆիւրերը տիեզերական համբաւ վայելող ձեռնարկներ են, և ջերմապէս պիտի յանձնարարէի հայ ծնողաց և հայ երիտասարդներու՝ օգտուիլ այն դիւրութիւններէն և առաւելութիւններէն զորս ամէն տարի կ'ընծայէ իրենց քաղաքիս Մ. Մ. Ս. Ա. ը (Ե. Ք. ընկերակցութիւն) Սև Ծովի եզերքը՝ Գիլիստի մէջ՝ հիմնած իր քէմբովը, Փիղիքական, իմացական և բարոյական առողջ կենցաղի երրեակ տեսակէտով:

Բայց եթէ քէմբը ամէն քսակի մատչելի միջոց մը չէ, ամէն մարդ կրնայ, օրինակի համար, ձրիաբար օգտուիլ բաց և մաքուր օդի մէջ քալելու մարզանքէն, որ պարզ և ձրի ըլլալուն համար չի դադրիր լաւագոյն մարզանքը ըլլալէ: Ինչո՞ւ ամէն մարդ, այր թէ կին, իրեն համար սովորութիւն չընէ, ամէն օր, կամ գոնէ կարելի եղածին չափ յաճախ օգտուիլ այս պարզ բայց արդիւնաշատ մարզանքէն: Ոչ մէկ արգելք կայ, բացի տգիտութենէն կամ օգտակար բան մը իր բարուց մէջ մտցնելու հաստատ և կորովի որոշում մը տալու համար անհրաժեշտ եղող կամքի տկարութենէն:

Այս մարզանքը, կարեւոր՝ ամէն մարդու համար, մասնաւոր կարեւորութիւն մը կ'ընծայէ անոնց համար որոնք աւելի նստողական կենցաղ մը ունին կամ ստիպուած են ունենալ:

Իսկ սբօրդները, առ հասարակ, բացի վերը յիշուած օգուտներէն, պատուական միջոցներ են մարմնոյն բոլոր գործարաններուն զարգացման, ջիզերուն ամրացման՝ որ մասնաւոր կարեւորութիւն մը ունի այն փափուկ տարիքին մէջ ուր ջիզերու թուլութիւնը աղէտներու պատճառ կ'ըլլայ՝ գիշութեան ձեւով: Սբօրդները որքան հաճելի նոյնքան զօրեղ հակազգեցուցեան միջոցներ են աղտոտ և վտանգաւոր հաճոյքներու դէմ, որոնց անձնատուր եղող կրիտասբօրդները պզտիկ թիւ մը չեն կազմեր դժբախտարար:

Միայն թէ, որպէս զի սբօրդը այս օգուտները ունենայ մարմնին համար, պէտք է յարգել մէկ քանի պայմաններ, որոնք բնդհանրապէս նկատի չեն առնուիր, և, այս պատճառաւ, օգուտները վնասներու կը փոխուին: Որոշ տարիքէ մը առաջ—միջին հաշուով տասնեւվեց—սբօրդի անձնատուր ըլլալ, ծայրայեղութեան տանիլ սբօրդական կեանքը, սբօրդով պարապիլ՝ առանց քննել տուած ըլլալու ընդհանուր առողջութիւնը և գործարաններուն (սիրտ, կրիկամունք, և ըն.) վիճակը, ասոնք են այն վտանգները զորս կը ներկայացնեն սբօրդները և որոնցմէ պէտք է զգուշանայ ո և է մէկը որ իմաստուն կերպով ապրիլ կ'ուզէ և իր անձին թըշնամի ըլլալ չուզեր:

\*  
\* \*

Բայց միայն մարմինը չէ որ կ'օգտուի սբօրդէն, և ա՛յս կէտն է զոր կ'ուզեմ շեշտել այս մէկ քանի տողերուն մէջ:

Արդի մանկավարժութեան մէջ, խաղը, բառին ընդարձակ առումովը, ընդունած է իբր կարեւոր ազդակ իմացական և բարոյական զարգացման: Անո՛վ է որ գիտելիքը և

բարոյական սկզբունքները կ'իւրացուին և գործի վերածուելու ոյժով կ'օժտուին :

Թէ սրօրդը կարեւոր ազգակ մըն է նկարագրի մշակումին, Անգղիացիները մեզի կը ներկայանան իբր ապացոյց այս տեսութեան. Բաւական է բաղդատել այս ժողովուրդին նըկարագիրը 1820 կամ 30 թուականէն առաջ և անկէ յետոյ, հաստատելու համար թէ ինչպէս սրօրդը, շնորհիւ Kingsley-ներու և Thomas Arnoldներու յարատեւող ճիգերուն, խաթարուած և ինկած բարքերը հետզհետէ ազնուացուց և հասցուց այսօրուան բարձրութեան, բարձրութիւն՝ որուն ամէնէն մեծ ապացոյցը կը գտնենք վերջերս Անգլիոյ մէջ տեղի ունեցած մեծ գործադուլին արտայայտութեան ապշեցուցիչ ձևին մէջ: Rugbyի քոլէճը որուն հոգին էր Arnold, Անգլիացիներուն քաւարանը եղած է: Ինքզինքը և ուրիշը գերազանցելու ճիգ, արիութիւն, ճարպիկութիւն, պաղարիւնութիւն, անձնագրագում, կարգապահութիւն, ուղղամբութիւն, սրօրդը առիթ կ'ընծայէ մարգելու այս մեծարժէք բարեմասնութիւնները: Եթէ ճշմարտութեան բացարձակապէս համաձայն ալ չըլլայ ըսել թէ սրօրդի մէջ ցոյց տուած այս յատկութիւնները երիտասարդը ցոյց պիտի տայ իր ընդհանուր կենցաղին մէջ ևս, անհաւանական չէ ընաւ որ սրօրդական անկեղծ ոգի ունեցող երիտասարդը աւելի զիւրաւ կարող ըլլայ մտցնելու զանոնք իր առօրեայ կեանքին մէջ:

Այս մէկ քանի պարզ խորհրդակցութիւններէն կը հետեւի թէ սրօրդին վերջնական նպատակն է մարդը ՄԱՐԴընել և ՄԱՐԴ հասցնելու տտակ սերունդ մը պատրաստել: Այս ըմբռնումը կը տիրէր հին Աթէնքի մէջ, ուր յայտնի է թէ լրջօրէն և բարձրօրէն ըմբռնուած էր սրօրդական կեանքը:

Կը տեսնուի թէ սրօրդը վերգնահատման կը կարօտի, և ո և է Ֆուդպօլի Միութեան մը փառասիրութեանը պէտք է ըլլայ բարոյական այս առաւելութիւնները ձեռք բերել՝ խաղին լուրջ կազմակերպութեամբ, Ringsleyներու և Arnoldներու ոգին դնել այդ խաղին մէջ, ոգի՝ որուն հետ չի կր-

նար հաշտուիլ բնաւ դրամաշահական տեսակէտը, և ակներև է թէ հայ ազգը, այն վիճակին մէջ ուր կը գտնուի ներկայիս, որքան պէտք սենի բարձրացման:

Ընկերային մեծ դեր մը կրնան ուրեմն կատարել մեր երիտասարդները՝ պարզապէս սբօրդի միջոցաւ, և եթէ այս մէկ քանի տողերը կարենան խորհրդածութեան և ինքնանփոփման գրգիռ մը ըլլալ սբօրդի սիրահար մեր երիտասարդներուն, իսկապէս բարեբաղդ պիտի համարեմ ինքզինքս Հայ Պատանիներու Տարեցոյցին համակրելի Խմբագրութեան կողմանէ աշխատակցութեան հրաւիրուած ըլլալուս համար:

Յ. Թ. ՀԻՆՊԼԵԱՆ

11 Յունիս 1926

Պ. Պոլիս, Բերա, Նշան Թաշ

«Նոր Դպրոց»

## Գ Ե Ղ Ե Յ Ի Կ Խ Օ Ս Ք Ե Բ

Ճշմարիտ ազատութիւնը կը կայանայ ո՛չ մէկ կիրքի հնազանդելուն մէջ:

Զգուշացի՛ր աննշան եւ սակայն աւելորդ ծախքերէ, փոքրիկ ճեղք մը կրնայ ընկղմել խոշոր նաւ մը:





ՅԵՏԱԴԱՐՁ ԱԿՆԱՐԿ ՄԸ ՊՈԼՍԱՀԱՅ ՄԱՐԶԱԿԱՆ  
ԿԵԱՆՔԻՆ ՎՐԱՅ 1925 - 26 ՇՐՋԱՆԻՆ ՄԷՋ

Հայ Պատանիներու Տարեցոյցին

Վերջացող տարւոյն մէջ Պոլսահայ մարզական կեանքը նախորդին հետ բաղդատամբ քիչ մը աւելի բեղուն եղաւ մասնաւորաբար արիքիքի եղանակին մէջ: Ինչպէս ամէն մարմին շրջանին վերջը իր հաշուեկշիռը կը ներկայացնէ հանրութեան անոր ձգելով իր գործին գնահատումը կամ քննադատութիւնը, այնպէս ալ պարտք կ'իյնայ մեզի տարւան սա վերջին քանի մը օրուան մէջ հակիրճ տեղեկութեամբ մը այս շրջանին մարզական անցուղարձը մանրադէտէ մը անցնել: Միջավայրի թոյլտուութեան հետ բաղդատամբ մեր խումբերը անցնող շրջանին թէ՛ Ֆուքպօլի, թէ՛ արիքիքի և թէ՛ տարբեր սփօրներու մէջ գոհացուցիչ արդիւնքներ կրցան ձեռք բերել: Այս շրջանին մեր ապրող խումբերուն թիւը տասնեակի մը յանգեցաւ որոնք օտարներու և մէկզմէկու հետ իրենց կատարած մրցումներուն մէջ բաւական լաւ յաջողութիւններ ձեռք կրցան բերել: Այս խումբերը, որոնք մասնաւանդ ի չգոյէ ստեղծուեցան և ներկայ շրջանին, նիւթական տեսակէտով ալ իրենց իւրովը տապկուիլ ջանացին, իրենց ձեռք բերած յաջողութիւններուն համար իրապէս գնահատելի են: Արաքս, Շիշլի, Պէրպէրեան, Պէզճեան, Էսաեան, Սամաթիա, Պագր-գիւղ, Ֆէօ, Խասգիւղ, Մեսրոպեան, Ռէտթար, Պալաթ, Շանթ, Հայ կղզի ահաւասիկ Պոլսահայ խումբերու գրեթէ բոլորը: Այս խումբերը միացնելով կեդրոն մը հաստատելու մասին եղած ծախքերը ապարդիւն մնացին դժբախտաբար այս շրջանին մէջ: Մար-

զական այս խումբերը ոչ մէկ պարագայի տակ, ձգեցէք նիւթականը, հանրութեան բարոյական օժանդակութեանը չարժանացան :

Չենք գիտեր ի՞նչու համար մեր հասարակութիւնը պաղ վերաբերում մը ցոյց կու տայ սբօրին և իր սիրահարներուն հանդէպ, երբ անդին իրենց զաւակները անբարոյացուցիչ մթնոլորտներու մէջ կը տուայտին : Միանգամայն հայ երիտասարդութեան մէկ շատ ջնջին մասն է որ բոլորուած է վերոյիշեալ խումբերուն մօտ իսկ անոր մեծ մասը, պառեռու քանսիկներու և անբարոյական վայրերու մէջ կ'անցնէ իր կեանքին ամէնէն թանկագին ժամանակը, երիտասարդութիւնը :

Յուսանք որ ներկայ շրջանին վերոյիշեալ խումբերէն ծնած Պոլսահայ մարզական ուժեղ կազմակերպութիւն մը մեր երիտասարդութեան թաւազլոր անկումին թումբ մը կրնայ ըլլայ : Անցեալ շրջանին թէ ինչն՞ր շահեցանք Փութպօլի, աթլէթիքի և այլ սբօրներու մէջ, մանրամասն գրել տարեցոյցին մէջ՝ աւելորդ պիտի ըլլար, այսու ամենայնիւ պիտի ջանանք սակայն ճշգրիտ մէկ մանրանկարը գծել վերջապէս տարւոյն մարզական կեանքին : Սկսելէ առաջ պարտք մըն է ամէնուս, շնորհակալութիւն յայտնել օրաթերթերուն որոնք իրենց սուղ էջերը երբեմն երբեմն տրամադրեցին մեր տղոց յաջողութիւններուն : Դիտակ շաբաթաթերթի մարզական բաժինն ալ կարեւոր ազդակ մը եղաւ հրահրելու համար մեր մարզիկներուն եռանդը : Զատիկէն սկսեալ 3 թիւ հրատարակուեցաւ նաև Արեւ մարզական շաբաթաթերթը : Ինչպէս պայմանադրական օրէնք է, այս տարի ալ մեր մեծ խումբերը իրենց լաւագոյնները կորսնցուցին : Այսպէս Արաքսէն Հրանդ Գալթաեան մեկնեցաւ Բարիզ, Շիբիէն Արտաշ որ մեկնեցաւ Եգիպտոս և Պէզճեանէն Լեւոն Մեսրոպեան մեկնեցաւ Մարտէլ :

Թե ի՞նչեր ըրինք Փութպօլի մեջ.—Ներկայ շրջանին սկիզբը Արաքս Մարմնակրթական Միութիւնը գոզելի նախաձեռնութիւնը ունեցաւ կազմակերպելու հայ խումբերու միջև

լիկ մաշեր որոնց մասնակցեցան Արաքս, Պէրպէրեան, Ֆէօ, Պէզճեան, Խասպիւղ, Ռէտտթար, Մեսրոպեան, Սամաթիա, կամքէ անկախ պատճառներով միայն չորս շաբաթ տեղի ունեցող այս լիկերը հետեւեալ արդիւնքը տուին: Սամաթիա Գումգարուէն, Ռէտտթար Խասպիւղէն, Ֆէօ Մեսրոպեանէն պարտուեցան և Արաքս ալ շատ կրակոտ և բուռն իսաղէ մը վերջ Պէրպէրեանի հետ հաւասար մնաց: Լիկերու այս ընդհատումին ընթացքին, Գումգարու և Խասպիւղ երկերկու կէտով առաջին զծին վրայ կը գտնուէին որոնց կը յաջորդէին Արաքս և Պէրպէրեան մէյմէկ կէտով: Այս լիկերէն առաջ Արաքս 0—2 կօլով յաղթեց Ռէտ-Սթարին Իւնիօն գլիւպին մէջ: Երբ Իւնիօն գլիւպի մէջ լիկերը տեղի կ'ունենային Շիշլի, Սբօրթինիկի յաղթելէ, Նիու Սթարի հետ հաւասար մնալէ վերջ՝ Բերա գլիւպէն և Անգլիացիներէն կը պարտուէր: Վերջին երկու խումբերուն հետ Շիշլի իր ըրած ուրիշ մըրցումներու միջոցին կը յաջողէր 1—1ով և 2—2ով հաւասար մնալ: Այս միջոցին Պէրպէրեան 2—3 կօլով կը յաղթէր Իֆէսթօս Բ.ի: Արաքս տկար կազմով Բերա-գլիւպէն 0—2 կօլով յաղթուելէ վերջ՝ իր ճիշտ կազմով 0—2 կօլով կը յաղթէր նոյն խումբին: Այս միջոցին տեղի ունեցող Շիշլի-Պէրպէրեան մրցումը 3—3ով հաւասար կը վերջանար որ Շիշլիի համար պարտութիւն մը պիտի ըլլար եթէ դատաւորին բացայայտ կողմնակցութիւնը չըլլար: Ֆրէնկեան և իր քիւքը ձեռնարկեցին հայ խառն թիմի մը կազմութեան և ուրբաթ առտու մը 22 Հայ ֆութպօլիստներ. Արաքսէն, Շիշլիէն և Էսաեանէն այդ թիմին կազմութեան համար մըրցեցան Սթատիօմի մէջ ի ներկայութեան Նիհատ պէյլի և Միզաքիլի: Սակայն չենք գիտեր ինչ անհասկացողութեան բերմամբ՝ այս ձեռնարկը ձախողեցաւ: Ամէն պարագայի տակ սակայն այս խնգրին մէջ մասնակցող խումբերէն աւելի նախաձեռնարկներն էին այս գործին ձախողման պատճառը, իրենց աճպարար որոշումներով: Կալաթա Սէրայ — Ֆէնէր պաղջէի նման մրցակցութիւն մը գոյութիւն ունի նաև Պոլսահայ մարզական երկու լաւագոյն կազմակերպութեանց՝ Ա-

րաքսի և Շիշլիի միջև : Այս երկու խումբերուն միջև այս տարի եւս որոշուած էր կատարել մրցում մը որ սակայն Շիշլիցիներուն, — որոնք այս մրցումին համար մինչև Իւնիօն գլիւպ եկեր էին, — անտեղի պատճառաբանութիւններով տեղի չունեցաւ հակառակ որ այս մրցման յաղթականին տրուելու համար Արաքսի կողմէ բաժակ մըն ալ տրամադրուած էր :

Ծնունդին տեղի ունեցող Շիշլի Պէղճեան մրցումը վերջացաւ Շիշլիցիներուն յաղթանակովը : Արաքս տկար կազմով մը և շատ գէշ օգի մը 0—1 կօլով պարտուեցաւ Ֆէնէր պողջէէն և կորովի պաշտպանողականէ մը վերջ : Արաքս էսստեան մրցումն ալ վերջացաւ Արաքսի 1—4 կօլի յաղթանակով : Արաքս 0—1 կօլով Պուլկար Սիլլալի և 0—2 կօլով ալ երկրորդ անգամ ըլլալով Բերա գլիւպին յաղթեց : Այս տարի երկրորդ անգամ տեղի ունեցող Շիշլի-Պէրպէրեան մրցումը 0—0ով և նորէն հաւասար արդիւնքով վերջացաւ :

Սթատիստի տնօրէնութեան կողմէ կազմակերպուած ոչ-թուրք խումբերու ախոյեանութեան քուրնուան այս տարի շահեցաւ Շիշլի-էստեան խառն խումբը Սրօթիկի և Նիւ Սթատի յաղթելէ վերջ լաւ խաղով մը և կազմով Իֆէսթօսին հետ ըրած Ֆիւնալ վերջին մրցումին 2—3 կօլով և Ֆէնէրի յաղթանակով վերջացաւ : Եթէ Շիշլիի վարիչները խառն թիմի կազմութեան ատեն քիչ մը աւելի բարեացակամ վերաբերմունք ցոյց տային, Պոլսահայ մարզական աշխարհին համար անպատուաբեր այս արդիւնքը յառաջ չէր գար : Ամառը, Հայ կղզիի մէջ կազմուած թիմ մը զտնազան մրցումներ կատարեց Շիշլի Ա.ի, Պէղճեան Ա.ի, Շանթի և Արաքս Բ.ի հետ ու գոհացուցիչ արդիւնքներ ձեռք ձգեց : Թէ՛ Արաքսի և թէ՛ Շիշլիի օտար խումբերու դէմ ձեռք բերած յաղթանակներուն և պատուաբեր արդիւնքներուն կուգայ միանալ նաև էստեանի Փուլթաօլի մէջ ունեցած եռանդուն դործունէութիւնը որ միասնաբար լաւ բարենիշ մըն է հայ Փուլթաօլիսթին համար : Երբ յունական խառն թիմ մը կը կազմուի ի՞նչու համար մենք ալ մերը

չունենանք երբ պամաններն ալ թոյլատու են : Ըստ մեզ , Հայկ. խառն թիմի մը ամենայաւ մէկ կազմը հետեւեալը կրնայ ըլլալ : Յարութիւն (Ա), Մոստիչեան և Վահէ (Ա), Համբար, Մովակիմ և Ալպէս, Մարտիրոս, Փասնակ, Լուտեր, Կարօ, հրայր : Շահագրգռուողներու ուշադրութեանը կը յանձնենք այս թիմը : Երբ նախորդ տարի Պոլսահայ խառն թիմը չարք մը մրցումներ ըրաւ այս տեսակէտով վերջացնող շրջանը շատ ամուլ անցաւ ինչ որ իրապէս ցաւալի է : Արաքս, Շիշի, Պէրպէրեան, Էստեան և Պէղճեան շնորհաւորելի են օտար խումբերու դէմ իրենց տարած յաղթանակներուն համար, և միւսներն ալ գնահատելի են գոնէ իրենց գոյութիւնը կարենալ պահպանելնուն համար : Փութպօլի մասին տուած այսքան մը տեղեկութիւնս բաւ համարելով կ'անցնիմ աթլէթիզմին որ ներկայ շրջանին աւելի պատուաբեր յաջողութիւններով լեցուն է :

Ներկայ շրջանին Բերա գլխաւի կազմակերպած ողիմպիականին 5000 մ.ի առաջնութիւնը շահեցաւ Պէրպէրեանէն Պ. Աւետիսեան որ լաւ արդիւնք մը ձեռք բերաւ որ միանգամայն Աթլէթիզմի ներկայ շրջանին հայերուս առաջին յաջողութիւնը եղաւ : Յուլիս 4ին Պէրպէրեանի կողմէ կազմակերպուած Քրօս-քընթիին մասնակցեցան 35է աւելի վազողներ որոնցմէ 1500 մ.ի ծանօթ րըֆօրսմէնը Կ. Թաշճեանը  $2\frac{1}{2}$  Ժամէ քիչ մը աւելի ժամանակամիջոցի մը մէջ մօտաւորապէս 7 քիլօմէթրոնոց դժուարին վազքի մը մէջ Ա. հանդիսացաւ, Բ. ելաւ Պ. Աւետիսեան : Մինչև Ե. եկողներուն Պէրպէրեանի կողմէ գեղեցիկ նուէրներ տրուեցան : Յատկանշական պարագայ մըն ալ այն է որ մասնակցող մարզիկներէն հազիւ 10 հատը կրցան լրացնել այս վազքը : Օգոստոս 6ին էր որ երկար պատրաստութիւններէ վերջ Արաքս Մարմնակրթականը տուաւ իր տարեկան Բ. ոլիմպիականը հետաքրքիրներու ստուար բազմութեան մը առջև, որոնք Իւնիօն գլխաւի ամբիթատրոնը լեցուցած էին : Պէրպէրեան ֆանֆառը իր

«իրայօժար մասնակցութիւնը բերած էր այս մարզահանդէ-  
 սին գեղեցիկ կտորներ նուագելով և Արաքսի Օր. և Պ. մար-  
 զիկներու տողանցքին աւելի փայլ մը տալով, մարզական և  
 կարգապահական տեսակէտով այս մարզասօճը յուսացուածէն  
 աւելի յաջող անցաւ, որուն հրաւիրուած էր նախագահելու  
 Գարեգին Եպսկ. Սաչատուրեան: Սոյն ողիմպիականը ներկայ  
 չըջանին Արաքսի ամենամեծ զոհողութիւնը միանգամայն  
 փառքը եղաւ: Հոս ծանօթ աթլէթ քօմբլէ Լուտեր Աղասեան  
 օրուան ախոյեան հոչակուեցաւ: Ի յայտ եկան նաև տա-  
 սընեակ մը նորահասներ, ինչպէս Վ. Գօնտուրճեան որ 35,67  
 մ. ի նման լաւ արգիւնք մը կրցաւ ձեռք ձգել նիդակի մէջ:  
 Յ. Յայրապետեան 400 և 800 մ. վազքերու մէջ: 200 մ. ի մէջ  
 Հ. Մազմանեան 26 $\frac{1}{5}$ '' ուղ, և Յ. Թազուրեան 26,7 մթ. ուղ  
 սկաւառակի մէջ և ուրիշներ ինչպէս Ռ. Քիւրքճեան (1500)  
 Մ. Գազանճեան (3000) և Յ. Ճիւլէրեան, Վ. Աբիկեան,  
 Վ. Մեսիսեան և այլն: Փափաքելի է որ յառաջիկայ չըջանին  
 ալ Արաքս նախորդին նման մարզասէր հասարակութեան  
 իրապէս մարզական վայելք մը ըմբռնինել տայ: Օգոստոս  
 6էն վերջ Օգոստոս 27 ն ալ մեզի ցոյց տուաւ որ Աթլէթիզմը  
 ինչպէս ամէն տեղ, Պոլսահայերումէջ ալ սբօրի ամէն ճիւ-  
 դերէն աւելի գերակշիռ դառնալ սկսած է: Շիրշի միութեան  
 կողմէ կազմակերպուած այս ընդհ. ողիմպիականին կը մաս-  
 նակցէին գրեթէ բոլոր հայ խումբերը 100է աւելի մարզիկ-  
 ներու հոյլով մը: Հ. Աճեան 10 $\frac{1}{5}$ '' ուղ 100 մ. ի մէջ, Մ.  
 Կուտուսեան 26 $\frac{3}{5}$ '' ուղ 200 մթ. ի մէջ, Յ. Հայրապետեան  
 1' ուղ 400 մթ. ի մէջ, Յ. Շիրինեան 2,19'' ուղ 800 մթ. ի մէջ,  
 Կ. Թաչճեան 3000 մթ. ի մէջ 11,16'' ուղ և 4' 38'' ուղ,  
 Պ. Աւետիսեան 5000 մթ. ի մէջ: Լ. Աղասեան 5,73 ուղ  
 1 քայլի մէջ, 1,0 ուղ հայ ճըմբի մէջ, 11, մթ. ուղ 3 քայլի  
 մէջ առաջին հանդիսանալով շահեցաւ օրուան ախոյեան  
 նութիւնը: Սկաւառակի մէջ Չաքրճեան և գունտի մէջ ալ  
 Մազլըմեան Ա. հանդիսացան: Դրօշարշաւը հիանալի վազ-  
 քով մը որ կտարեց հայկ. ուրբօրը՝ շահեցաւ Արաքս: (Աղաս-

եան, Հայրապետեան, Մաղմանեան ձիւպէրեան): Եթէ 3000 մթ.ի արդիւնքը վերցնենք յայտադիրէն դուրս տեղի ունենալուն համար՝ կէտերու առաւելութեամբ Արաքս Ա. կարգը կը գրաւէ որուն կը յաջորդէին Պէրպէրեան և Շիրլի: Այսուամենայնիւ ձեռք բերուած արդիւնքները միջավայրի պայմաններուն և պայքարին հետ բաղդատմամբ—որուն դժբախտաբար ենթարկուած է հայ մարդիկը—գոհացուցիչ և պատուաբեր են, և կազմակերպիչներն ու մասնակցող միութիւնները ամէն կենսով շնորհաւորելի են այս ձեռնարկին յաջողութեանը համար: Հոկտ. 1ին տեղի ունեցող և Բերա գլիւպին կողմէ կազմակերպուած ողիմպիականին մասնակցեցան մեր երկու լաւագոյն երկայն վազողները, Կ. Թաշճեան և Պ. Աւետիսեան որոնք յաջողեցան: 1500 մէթրի մէջ Ա. ելաւ Կ. Թաշճեան 4' 41"էն որ ամէն պարագայի տակ խարդուխուած արդիւնք մըն էր, Բ. ելաւ Պ. Աւետիսեան: 5000 մթ.ը որ շատ հետաքրքրական եղաւ և որուն Կ. Թաշճեան, Պ. Աւետիսեան և Ալի Րիզա պէյէ զատ կը մասնակցէր Սօֆիանոս—1500 մթ.ի Թուրքիոյ անպարտելի ախոյեանը—որուն հաստատած 4' 21"ի բըքօրը դեռ չէ կոտորուած, Կ. Թաշճեան և Սօֆիանոս մինչև 7րդ շրջան իրարու օձիք չձգեցին փոխնիփոխ խլելով առաջնութիւնը սակայն 7րդ շրջանին Սօֆիանոս ապակոստե եղաւ որուն յաջորդեց Թրդ շրջանին Կ. Թաշճեան և Ա. ելաւ Ալի Րիզա պէյ, իսկ երկրորդ Պ. Աւետիսեան: 2րդով բարձրութեան մէջ Բ. ելաւ նաև Ա. Սինանեան որ խոտամալից մարզիկ մըն է այս ձիւղին մէջ: Հոկտ. 22ի Արաքս-Շիրլի էնթէրգլիւպը ոչ մէկ արդիւնք չտուաւ որոշեալ դատաւորներու ներկայ չլլալուն և ֆրոնտեքր մը չգանուելուն համար՝ բացի երկու քոյր միութիւններու միջև գոյութիւն ունեցող վեճերը արծարծելէ և նոր ու սնտոի լրագրական պայքարներու դուռ բանալէ, ինչ որ անշուշտ խիստ ցաւալի է, վերջոյցնելէ առաջ աթլէթիքի այս մասն ալ, ինչպէս որ տեսնուեցաւ շատ բեզուէն էր—խրախուսական է մեզ ըսել թէ հայուհի մը Օրօ

Գալֆանան Բերա-գլիւպի կազմակերպած Ա. ողիմպիականին օրիորդներու միջև 50 մթ.ի վազքի, ոչժով բարձրութեան և մէկ քայլի մէջ իր հակառակօրդներուն յաղթելով Ա. հանդիսացաւ Ուրախ պիտի ըլլանք երբ լսենք թէ այս օրիորդը և Արաքսի օրիորդները որոնք իրենց միութեան կազմակերպած ողիմպիականին վազքեր և դրօշարչաւ կատարեցին յառաջիկայ շրջանին իրենց հետեւողներուննան: Այսքան մըն ալ աթլէթիզմի համար բաւ համարելով անցնինք պապիքսոլի և վօլիպոլի: Բերայի և Պոլսոյ Y. M. C. A. ներուն և Կէօղթէփէի ու Պէպէքի գօլէճներուն պասքէթ պօլի և վօլէյ պօլի թիմերուն մէջ ազգակից լաւ և ճարպիկ խաղացողներ ունինք: Սակայն մեր խումբերէն հազիւ մէկ երկուքը այս երկու ճիւղերը ունին ինչպէս Արաքս, Մեսրոպեան, Պէրպէրեան և Էսսեան: Վերոյիշեալ խումբերուն պասքէթպօլի և վօլէյ պօլի թիմերը տարւոյ ընթացքին իրարու հետ բարեկամական հանդիպումներ ունեցան և վերջերս ալ Արաքս Պոլսահայ խումբերու ախոյեանութեան համար կազմակերպեց պասքէթպօլի թուռնուամբ, յաղթականին տրուելու համար բաժակ մըն ալ տրամադրելով և որուն մասնակցեցան Արաքս, Մեսրոպեան և Պէրպէրեան: Ֆինալի մնացին Մեսրոպեան—որ Պէրպէրեանի յաղթեց՝ և Արաքս: Այս մրցումին Արաքս 20ի դէմ 26 կէտով Մեսրոպեանի յաղթելով Պոլսահայ խումբերու պասքէթպօլի ախոյեանը եղաւ: Մեսրոպեան ալ օտարներու հետ իր ըրած մրցումներով ներկայ շրջանին մեր կուրծքերը հպարտացնելու աստիճան յաջողութիւններ ունեցած է: Յառաջիկայ շրջաններուն փախաքելի է որ հայ խումբերը պէտք եղած կարեւորութիւնը տան այս խաղերուն և Արաքս, Պէրպէրեան և Էսսեան իրենց հետեւողները ունենան այս ճիւղերուն մէջ:

Հեծելանիւի մէջ մեր մեծ ախոյեանը՝ Աշոտ Մամիկոնեան ներկայ շրջանին մէջ կարգ մը մրցումներու մասնակցեցաւ



ու կրցաւ իր մակդիրը արգարացնել և պատուաբեր յաջողութիւններ ձեռք բերել: Մեր այս արժէքաւոր ախոյեանին արժէքը գնահատելու ատեն ցաւալի է մեզ ըսել թէ՛ այս շատ գեղեցիկ սբօրին հետեւող մեր նորահասները, ինչպէս Չարքճեան Վ. Իրանեան, և Ն. Պալեան, ներկայ շրջանին մէջ աչքառու յաջողութիւններ ձեռք չկրցան բերել: Եւ եթէ յառաջիկայ շրջաններու ուժեղ համագործակցութեան մը շնորհիւ, մեր մարդիկներու խումբերը կարենան աւելի լաւ արդիւնքներ ձեռք բերել երբեք չզարմանանք: Սակայն ամէն բանէ առաջ մարդական քոյր միութիւններու միջև գոյութիւն ունեցող սնտոի վէճերը բառնալու են:

Յառաջիկայ շրջաններուն՝ մեր խումբերուն և մարդիկներուն աւելի յաջողութիւններ մաղթելով կը շնորհաւորեմ նոր տարին:

Յ. Վ.

Պատր. գիւղ




ԱՐԱՐԱՍԻ և Մազրի Գիւղի խումբերու անդամակիցերը՝ լուսանկարուած Գառը-Գիւղի  
 Իւնիստի Գլխաւորին մէջ՝ Սիրուն Խումբի ողիմպիականին օրը։





Ա.Բ.Ա.Բ.Ս խումբի անդամախոսիկներն ու անդամները՝ օրջապատում Գարեգին Սրբազանն ու նախագահը և անդամները՝ Լուսաւնկարում Գառն-գիւղի Իւնիօն գլխաւից ակէ:

**ԳԱՏԸ - ԳԻՒՂԻ ԱՐԱՄԵԱՆ - ՈՒՆՃԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ**  
**”ԱՐԱՔՍ,, ԽՈՒՄԲԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ**  
**1925—1926 ՇՐՋԱՆ**



«Արաքս» խումբը ինչպէս գիտենք կազմուած է 1918ին Գատը գիւղի մէջ, և 4 տարուան տեւողութենէ մը վերջ անդամներուն արտասահման մեկնելուն ցրուած էր, 1921ին մի քանի երիտասարդներու ջանքերով վերակազմուած է։ Ունի 78 անդամ որոնց 18ը անդամուհիներ, 19ը պատուոյ անդամ, իսկ 43ը գործօն անդամ։

Միութեանս Վարչութիւնը կազմուած է հետեւեալներով. Պրն. Պ. Մարտիրոս Գուլումճեան Պատուոյ նախագահ, Համբարձում Զուլալեան Ա. Ատենապետ, Սպանդար Սարաֆեան Բ. Ատենապետ, Յակոբ Իպրանեան Ատենադպիր, Յակոբ Ճիւլպէրեան գանձապետ, Համբարձում Մազմանեան ընդհ. խմբապետ, Յովակիմ Հայրապետեան խմբապետ, Նուպար Աւետիսեան, Վաղարշակ Գոնտուրուճեան և Գուրքէն Իսկէնտէրեան խորհրդատու անդամներ։

Վերջերս Միութիւնս կազմակերպած է Պաւլիկոս պոլիէհայկական բաժակի բարձրագոյն Պէրպէրեանի Մեսրոպեանի և իր միջև և յաղթական հանդիսանալով բաժակին տիրացած է։ Միութեանս պասքէթպօլի Ա. թիմը հետեւեալ կազմը ունի. Լ. Աղասեան, Յարութիւն Թագաւորեան, Յովհաննէս Հայրապետեան, Սպանդար Սարաֆեան, Ստեփան Պէյլիքճեան։

Բ. խումբին կողմէ Համբարձում Մազմանեան, Յակոբ Ճիւլպէրեան, Արամ Օզանեան, Յակոբ Թէրզեան և Վարդան Արիկեան։

Ունի նաև թէ անդամուհիներու և թէ անդամներու վրէժ պօղի խումբեր ֆուրպօղի Ա. և Բ. թիւեր :

Միութեանս տարեկան ողիմպիականը շատ փայլուն կերպով տեղի ունեցաւ 6 օգոստ. 1926ին նախագահութեամբ Տ. Տ. Գարեգին Ս. Եպիսկոպի և առաջնորդութեամբ Պէրպէրեան Փանֆառի :

Մասնակցեցաւ նաև Հայկ. Ընդհ. Ողիմպիականին և կէտերու հաշուով Չրդ ելաւ : Իսկ Շիշլի-Սրաքս էնթէր քլիւպի ակթիւթիք մրցումներու մէջ ալ 53ի դէմ 73 կէտով յաղթական ելած է : Ինչպէս ամէն տարի այս տարի ալ 28 մայիս 1926ին արշաւ մը կատարած է Մեծ կղզի :

Միութիւնս կուգայ հրապարակաւ յայտնել իր շնորհակալութիւնը Գառը Գիւղի նորակազմ Թաղ. Խորհուրդին որ ամէն ջանք ի գործ դրաւ Միութեանս ողիմպիականին առթիւ : Պրն. Յարութիւն Քէհեաեանի որ 15 հատ Փօռմա նուիրեց, նաև Պրն. Հրանդ Գալֆաեանի (այժմ Բարիզ) որ Պասքէթ պօլի գնդակ մը ղրկեց խումբիս և Պրն. Օննիկ Պասամճեանի՝ որ նուիրեց Կարմիր Խաչի կազմած մը :

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՄԲԱՊԵՏ

«Ս.բաբա» խումբի



ՊՐՆ. ՀՍՄԲԱՐՁՈՒՄ  
ՄԱԶՄԱՆԵԱՆ ընդհանուր  
խմբապետ Արաֆս մար-  
մնակրթական Մ ի ու լ-  
թեան :



ՊՐՆ. ՆՍՊԱՆԴԱՐ ՍԱ-  
ՐԱՖԵԱՆ Արաֆս Մարմնա-  
կրթական Մ ի ու լ թեան  
«պատքէթ պօլի» Ա. թի-  
մին խմբապետ :

## ԵՐԲ ԱՌԱԻՕՏԵԱՆ ԱՐՇԱԼՈՅՍԻՆ ՊԻՏԻ ՔԱԼԷՔ

---

Երբ ամառուան ամէնէն տաք մէկ արշալոյսին դուրս ելած էք և մէկ քունի ժամուայ ճամբայ ունիք քալելիք, անշուշտ կը խորհիք թէ քիչ յետոյ պայծառ արև մը պիտի փայլի հորիզոնին վրայ և տաք պիտի ընէ, այդ խորհրդածութեամբ անշուշտ ձեր քով աւելորդ բեռ չէք առնիր և շատ թեթև հագուստով մը դուրս կ'ելլէք: Սակայն խորհեցէք միանգամայն որ ամէնէն զէշ պաղառութիւնները շատ անգամ առաջ կուգան առաւօտեան արշալոյսի ժամանակ տիրող խոնաւութենէն. ուստի ձեր քով երկու հատ գործածուած, (օրը անցած) թերթ առէք:

Ահա թէ ինչ պիտի ընէք այդ թերթերով:

Անոնցմով ինքզինքնիդ պիտի պատասպարէք խոնաւութեան դէմ հետեւեալ կերպով:

Թերթին միայն ճիշդ մէջտեղէն ձեր գլուխին չափ ծակ մը բանալով գլուխնիդ կ'անցնէք ապա թեւերնուդ տակ գոյացած թղթի աւելորդ մասերը մէյմէկ հանգոյց կը շինէք և ահա ունեցած կ'ըլլաք թեթև բաճկոնակ մը որ ձեզի գոհունակութիւն կը պատճառէ երբ խոնաւութեան ու զովութեան դէմ կոնակնիդ ու կուրծքերնիդ կը տաքցէ և որ սակայն բնաւ ցաւ չի պատճառէր երբ քիչ յետոյ արեւը փայլի և դուք զայն քաշէք ու պտտելով նետէք:

Տրանս. քարգմ. \* \* \*

---

ՊՐՆ. ՀԸ-  
 ՐԱՆԴ ԳԱԼ-  
 ՅԱՆԱՆ Առաքա  
 Մարմնակեր-  
 թական Միու-  
 թեան ամենա-  
 կարեւոր ոյ-  
 ժեղէն մին՝ որ  
 այժմ Բարիկ  
 Կը գտնուի, իր  
 հզորօր՝ ԹԱԼ-  
 ՐԱ ՊԵՅԻ մօտ:



ՊՐՆ. ՕՆՆԻԿ ՊԱՍՄԱ-  
 ՃՅԱՆ Առաքա Մարմնակեր-  
 թականէն, նոր բայց յա-  
 ջող երկար վազող մը:





Սահակեան Մարմնակրթական Միութեան անդամներու  
մէկ խմբանկարը, իրենց սեփական մարզավայրին մէջ

## ՍԱՀԱԿԵԱՆ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Սահակեան Մարմնակրթական Միութիւնը, յաջորդել  
եղաւ այն երկու միութիւններուն, որոնք իրմէ առաջ գո-  
յութիւն ունէին Սամաթիոյ մէջ՝ ճանչցուած՝ «Սիվան» և  
«Վահագն» անուններով: Այդ երկու խումբերը միայն փոք-  
րօրի խումբեր էին: Մինչդեռ ներկայ վարչութիւնը լաւ ըմ-  
բռնած ըլլալով մարզանքի ընդհանուր ձեւերով զարգա-  
ցումի անհրաժեշտութիւնն ու օգտակարութիւնը՝ այդ ուղ-  
ղութեամբ սկսած է գործել:

Սահակեան Մարմնակրթական Միութիւնը ունի 45 ան-  
դամներ: Տեղւոյս Թաղ. Խորհուրդը՝ վարչութեանս խնդիր-  
քին փրայ, տրամադրած է միութեանս եկեղեցւոյն շրջարա-  
կէն մաս մը:

Ա. ԵՆՆԱՎԵՆ  
Կ. ԴԶԻՐՅԱՆ

## ՊՈԼՍԱՀԱՅ ՈՂԻՄՊԻԱԿԱՆԸ

Օգոստոս 27ին, Իւնիօն գլխալի մէջ տեղի ունեցաւ Պոլսահայ Ողիմպիականը:

Շիւթի մարզական միութիւնը կազմակերպած էր. այս շատ կարեւոր մարզական հանդիպումը: Խանդավառութիւնը մեծ էր ամէն կողմ, բայց դժբախտաբար կարգապահութիւնը թերի էր, մանաւանդ երբ ժողովուրդը դաշտը կը խուժէր, տեղի տալով անվերջ զիտողութիւններու: Արդիւնքի տեսակէտով ողիմպիականը յաջող անցաւ:

Ասիկա առաջին քայլն է, և վստահ եմ որ ասկէ յետոյ ամէն տարի պիտի ունենանք մեր ողիմպիականները, աւելի յաջող կազմակերպութեամբ, աւելի ոգեւորութեամբ և մանաւանդ աւելի բազմութեամբ:

Պոլսահայութեան մէջ մարած մարզական շարժումին զարթումն է այս, իր առաջին սթափումին մէջ իր կենդանութեան ու յարատեւութեան վառ նշաններով:

Ամէն պարագայի մէջ, բոլոր թերիները, անտեսելով, շնորհաւորելի է է Շիւթի մարզական միութիւնը, որ ճամբան բացաւ, («նոր եռանդ մը դբաւ») մարզիկներուն սրտին մէջ, ինչպէս ոմանք ըսին:

Նոր աթլէթներու յաջողութիւնները ուրախալի են և շնորհաւորելի:

Մասնակցողներուն մէջ կային նոյն պէս աթլէթուհիներ և ախոյեաններ: 100 մէթր վազքի մէջ Հր. Աճէմեան (11<sup>3</sup>/<sub>5</sub> մթ. ով): Ուրիշ ախոյեան մը կարպիս Թաշճեան, 1500ի և 3000ի մէջ առաջին: Սկաւառակի մէջ Գ. Նարինեան, Հ. Մ. Ը. Մ. ի 1922ի ողիմպիականին ալ առաջին: Լուտէր Աղասեան, երեք ցատկելներուն մէջ առաջին (բարձր. մէկ քայլ, երեք քայլ) և օրուան ախոյեան:

Ահաւասիկ արդիւնքները:

100 մէթր վազք. — 1. Աճէմեան: 2. Կուտսուզեան: 3. Աղասեան (ժամ. 50.11<sup>3</sup>/<sub>4</sub>):

100 մէթր փոքրերու. — 1. Քէրէստէճեան: 2. Եէսիսեան, 3. Մինասեան (ժամ. 12<sup>4</sup>/<sub>6</sub>):

Երկաթ ցետի. — 1. Մազուճեան, 2. Թազուրեան, 3. Ե. Մազուճեան (մթ. 9, 10):

1500 մէքր վազֆ. — 1. Կ. Թաշճեան, 2. Շիրինեան,

3. Ծատուրեան (ժամ. 4, 38 <sup>2</sup>/<sub>5</sub>):

Բարձր. ցաւկի. — 1. Աղասեան, 2. Գազազեան, 3.

Հայրապետեան (ժամ. 1, 53):

400 մէքր վազֆ. — 1. Հայրապետեան, 2. Արիկեան,

3. Եղիազարեան (ժամ. 1.):

3000 մէքր վազֆ. — 1. Թաշեան, 2. Մանուկեան, 3.

Փէշտիմալճեան (ժամ. 10, 16): ° °

Սկաւառակ ցետի. — 1. Նարինեան, 2. Պետոնեան, 3.

Աշուրեան (մէթ. 27, 45):

200 մէքր վազֆ. — 1. Կոտտուզեան, 2. Մազմանեան,

3. Զպուքճեան (ժամ. 17, 1<sup>1</sup>/<sub>4</sub>):

800 մէքր վազֆ. — 1. Շիրինեան, 2. Հայրապետեան,

3. Աւետիսեան (ժամ. 2, 14<sup>1</sup>/<sub>5</sub>):

Չողով բարձր. ցաւկի. — 1. Պէրպէրեան, 2. Սինանեան,

3. Եսայեան (ժամ. 6, 49):

Մեկ ֆալլ ցաւկի. — 1. Աղասեան, 2. Ճիւպէրեան, 3.

Աճէմեան (ժամ. 5, 73):

Երեք ֆալլ ցաւկի. — 1. Աղասեան, 2. Աճէմեան, 3.

Ճիւպէրեան (մթ. 11, 61):

500 հեծելանիւ. — Զարքչեան, 2. Իրանեան, 3. Պալեան

(ժամ. 10, 43 <sup>2</sup>/<sub>5</sub>):

5000. վազֆ. — 1. Աւետիսեան, 2. Կ. Թաշճեան, 3.

Ծատուրեան (ժամ. 19, 35):

Ծանրութիւն վերցնել. — 1. Սրմաքչչեան, 2. Մազ-

լուճեան (74 քիլո):

Դրօսարժաւ (4 × 100). — 1. Արաքս ուշագրաւ էր նոր

մարզիկներուն յաջողութիւնները, ասոնցմէ Պերճ Աւետիսեան

1000ի Ա. : Ար. Սինանեան ձողով, բարձր. ցաւկիւու Բ. : Հրանդ

Գազազեան բարձրութեան ցաւկիւու Բ. : Շիրինեան 100ի

Ա. և 1500ի Բ. եւայլններ :

**ՊՐՆ. ՊԵՐՃ ԱԻՆՏԻՍ-**  
**ԵԱՆ ՊԵՐՊԵՐԵԱՆ** ճար-  
 արանէն, նոր բայց յա-  
 ջող վազող մը որ կըրկ-  
 նակի կերպով 5000 մթ.ի  
 առաջնութիւն շահած է  
 Միջազգային և Հայկա-  
 կան ոլիմպիականներուն



**ՊՐՆ. ԶԱՐԵՀ ՔԻՒՐՔԵԱՆ**  
 Սամաթիայէն, նոր և յաջող  
 բարձր. ցատկող մը:

**ՅՈՒԹՊՈՒԼԻ ՄԷՋ ՍԷՆՏԻ ԶԱՅՊԻՔԻՆ**  
**ՈՒՆԵՑԱԾ ԿԱՐԵՒՈՐՈՒԹՅՈՒՆԵՐ**

---

Ֆուլթոնի մէջ մարմնական յատկութիւններու պէտք ցոյց տուող վայրը, միջնապահի դիրքն է: «Սէնթր հաֆպէք»ը խաղը սկսելէն մինչև վերջ, այդ պաշտօնը առանց կենալու կատարելէն դատ, պէտք է որ խաղն ալ լաւ մը հասկըցած ըլլայ: «Սէնդր հաֆպէքը, խուճբին հիմն է» այսինքն «խուճբին հոգին է» բացատրութիւնը շատ ճիշտ է, ինչու որ ֆուլթոն խաղացող խուճբի մը բոլոր յարձակումները, սէնդր հաֆպէքին ազդեցութեան ներքև տեղի կ'ունենան, խաղավայրին և խուճբին մէջտեղը գտնուող սէնդր հաֆպէքի պաշտօնը՝ խաղացողի մը բոլոր կարողութիւնները ցոյց տալու ամենայարմար վայրն է. բայց այդ պաշտօնին կատարումը շատ դժուար է. ինչու որ ամբողջ խուճբի մը խաղին վրայ կ'ազդէ:

Սէնդր հաֆպէքը հակառակ այդ խուճբին գերակշռութեան, կատարուած խաղին մեծ մասը իր վրայ կը կրէ. ի՞նչ խուճբը հակառակորդ կողմին վրայ առաւելութիւններ ունեցած ատեն, մեծ դեր մը կ'ունենայ այդ բոլոր յարձակումներուն մէջ, որոնց իր մասնակցիլը պէտք է, բայց պիտի առարկուի թէ միւս հաֆպէքները թէ՛ պաշտպանողականի և թէ՛ յարձակման մասնակցիլ պարտաւոր են. ասիկայ անկասկած է, բայց ոչ մէկ խաղացող սէնդր հաֆպէքի նման ընկերներուն տիրող և օգնող է: Այս պատճառով է որ, ըլլան հանդիսատես կամ խաղացող բոլոր ֆուլթոնի սիրահարները, համակարծիք են ընդունելու խուճբի մը սէնդր հաֆպէքին նման խաղ մը խաղալը:

Ծանր բայց խելացի սէնդր հաֆպէքներու առաւելութիւնները և պակասութիւնները իրարու համեմատ ըլլալով կրնան կանոնաւոր խուճբեր կազմել:

Գեանէն խաղացող, վստահ վաստեով յառաջացող խումբի մը սէնդր հաֆպէքը պէտք է այդ տեսակ խաղայ: Ընդհակառակը եթէ «եկած»ին հարուած մը տայ կամ օդէն խաղայ խումբն ալ կ'սկսի ազդուիլ այդ ձեւէն:

Խումբի մը շուտ և կանոնաւոր խաղալը միայն սէնդր հաֆպէքին կապուած է. եթէ անիկայ անճարակ մէկը ըլլայ՝ խումբը կը տուժէ, մինչդեռ երբեք չաճապարող ոչ մէկ բան վտանգի ենթարկող և քաներն ալ կանոնաւոր տուող սէնթի հաֆպէքի մը խումբին խաղը լաւ կ'ըլլայ: Այս պատճառով է որ սէնթր հաֆպէքը ֆութպօլը շատ լաւ դիտցող խաղացող մը պէտք է ըլլայ, և այս առաւելութիւնը անոր կարգ մը թերութիւնները կը դոցէ: Խումբի մը մէջ, նիհար խաղացող չընդունուիր այս պաշտօնին համար, ինչպէս ըսինք ամբողջ խումբին ծանրութիւնը իր վրայ է:

Սէնթր հաֆպէք՝

ՀԱՄԱՆՔՈՒՄ ՄՍԶՄԱՆԵԱՆ



ՊՐՆ. ՌՕՋԷԹ ԲԻԻՐԲ-ՁՆԱՆ «Մ.բախ» մարմնակերպկանէն յաջող երկար վազող մը որ վերջերս Ամերիկա, մեկնեցաւ:



ՊՐՆ. ՅՍՐՈՒԹԻՒՆ ԹԱԳՎՈՐՆԱՆ «Մ.բախ» մարմնակերպկանէն Պալատիայոց եւ իր խումբին լաւագոյն բերդապահը:

## ԼՈՒՏԵՐ ԱՂԱՍԵԱՆ

«Արաքս»ի ֆուլթալի թ. թիմին կեդրոնի յառաջապահը և լաւագոյն մարզիկը որ միանգամայն Պոլսահայերու աթլէթ քոմիւէն է առաջին անգամ տեսնելու պատահութիւնը ունեցայ Արաքս-Մօտա մրցումին որուն մէջ վերջինները պարտուեցան 0—1 կօլով: Դէմքով չափազանց համակրելի



և բ՛ութեամբ ալ ընկերական այս մարզիկը, բազմազան մարմնակրթական յատկութիւններով՝ իրաւամբ արժանի է աթլէթ քոմիւէի տիազոսին որուն միակ աւանդապահն է ներկայիս, Պոլսահայերու մէջ: Ծնած է 1907ին Օվաճրգի մէջ և իր նախնական կրթութիւնը ստացած է Պէրպէրեան վարժարանը ուրկէ կ'ըսկըսի իր մարզական կեանքը և որուն 1921 շրջանի տարեկան աթլէթիքի մրցումներուն մէջ օրուան

Բ. ախոյեան հանդիսանալով իր առաջին յաջողութիւնը ունեցած է: Իր մշակած աթլէթիքի ճիւղերուն մէջ ընդհանրապէս ղինքը զբաղեցնողներն են, ոստումները և մասնաւորաբար ոյժով բարձրութիւնը որուն մէջ մինչև 1.67<sup>1</sup>/<sub>2</sub> մէթ. կըցած է բարձրանալ կէօղթէփէի Ամերիկեան վարժարանին 1924ի տարեկան մրցումներուն մէջ ի ներկայութեան նոյն վարժարանին համակրելի տնօրէնին, և առանձնապէս Ռօպէրթ զօլէճէ հրաւիրուած դատաւորներուն ինչ որ անուղղակի կերպով պատասխանն է Պ. Ալէքս Մէկըրտիչեանի թերահաւատութեան այս արդիւնքին մասով 1924ի վերջերը փակուած «Աւետիս»ի մարզական բաժնին մէջ:

Նոյն օրը չահած է նաև օրուան ակոյեանութիւնը: Նոյն տարին Քիլիոսի քէմբին մէջ կատարուած § 1924ին ակթլէթիկի մրցումներուն մէջ 24 կէտով օրուան ակոյեանութիւնը շահած էր. Լուտեր Աղասեան կատարեալ մարզիկ մը ըլլալով հանդերձ քաջ ալ լուզորդ մըն է և քանիցս առաջնութիւններ չահած է կէօզ թէփէի Ամերիկեան վարժարանին մէջ և 1924ի ամառը Քիլիոսի քէմբին մէջ ալ 16 կէտով լողալու ակոյեանութիւնը շահած է:

Ինչպէս ըսինք մարզիկ մը և լուզորդ մը ըլլալէ վերջ ֆութպօլիսթ մըն ալ է Արաքսի կեղրոնի յառաջապահը ըլլալով և քանիցս անգամներ ալ նախորդ տարիներու մէջ հայ խառն թիմերու անդամակցած է: Ներկայիս ալ չենք գիտեր կարգ մը տկարամիտներ ի՞նչու կ'անտեսէին զինքը հայ խառն թիմերու կազմութեան մէջ իբրև յառաջապահ: Ամէն պարագայի մէջ իբրև «սէնդրֆօր» կարեւոր ոյժ մըն է: Իր հիանալի և կատարեալ «բաս» բաժնելը ու արագ խաղը կը կազմեն նաև իր ֆութպօլիստի կարեւոր յատկութիւնները:

Հետեւաբար կը յանձնարարենք Արաքսի յետ այսու հայ խառն թիմերու կազմութեան մէջ այս կարեւոր ոյժը անտեսել չտալ յօգուտ Պոլսահայերուս մարզական պատիւին բարձր պահպանմանը: 1925ի ամառը ան կեցած բարձրութիւնը 1.58 մէթ. ցատկած է որ բաւական լաւ արդիւնք մըն է:

Եւ վերջապէս այս տարի երբ Պոլսահայ մարզական կեանքը ակթլէթիկի տեսակէտով բաւական բեղուն շրջան մը անցուց, ան միշտ փայլեցաւ բոլոր մարզատօներուն մէջ:

Օգոստոս 6ի Արաքսի ողիմպիականին 100 մէթ.ը 11<sup>8</sup>/<sub>6</sub>'' էն առնելով Ա. ոյժով բարձրութիւնը 1.49 մէթ.ով Ա. և մէկ քայլն ալ 5.75 մէթ.ով Ա. և հետեւաբար ալ օրուան ակոյեան: Օգոստոս 27ի ընդհ. ողիմպիականին 100 մէթ.ի մէջ Գ. ելաւ. և սակայն եթէ իր երկու հակառա-



կորդները չգողնային (չահագրգռուողներուն կը յանձնարարեմ այս բառը իր նիւթական իմաստով զարնել) վտահ եմ թէ ան դիւրին յաղթանակ մը շահելու արգելք պիտի ըլլար: Եւ սակայն ան իր այս պարտութեան փոխարէն բոլոր ուստումները առաւ չախչախիչ պարտութեան մը մատնելով կարող մարդիկ մը եղող Հ. Աճէմեանը: Մէկ քայլը 5.73 մ. ուղ, ոյժով բարձրութիւնը 1,53 մ. ուղ և 3 քայլն ալ մ. ուղ Ա. հանդիսանալով խից օրուան ախոյեանութեան դափնին: Կենսագրական այս հակիրճ դիժերը և տեղեկութիւնները բաւ են կարծեմ իր յայտ բերելու այս ճշմարիտ սքոթլանդէն իրական արժանիքները: " "

Ով ինչ կ'ուզէ թող ըսէ ան դեռ երկար ատեն պիտի մնայ իր բարձրութեան վրայ թէ իբրև միակ աթլէթ քօմբլէն Պոլսահայերու և Արաքսին որուն կարող սենթօրվրսն է և պասքէք պօլի թիմին լաւագոյններէն մին:

Յ. Վ.

Գաւար-գիւղ



ՊՐՆ. ՏԻԳՐԱՆ ՃԻՒՊԷՐՅԱՆ,  
Արաքսէն լաւագոյն երկար  
վազող մը

ԳԱՍՏԻԱՐԱԿՈՂ ՄԱՐԶԱՆԲԸ

Հետևեալ փորձերը եօթը վայրկեան առաւօտեան և եօթը վայրկեան երեկոյեան կրկնել՝ բանեցնելու համար մեր բոլոր զնդերներն ու գործարանները՝ կատարեալ կերպով:

Առաջին վայրկեան.— Հիւնական դիրք. պատկեր 1 և 2. Ոտքի կեցած մարդու մը բնական դիրքը:

Գլխու Եարժումներ.— Պատկեր 3, 4, 5 և 6. Վզի և ծոծրակի զնդերները թուլցնել (assoupli)՝ իսկ գլուխը՝ վեր և հանգիստ պահելու է:

Երկրորդ վայրկեան.— Բազուկի եւ ոսքի շարժումներ. պատկեր 7, 8, 9, 10. Բոլոր յօդերը թուլ ձգել, զնդերներու մշակում, հանգիստ և թեթեւ շարժում:

Երրորդ վայրկեան.— Ողնային ձգում. սարսժում. պատկեր 11, 12, 13. Ողնայարի վերուզղում, կուրծքի աճում:

Չորրորդ վայրկեան.— Հաւասարակշռումներ. պատկեր 14, 15, 16 և 17. Չղային դրութեան յարդարում: Շարժման շարկարգում: Հանգիստ դիրք՝ գնացքի և սովորական դիրքի:




Հինգերորդ վայրկեան.— Մեջքի մարզակ. պատկեր 18, 19 և 20. Ողնայարի սիւնի և կուրծքի զնդերներու (assouplissement) ուսերու զօրութիւն՝ ծանրութիւն մը կրելու համար:

Վեցերորդ վայրկեան.— Որովայնային դնդերներու վարժարիւն. պատկեր 21, 22 և 23 որովայնի զնդերներու յաւելում, թանձրամորթութեան և աղեթափութեան բուժում:

Եօթերորդ վայրկեան.— Շնչառական փորձ. պատկեր 24. Թոքերու բարելաւում, վանդակի ոսկորներու ձկունութիւն, և արեան արագ փոփոխում՝ թթուածինի: (Բերանը գոց վիճակի մէջ երկար, խորունկ և ախորժակով ներշնչումներ ընել, յետոյ նոյնքան կատարեալ և բերանաբաց արտաշնչում մը):

Ապա գազրեցնել փորձերը որպէսզի գործարանաւորութիւնը իր հանգիստը վայելէ:

Ֆրանս. քուգ. \* \* \*



Գասխարակոյ մարզանքի շարժումները

## ՔԼԻՎԼԵՆՏ ՀՕՏԼԻ ՏՕՃ

### ՊՂԻՆՁԻ ԵՒ ԲԱՐԻՔԻ ԻՇԽԱՆ

Թերթերը մէկ քանի ամիս առաջ գուժեցին մահը Քլիվ-  
լենտ Հօտլի Տօճի, պղինձի լիշխանին և համաշխարհային  
բարերարին՝ որուն մենք եւս կը պարտինք անհուն երախ-  
տագիտութեան բաժին մը :  
Ինք եղած է հիմնադիրը  
Մօտաւոր Արեւելքի Նպաս-  
տամատոյց Ընկերութեան և  
ամենամեծ բարերարը Երի-  
տասարդաց Քրիստոնէական  
Ընկերակցութեան :



ՔԼԻՎԼԵՆՏ Հ. ՏՕՃ  
1860—1926

Նպաստամատոյցի գոր-  
ծին մէջ, իր ցոյց տուած  
նախանձախնդրութեան և  
և գոհողութեան դրուատի-  
քը կ'ընէ Մր. Չարլզ Վի-  
քրրի, և կը կոչէ զինք  
զինք ճիմնադիրը, զան-  
ձապետը, մեկնասը,  
պահապան ոգին այդ հաս-  
տատութեան : Իր յիշատա-  
կին նուիրուած Մր. Վիքրրի  
փոքրիկ գրքոյկէն կը քաղենք հետեւեալը :

Հիմնադիրը, գանձապետը, մեկե-  
նաւոր և պահապան ոգին, Մօ-  
տաւոր Արեւելքի Նպաստամա-  
տոյցին

Մր. Տօճի գրասենեակին մէջ է որ տեղի ունեցած է հիմ-  
նադրութիւնը Մօտաւոր Արեւելքի Նպաստամատոյց Ընկե-

րութեան 1925: Սեպտ 6ին Ինք է որ առաջին առթիւ 60,000 տոլար տրամադրած է այդ նպատակին համար, ըստ որում անմիջապէս հեռագրուած է որբերու և տարագրեալներու օգնութեան ձեռնարկել: Ստանձնած է նաև Նպաստամատոյցի ծախքերը հոգալ իր գրպանէն, այնպէս որ «Իւրաքանչիւր տօլարի 100 սէնթն ալ կը գործածուի օգնութեան գործին համար, և ո՛չ մէկ սէնթ կը վատնուի ծախքերու համար, կ'ազգարարէր Նպաստամատոյցը»:

Առանց Մր. Տօճի Նպաստամատոյցը գոյութիւն պիտի չունենար հաւանաբար, և առանց իրեն՝ երբեք պիտի չզարգանար այդ ընկերութիւնը, այնքան արագ և այնքան ընդարձակ ծաւալ գտնելով՝ որ 100,000,000 տոլարի գումար մը ունենար իր տրամադրութեան ներքև, եթէ չըլլային Մր. Տօճի առատաձեռն նուէրները՝ և իր խրախոյս ներշնչող առաջնորդութիւնը:

1919ին աշունին, երբ Կովկասի մէջ ամէն օր 1,000 Հայեր կը մեռնէին անօթութեւէ և մէկ միլիոն Հայերու կեանքը վտանգի մէջ կը գտնուէր, Նպաստամատոյցը պէտք տեսաւ առ նուազն 15,000,000 տոլարի հանգանակութեան մը ձեռնարկելու, կարենալ դիմադրելու համար մօտեցող ձմրան դժուարութիւններուն: Յայտնի է թէ այդ գումարը անմիջապէս կարենալ հանգանակելու համար բացառիկ ծախքերու պէտք կար: Ոչ ոք մտքէն կ'անցնէր զիմել Մր. Տօճի և խնդրել որ իր արդէն ըրած մեծ գոհողութիւններէն աւելի բան մը ընէ: «Բայց ես» կ'ըսէ Մր. Չարլզ Վիքըրի զիմեցի իրեն և ըսի թէ պիտի թոյլատրէ՞ր որ քանի մը մարդոց պարզէի կացութիւնը և խնդրէ անոնցմէ որ իր ծախքերու համար յատկացուցած գումարին նման պիւտճէ մըն ալ իրենք ստանձնեն բանալ մեղի, որպէսզի կատարուի պէտք եղած աշխատութիւնը և հանգանակուի 15,000,000 տոլարի նպաստը»:

«Տակաւին ո՛ւէ մէկուն առաջարկ մի՛ ընէք,» պատասխանեց. «անգամ մը խորհիմ այդ մասին»:» Քանի մը օր

վերջ կ'ըսէր. «Այդ ծախքերու յատկացուելիք բացառիկ գումարին համար ուէ մէկուն գիւմում չ'ընէք. ես ինքս պիտի պիտի հայթայթեմ 100,000 տոլարի բացառիկ գումարը, և ուրիշ ինչ որ պէտք ըլլայ գործին իրականացման համար:»

Երբ Վիքրրի շնորհակալութիւն կը յայտնէ իրեն և կը հիանայ իւր առատաձեռնութեան՝ որ ոչ միայն Նպաստամատոյցի ամէն ծախքերը կը հոգար, Ամերիկեան Կարմիր Խաչին նուիրած էր 1,000,000 տոլար Ե. Ք. Ը. Նախագահը և մեծագոյն Բարերարն էր, այլ նաև Պատերազմի Օգնութեան Մատուկին ամենամեծ գումարներ կը հայթայթէր: Եւ զարմանալի էր թէ ինչպէս միշտ պատրաստ և կարող էր ընել այդ ամէնը:

«Վիքրրի,» պատասխանեց Մր. Տօճ, «երբ այս ահուկ պատերազմը ծագեցաւ, զիտէի թէ ամէնս ալ պիտի ունենային մեր փոքրիկ բաժինը կատարելիք. բայց որոշած էի չթոյլատրել ինքզինքս որ ամենագոյզն չափով օգտուիմ անկից: Կան մարդիկ որ կը կարծեն թէ պատերազմէն օգտուողներէն ենք: Ի՞նչ կրնանք ընել, կառավարութիւնը պղինձի պէտք ունի, և մենք ալ պղինձ ունինք: Կառավարութիւնը կ'որոշէ պղինձի գինը՝ և ո՛չ թէ մենք: Կառավարութեան որոշած գինէն մենք կ'օգտուինք: Բայց որոշած եմ որ «այս արիւնի դրամեն եւ ո՛չ մէկ սէնք պիտի կառոյցի իմ մասներու:» Ի՞նչ համեստ պատրուակ բարեսիրութեան:

Նպաստամատոյցի ամենամեծ նուիրատուն, միլիոնաւոր կեանքերու ազատարարը և հազարաւոր որբերու պաշտպանը՝ հարուստ էր նաև իր հաւատքով:

Գրքոյկին հեղինակը կը պատմէ թէ ինչպէս երբ ընդհ. պատերազմի ազէտը մէկ միլիոն զաղթականներ որուած էր Եգէական ծովուն եզերքը Նպաստամատոյցի գործիչները իրենց պահեստի գումարը կեանքեր փրկելու համար գործածած էին, և բոլորովին սպառած էին գոնձին մէջ մնացած դրամը: Հաշուեկշիռը խոշոր բաց մը ցոյց կուտար: Ընկերութեան նոյնիսկ անդամներէն ոմանք կ'առաջարկէին պատուաւոր

կերպով գոցել Նպաստամատոյցի որբանոցները, առարկելով թէ ամերիկացի հասարակութիւնը ձանձրացած էր տալէ և պիտի չչարուհակէր իր օգնութիւնը: Բանաձև մը ներկայացուեցաւ ժողովին որ կը պահանջէր վեց ամսուան շրջանի մը մէջ փակել Նպաստամատոյցի ամէնէն կարեւոր մէկ ճիւղը՝ ուրկէ կախում ունէր 10,000 որբերու բարօրութիւնը և ապագան: Այնպէս կը թուէր թէ առաջարկը պիտի ընդունուէր: Մր. Տօճ ոտքի ելաւ խօսելու: Յիշեց անուրի երաշտութեան մը պարագան՝ որ անգամ մը Նիւ Ճըրզիի և Նիւ Եօրքի քաղաքներէն ոմանց չը սպառնար: Ըսաւ թէ մէկը թելադրեց որ աղօթեն անձրեւի համար: Ոմանք առարկեցին թէ օգուտ ունէ՞ր աղօթել անձրեւի համար: Մր. Տօճ կարծիք չի յայտնեց թէ աղօթքը անձրև բերաւ թէ ո՛չ, բայց անձրևը եկաւ, առատ և անընդհատ: «Եւ հիմայ,» ըսաւ Մր. Տօճ «կ'առաջարկեմ որ մեր յանձնախումբը՝ դրամական հարցերու այս խիստ օգտակար վիճաբանութենէն վերջ, խմբովին երգէ

«Մեր հայերու հաւաստի՛ր՝ որ պի՛ս ապրի սու յարեւ,  
Հուրի, սուրի եւ բակի արհաւիրքին հակառակ.»

Եւ անա այդ քաղքենի ճաշարան ակումբին մէջ՝ ուր գործի մարդիկ շուրջի սենեակներուն մէջ երկաթուղիի, շոգենաւային ձեռնարկներու և ճարտարարուեստի զրամական հարցեր կը յուզէին, Բիլվէնտ Հ. Տօճ, Գօլէճի խրախճանքներու առաջնորդի մը և եկեղեցական երգչախումբի վարպետի մը եռանդով՝ դեղեւոզ գործադիր մարմինը կը վարէր «Մեր Հայերու հաւատքը» երգով: Նիստը վերջացած էր: Որբանոցները չգոցուեցան: Դրամը եկաւ: Գործը շարունակուեցաւ: Պիւտճէի բացին յաջորդեց յուելուածական գումար մը գտնձին մէջ. և «Մեր Հայերուն Հաւատքը» որ իր մէջ մարմնացած էր՝ տակաւին կ'առաջնորդէ մեզ համաշխարհային եղբայրակցութեան նպատակին:

Հինգէ աւելի սերունդներէ հետէ, մահը՝ Տօճերու ընտանիքին համար եղած է հանդրաւանը աւելի ճոխ կեանքի մը: Քիչ Ամերիկացի ընտանիքներ՝ եթէ կան երբեք ուրիշներ, իրենց չափ կատարեալ և յարատե մարդասիրական ծառայութեան յիշատակ մը ձգած են իրենց ետին շատ մը յաջորդական սերունդներու կեանքերուն ընթացքին: Քլիվլէնտ Հ. Տօճ պիտի չարունակէ ապրիլ ու ծառայիլ մարդկութեան, ոչ միայն իր ընտանիքին անձնուէր անդամներուն միջոցաւ, այլ նաև հարիւրաւոր, հազարաւոր Ամերիկացի թէ օտար ուրիշ երիտասարդ այրերը և կիներու միջոցաւ՝ որոնց ներշնչած է բարձրագոյն և առաւելապէս անձնուէրաց ծառայութեան մը օրինակը: «Ան մեզ թողած է» կ'ըսէ հեղինակը, վսեմ և թանկագին կտակ մը: Իր գործակիցներուն հետ՝ հիմը դրած է միջազգային համերաշխութեան գործին, որուն վրայ պէտք կառուցանել համաշխարային խաղաղութեան և եղբայրութեան արժանաւոր շէնքը: Իր առաջնորդութեամբ հաստատուած է Միջազգային Ոսկեղէն Կանոնի Կիրակին, որ յիսուն երկիրներու մէջ կը պահուի ներկայիս: Ոսկեղէն Կանոնի կիրակի օրը՝ ամէն երկիրներու քաղաքացիներ ի յարգանա իր յիշատակին և հնազանդելով Ոսկեղէն Կանոնի Մեծ Ուսուցչին հրամանին, հազորդութեան խորհուրդը կատարեցին միջազգային մեծ ընդհանուր սեղանի մը շուրջ, պատերազմի անիրաւութիւնը և յիմարութիւնը խոստովանելով, և դաւանելով մարդկային եղբայրութիւնը՝ Աստուծոյ հայրութիւնը և զօրաւորին յաւիտենական պարտականութիւն օգնելու տկարին:

Մր. Չարլզ Վիբլերի չիշեր թէ Մր. Տօճ 15,000,000 տոլար կտակած է Նպաստամատոյցին ինչ որ վերջերս ծանուցուեցաւ մեր թերթերուն մէջ:

Մաղթենք որ բազմապատկուի իրեն օրինակին հետեւողներու թիւը:





Հայ Պատանիներու Տարեցոյցի խմբագրութիւնը: Աջ կողմէն Պրն. Պետրոս Ֆուկսիկեան, մէջ-տեղը Տարեցոյցի խմբագրապետ Արամիս Խարխիւսեան, իսկ ձախ կողմէ՝ Պրն. Սահակ Մամուկեան:

Մ ԵՆԿԵԿԵՆ

ԳՆՈՇՅՈՒՌԱՆԵՆՅ

ԲԵԺԻՆ



ՕՐ. ՍԷՋԱՌԻՆ  
[ՇՈՒՇԱՆ] ԳՈՉՅԱՆ  
[Գաղղ-գիւղ]



ՊԵՆ. ՍՈՒՐԷՆ ՄԱՆՈՒԿՆԱՆ

[Նկարի գույն]



ՕՐ. ԿՈՍԻ ԶԵՄԼԵՍՆ

[Գատը. 9/10]



ՕՐ. ՄԱՅՍԱ ԳՍԼՅԱՆՆԵՆ

[Բերն]



Զախ կողմը՝ ԿԱՐՕ. ՎԱ. ՀԷ. [Սկիւտար]  
Քովը եւ վարը՝ ԱՇԸՒՅԱՆ Եղբայրներ



Միհրան և Ընկ. հաստա-  
տութեան Տէր և Տնօրէն

Առեւ սեռակ սեղանաւորակ  
գործողութիւն եւ օղակաւայիւ  
վիճակահանութեան տնտեսներու  
Ղալարիոյ մասնաճիւղ

Հիւրիչէք խանքիւ 13,  
14, 15 Թեղեփօն Բերս 726

ՄԻՀՐԱՆ ԷԼՄԱՆԱՆ

Յիշեալ հաստատութեան առաջ

ործակցատ



ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿԻՒՄԻՆՇԵԱՆ



Էջ	Տող	Սխալ	Ուղիղ
10	1	Սրտադրող	սրտադող
10	2	Բերին	բերեն
15	4—5	Տըքնամները	տըքնուները
33	7	Զթեթեւեցայ	չդեղեւեցայ
33	20	Անխոնջ՝	անտեսող
33	33	Ծիւաղ	ծուաղ
34	14	Զղզեր	զղեար
34	25	Վատասերունք	վատասերունք
34	26—27	Շահերով	շահելով
34	30	Գոյրդ	քոյդ
35	15	Սրինք	սրինգ
35	18	Շառաջելով	շառաչելով
38	12	Բերէ	կը բերէ
46	12	Ծարերուած	ծարուրուած
50	8	Պլպլելով	պլլուելով
61	10	Հրաւիրեալ	հրաժարեալ
80	3	Փասթէլ	սօս
91	5	Խօսիլու	խօսելու
162	1	Շրջապատուած	շրջապատած
»	1	Սրբազանէ	սրբազանը
169	32	50.11 <sup>3</sup> / <sub>4</sub>	11 <sup>3</sup> / <sub>4</sub>
169	33	Եէսիսեան	Մեսիսեան
170	14	17 <sup>1</sup> / <sub>4</sub>	27 <sup>1</sup> / <sub>4</sub>
170	18	Ժամ 6,49	2.49 մ.
174	1	Թ.	Ա
175	24	1.58	1.40



